

4758

282  
C-18

Q5Jnnn2u/m  
1855

2017

2011



282

ՏԵՐ ԻՈՒ

G-18

ՅԱՅՈՒԱԿՈՒ

(311)

ԵՐԵՎԱՆ ՀԱՅՈՒԱԿՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԿԱՐԱՐ

Եղիշեալ

ՀԱՅՈՒԱԿՈՒ ՊԱԳՏՑԱՆ

ԽՈՎԱՅՈՒԱԿՈՒ ԱՐԵՎԵԼԵՎԵՏԱՐԱԿԱՆ

ԵՒ

ԱՆՀԱՄՆ ՎԻՄՈՒԹԵԱԾ

Յօրինեալ ՚ի

ՅՈՒԱԿՈՒ ՇԱՀԱՅՈՒ ՎՐԱՅԻՐ

282

G-18

ԶՄՏՏՈՒՆԴԱ

Տ ՏՊԱՐԱՆ ԵՎԲԱՐՑ ՏԵՏԵԱՆ

50 , ՌԵՎԻԼԵ ՂԱՊԱՐԻՆ :

1855

1360 9:12

10.11.18

2012

БИОДАКИЧ - 271373

ДАВИДОВИЧ



2083

40

БИОДАКИЧ - 271373

БИОДАКИЧ - 271373

ДАВИДОВИЧ - 40

М. А. Масников - 08

6621

2012

## ՅԵՌԱՅՈՒՄ

ՏԵՐ ԻՄ ՅԻՍՈՒՍ անուանեալ տեարակս՝ և հարց պատասխան  
Նիի ձեռվ շմառած դիմառնաբար անաբատ առառաջածախօսութիւն  
և առաքելախօսութիւն մը, որոնց բանից ճշմարտաբանութեամբը կը  
հերքուին չուովմայ սուտ առաքելապետ պատկերուն անկրաւացի, հո-  
գեոր և մարմնաւոր իշխանութիւնները, որոնք առանց Քրիստոսական  
և առաքելական բանից իրաւանց և առանց հոգեգումար ձողովոց  
սահմանագրութեանց՝ կ' անուանեն զիրենք ճշմարտահաւատ միայն,   
օրինասպահութեան սահման, Գետրոսի փոխանորդ, ընդհանուր քրիս-  
տոսահաւատ բանեղէն ոչխարաց հովուապետ, քրիստոսաւանդ վէմ՝  
հաւատոյ, երկնից արքայութեան փականաց տէր, փրկարար խորհրդոց  
խորհրդասահման, միշտ անսխալ իբրեւ գերբնական, արքայութեան  
վաճառական, շոգւոյն Արքոյ բղխաման՝ նորասահման, և իշխան մար-  
մնաւոր իշխանութեան, որովք կը առուգուին ընդհանուր քրիստոնէից  
գայթակղութեան տեղին և սահմանը :

0919.21.078

திருவாவட்டார் வெள்ளூர் கல்லூரியின் பொறுப்பு மீது  
நிதி வழக்கான தெரிவித்து கொள்கிறேன். என்பதை அங்கு விடும் போது  
ஏதாவது சம்பந்தமான செய்திகளை அடிக்காட்டி விடுவது உண்மையால் கடிதம்  
நடைபோடு விடுவது அல்ல. அதை அங்கு விடுவது அதை அங்கு விடுவது அல்ல.  
ஏதாவது சம்பந்தமான செய்திகளை அடிக்காட்டி விடுவது உண்மையால் கடிதம்  
நடைபோடு விடுவது அல்ல. அதை அங்கு விடுவது அதை அங்கு விடுவது அல்ல.  
ஏதாவது சம்பந்தமான செய்திகளை அடிக்காட்டி விடுவது உண்மையால் கடிதம்  
நடைபோடு விடுவது அல்ல. அதை அங்கு விடுவது அதை அங்கு விடுவது அல்ல.  
ஏதாவது சம்பந்தமான செய்திகளை அடிக்காட்டி விடுவது உண்மையால் கடிதம்  
நடைபோடு விடுவது அல்ல. அதை அங்கு விடுவது அதை அங்கு விடுவது அல்ல.

# ՏԵՐ ԻՄ ՅԻՍՈՒՍ

Դիմունաբար տնաբառ ապօռուածախօսութիւն ,  
ջկայութեամբ բանից Ս Աւետարանին եւ սրբոց տուաբեցոց ,  
Դ հերքումն սնադարձութեանց  
Հոռվլմէականաց ,  
որը տնուանեն զիրենք գյուի ընդհանուր եկեղեցւոյ ,  
եւ այցն :

Հարցումն առ Տեր Յիսուս ՚ի վերայ հաւափոյ  
Ճշմարդութեան :

**Տ**ԵՐ ԻՄ ՅԻՍՈՒՍ , տեսնելով զիսւրբ Եր-  
բրդութիւնը դաւանող և պաշտող երկոտասան  
քրիստոնեայ ազգաց ՚ի բնուստ անտի իրարու-  
հետ ըրած վիճաբանութիւնները , անհաշտ և  
ոխերիմթշնամութիւնները , երկպառակութիւն-  
ները , իրարու եկեղեցւոյ գէմ հոգեկորոյս բա-  
նից զինաշարժութիւնները , և հեթանոսաց մէջ  
անգամ պախարակելի կերերը , իիստ մեծ զար-  
մանքի մէջ մացի , և միաբս ամեննեին հանդար-  
տութիւն մը չգտաւ , և իրաւունք մաւ չկըցայ  
ինքնիրենս որոշել , թէ այս ՚ի մի անուն Երբոր-  
դութեան կնքեալ քրիստոնեայ ազգաց իրարու-  
հետ անհաշտ թշնամութիւնները ինչէ՞ն կը ծա-  
գին , ի՞նչ կամ ո՞լէ պատճառը . քանզի հեթա-  
նոսք չեն , անօրէնք չեն , բռնաւորք չեն , որոնց  
բռնն արմատնին ՚ի վաղուց հետեւ բնաջնջ ըրաւ-  
քո ճշմարտութեանդ զօրութիւնը :

Քանզի արևմտեան կողմէը հիմա քրիստոնէա-  
հալած Ներոն , Տրայիանոս և Վնդրիանոս չկան ,  
և ոչ յարեւելոյ Դարեհ , Կապուհ , Արշակ

Արտաշէս և Պերող : Յարեմուտս՝ Վաղենտիանոս,  
Մաքսիմիանոս և Դիոկղետիանոս չկան , և ոչ  
յարեելս՝ Արտաշիր , Դենշապուհ և չար Եռու  
սուֆ : Յարեմուտս՝ չար և ուրացող Յուլիանոս,  
Վաղես և Լիկիանոս չկան , և ոչ յարեելս՝ Ար-  
տաշիր , Վասիլ և Յազկերտ : Յարեմուտս՝ Դե-  
կոս Պոպղիսս , Արեգիանոս չկան , և ոչ յարեելս՝  
արեանարբու Էջնկթիմուր , Թահմաղդուլի խան  
և Շահսպաղ . որոնց ամենուն ալ յաղթեց , ա-  
մենն ալ զարմացուց աշխարհալոյս ճշմարիտ սբ  
հաւատքդ , ՚ի ձեռն քրիստոսաշաւիղ ընտրեալ  
առաքելոցդ և աշակերտացդ և նմանեաց նոցին  
անձնադիր քաջ հովուաց և հովուապետաց , ու  
քո խոստացեալ զօրութեամբդ , քո հոգեպար-  
գե սքանչելեօքդ և առաջնորդութեամբդ , ինչ  
պէս որ ուխտեցիր ըսելով . “ Ես ընդ ձեղ եմ  
զամ աւուրս մինչեւ ՚ի կատարած աշխարհի ” :

Թէպէտ ածատեացն բանսարկուն , ինչպէս  
յօձն մտնալով , խաբեց զնախաստեղծո , մոռա-  
և յօձանման մարդիկ , որոնցմով և իսկական  
դրախտիդ սբ Եկեղեցւոյ խաղաղութիւնը վրդու-  
վեց , խռովեց , պառակտումներ և աղանդաւոր-  
ներ հանեց . բայց վերջապէս՝ քո զօրութիւնդ  
ամեն բան խաղացուց , ու Եկեղեցւոյ թշնամի-  
ները յաստուածագումար սուրբ Ջողովքներէն  
ամօթապարտ եղած կորեան ՚ի կորուստն յա-  
ւիտենական :

Քանզի անանկ կը յուսանք որ՝ հիմա ճշմար-  
տադաւան քրիստոնէից մէջ հին աղանդաւոր  
թետասի նման սուտ մարդարէներ չկան , որոնք  
զմարդիկ կը խաբէին իրենց հետեցընելու և զիս-  
քենք փոխանակ Աստուծոյ անոնց առջեք մեծ-  
ցընելու :

Զկայ հիմա լուսաշաւիլ քրիստոնէից մէջ Յա-

նէսի և Յամրէսի հին դիւամոլ աղանդաւորնեւ  
ըւ, և ոչ անոնց նմանիքը, որոնք իրենց կախար-  
դասարաս դիւական արհէստիւ գէմ կը դնէին  
աստուածախօս նախամարդարէին Վովսէսի ածա-  
պատում պատգամացն և հոգեհրաշքարողուեցը:

Զիայ հիմա զԱրդիդ Աստուծոյ ճշմարիտ Ա-  
տուած դաւանող քրիստոնէից մէջ՝ Այեքսանդ-  
րացի Երէց չար Արիստին պէս և ոչ անոր հետեւ-  
ւող Արիստեանք, որոնք Աստուածորդւոյդ Աս-  
տուածային բնութեան՝ մարդկային բնութեան  
հետ միանալը, և քո հաւասար Հօր ըլլալդ չէ-  
ին խոստովաներ, այլ օտար ոմն է կ'ըսէին և ա-  
րարած ասոնք նզովեցան ՚ի Նիկիոյ աստուածա-  
խումք ժողովքէն և հերքեցան ուղղափառու-  
թեանդ եկեղեցիէն:

Զիայ հիմա Առւրբ Կոյսն Աստուածածին ա-  
նարատ դաւանող քրիստոնէից մէջ՝ Կոստանդ-  
նուապօլսեցի Նեստորի պէս պղծաշուրթն աղան-  
դաւոր, և ոչ անոր հետեւող Նեստորականք, ո-  
րոնք Աստուածնտիր Առւրբ Կուսին Վարիամայ  
մօրդ անարատութիւնը չէին խոստովաներ, այլ  
մարդածին է կ'ըսէին և ոչ Աստուածածին, և  
Աստուածորդւոյդ հայհոյելով, սոսկ մարդ կ'ը-  
սէին ասոնք ալ չարացար նզովեցան Հվիսոսի  
հոգեգումար ժողովքէն:

Զիայ հիմա զԱշրորդութիւն և զմի Աստուա-  
ծութիւն դաւանող ուղղափառ քրիստոնէից մէջ՝  
Կոստանդնուապօլսեցի հաւատոյ հայհոյիչ Վակե-  
դօնին պէս և ոչ Վակեդօնեան չարափառ աղան-  
դաւորը, որոնք չէին խոստովաներ զՀոգին Ա.  
համագոյակից Հօր և Որդւոյդ, այլ ստացական  
է կ'ըսէին և արարած ասոնք ալ դատապար-  
տեալ նզովեցան ՚ի Կոստանդնուապօլսոյ աստուա-  
ծագումար սուրբ ժողովքէն:

Զկայ հիմա Առւրք Երբորդութեան երկրակագուշակատիպստոնէից մէջ Եւտիքէսի պէս չարազանդ հերետիկոսագետ մը և ոչ իրեն հետեւող Եւտիքականք, որոնք չեն խոստովաններ Յիսուսի Քրիստոսի Տեառնդ մերոյ շնորհօք արդարանալ ազգի մարդկան և դատաւոր կենդանեաց և մեւ ուելց, և միայն մարդկային բնութիւն կը խոստովաննէին 'իքեղ' որոնք և 'ի սրբազան հայրապետաց չարաչար նզովեցան և հերքեցան յանարատեկեղեցիէդ:

Զկայ հիմա Երբորդութեան ծնունդ ու զզաւդաւանք քրիստոնէից մէջ Վարկիովի չար հերձուածողին պէս և ոչ անոր նմանիքը, որոնք զերբորդութիւն և զմի ճշմարիտ Կատուածութիւն չեն խոստովաններ, այլ հայհոյելով՝ երեք Վոտուածու կ'ըսէին, ներհակ բնաւին ճշմարտութեղ Վոտուածոյ ասոնք ալ նզովեցան և արտաքսեցան յանարատադաւան ազգաց:

Զկայ հիմա զԿատուածութիւնդ մի միայն բաւրութիւն դաւանող քրիստոնէից մէջ՝ Վանիքեցի հայհոյից աղանդաւորաց պէս, որոնք կը բարբանչէին թէ՝ երկու սկիզբն կայ: մինն բարի, և միւսն չար:

Զկան հիմա Պաւլիկեանք, Թանդրակացիք, Արեւորդիք, Ունիթէուք և այլք, զորոնք ճշմարտութեան ճառագայթդ փարատեց, հալածեց և մաքրեց քո սրբութեան յարկէն:

Զկայ հիմա և ոչ մէկ ժամանակ մը Հայոց նախահաւատ ազգին մէջ Ախմօնականութիւնը, այսինքն՝ գնել և վաճառել Վոտուածոյ պարգևները, արծաթով կամ կաշառքով քահանայ ձեռնադրել, կամ աճաւանդ խորհուրդները կատարել, ինչպէս որ Ախմօն կախարդն ըստ, ուզելով որ ընչիւք ստանայ առաքելոցմէ զհոգեոր իշխանու

թիւնը՝ այլ Հայոց հոգեսրականք գնան և առնեն ըստ աստուածային սրատուիրանացդ, ինչպէս որ պատուիրեցիր. “Չը տուք, և ձրի առեք”:

Ակայ հիմա բուն և ճշմարտաշաւիղ քրիստոնէից մէջ՝ պատկերամարտ նենդաւոր ազանդաւորը, որը Աստուածոյ և աստուածայնոց որբոց պատկերաց դէմ մարտնչելով և ներհակելով իւրենց խարդախ և խաւարեալ մտօք կռապաշտութիւն կը համարին քրիստոնէից՝ Աստուածոյ և որբոց պատկերաց պատիւ և պաշտօն նուիրել հրեաբար գատելով, որպէս թէ աստուածային պատգամաց դէմ է, որ ասաց թէ՝ “Ո՞ի արացցես քեզ աստուածս օտարո կամ ձեռագործս, ևն. և մի՛ երկրպագանիցես նոցա”· զոր քաւ լիցի, Տէր իմ Յիսուս · քանդի որպէս յայտնի է որտագէտ Տեառնդ մերոյ, քո հաւասացելքդ միոյ միայնոյ Աստուածութեանդ են երկրպագու, և այնորիկ սուրբք, որք ՚ի սէր ճշմարտուեն հաւատոյդ տարածման զինեցան և Աստուածանման գործքերով վերինդ եկեղեցւոյ, այսինքն՝ Աստուածային փառացդ մէջ յիշատակուելու արժանացան, և աստ վերնոյդ պատկերի փառաց Քրիստոսահիմնդ եկեղեցւոյ մէջ արժանի են պատիւ և յիշատակութիւն գտնել, քո պաշտելի պատկերիդ ներկայացուցանելով, զի ուր գունես, Տէր իմ Յիսուս, անդ և քո ընտրեալ պաշտօննէից պատկերները արժան դու գատեցեր լիւնել. վասն այնորիկ նոյն ընտրելոցդ պատուելի պատկերները կը կախենք յեկեղեցիս ՚ի յորդոք և ՚ի խրախոյս հաւատացելոցդ քո սուրբք կամացդ հետեւիլ, անոնց վարքէն օրինակ առնուլ, նաև ՚ի զարդ փառաց խսկական խորանին Տեառնդ, զորնոր Քեսելիէլին ձեռքով զարդարեցեր ու բովլէից և քերովլէից պատկերներով, որ օրիւ

նակ ուներ նորասքանչ և գերահրաշեկեղեցւոյս  
Հիմա, Տեր իմ Ծիսուս, սուրբ եկեղեցւոյդ  
տանկ թշնամիներ չկան յայտնապէս, և եթէ  
խի գտնուին ան ալ հոգեւոր հովուաց անհօս  
դութենէն և անհսկողութենէն առաջկու գան-  
քանզի ըստ հրաշտքարող առակիդ՝ Երբ մշակք  
անհոգութեան քնոյ մէջ կը ծանրանան, ան ա-  
տեն թշնամիք ժամանակ կը գտնան իրենց ապա-  
կտնութեան չար օրոմն սերմանելու անարատցո-  
րենին մէջը, որ կը նշանակէ չարին՝ միշտ բարւոյ  
հակառակ ըլլալը. Եթէ հոգեւոր հովիւները չի  
հոկեն, անոնց ոչխաբներն ալ չար գաղաններէն  
կը յափշտակուին. Բայց համահաւատ քրիստո-  
նէց մէջի այս օրինաց դէմ անիրաւ վէճերը և  
խոռոչութիւնիւթելու ոգիները՝ հաւատոյ թրշ-  
նամեաց կողմէն չի, քանզի Եթէ այնպէս ըլլար՝  
չի զարմանար և չի վշտանար, զի ըստ տախն.  
Հիթէ թշնամւոյն նախատեալ եր՝ համբերէի  
արդեւք” . Բայց երբ ըստ հաւատոյ հաւասար  
ու ծանօթ ըլլան և թշնամիք գործ գործեն,  
թշնամիք պէս նախատինքներ հասցընեն, անանկ-  
ներուն համբերել դժուար է :

Քանզի մէկ հաթաշինկէ եկեղեցւոյ մէջը՝ այս  
անմվերջանացի նախատինքնարը և արհամարհանկը-  
ները՝ ուսար թշնամիքի գործ չեն, այլ ընտանի  
թշնամիք ոյն և նենցութիւններ են, եղայրա-  
տեաց կոյր նախանձաւորութեան տուրը են, ա-  
նանիներուն կամբը քո ով անունդ փառաւորել  
չի, Տեր իմ Ծիսուս, այլ իրենց ածացեալ փա-  
ռաց կամբը, քո ով հաւատոքդ կենդանացընել չի,  
այլ իրենց բռնաւորուե անունը բարձրացնելէ :  
Եւ ես ըստ իմ տկար մտաց ուշի ուշով քննելով՝  
դուրսէն ուրիշ պատճառ մը չեմ գտնար, այս  
համահաւատ քրիստոնէայ ոգուոց մէջի խոռոչու-

թեանց և առելութեանց վասյօք , որը միշտ հնդ գեկորոյս ալէ կոծութեամբ կը ծփան իրարու ոչէմ և պատճառ կու ան բիւրաւոր ոգւոց արիւնաւ հեղ կորստեանը , այլ մի միայն ձռովմայ ինք նաստհման մեծութեամբ պապերուն մնապարածութեան և հապարտութեան ոգիները . քանզի անոնք միայն կը հապարտանան աթուուվ հաւատարիւ աստէն և Վրտուածութեանդ . . . , անոնք մինակ կը պարծին երկրորդանալ Յիսուսի Քրիստոսի Տեառնդ մերոյ : Քանզի Ճշմարիտ քրիստոնեայ միայն մենք ենք կ'ըսեն , և Ճշմարիտ եւ կեղեցի միայն հռավմէական եկեղեցին է կ'ըսեն , իսկ միւս ազգաց եկեղեցիքը մոլորեալ են , չարափառ են , հերետիկոս են , ևն , ևն :

Ահա ասանկ ինքնաստհման խորհուրդներով կ'ատեն և կը պախարակեն զքրիւտոսականդ Ճըշմարտադաւան եկեղեցիները , որով բոլորքրիստոնէից մէջ անհնարին վիճաբանութեամբ , ատելութեամբ և գայթակղութեամբ կը լեցընեն , ինչպէս որ ամենատես աշացդ իսկ յայտնի է :

Ճայաստանեայց Քրիստոսական և առաքելաւ հիմն Ճշմարտադաւան սուրբ եկեղեցին՝ քո Յազգէոս և Յարթուղիմէոս առաքեաներդ կառուցցին աստուածաւանդ կենաց քարոզութեամբ , որով փարատեցին յաշխարհէոս կռամսութեան հոգեկորոյս խաւարը , և Առւրբ Երբարդութեանդ և միոյ Վրտուածութեանդ հաւատոքը հիմնեցին :

Ահա այս անշարժելի Ճշմարիտ հաւատոց վիմին վրայ կառուցցին քո փրկարար եկեղեցիդ , և եւ կեղեցացուցին ժողովուրդդ յերկրպագութիւնն պաշտելի և տօնելի անուան Առւրբ Երբարդութեանդ . զորոնք հաւատոց լուսովդ աճեցընեւ լով՝ հասուցին մինչեւ քո ընտրեալ և եղական քաղմազարշար նահատակ Քրիդոք Վուսաւորիչն :

Հայաստան աշխարհի : յորմէ մինչև հիմա նոյն ճշմարիտ հաւատոց վիմին վրայ իւր յուսոյ խարիսխը հաստատելով կը գերազանցէ :

Տէր իմ Յիսուս , ասանկ ճշմարտութեան վիմին վրայ հիմնեալ և հաստատեալ և քո շնորհաց ներգործութեամբ միշտ հրաշաղարդեալ եկեղեցին ուղղափառ է թէ ոչ , առաքելական է թէ ոչ , որուն հիմնադիրք քեզմէ կը թեալք էին թէ ոչ , Ճոգւղն շնորհօք հաւասարապէս լցեալ լիւացեալք էին թէ ոչ , 'ի գերագոյն ճարտարապետէդ ճարտարարուեստ հանդիսացեալ էին թէ ոչ : Այն , քաջ դիտենք որ 'ի քէն ուսան , Տէր իմ Յիսուս , և ինչ որ ուսան՝ ուսուցին համատարած աշխարհի , զնոյնը քան զամենայն կանխագոյն լիովին աւանդեցին և հայկազեանս ունոին , դաւանել տալով քո յաշխարհ դալուդ ամեն փրկարար Խորհուրդներդ , որոնք որ կը պարունակուին ածասահման և հոգեդումար սրբազն ժողովոց սահմանադրած հանդանակին մէջ , և անհրաժեշտ պարտաւորութեամբ ամեն օր կ'երգէ և Տաղաւարդ Երբորդութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցին , որպէս յայտնի է ամենագիտիդ Աստուծոյ : Ահա ասոնցմով կը զարդանայ և ասոնցմով կ'աճի և կը զօրանայ և կը համարձակի բարձր 'ի գլուխ պարծիլ ամենալի յուսով առաջի Աստուծութեանդ Հայաստանեայց կաթուղիկէ ուղղափառ սէ եկեղեցին , քո շնորհօքդ կը հանդիսանայ , քո շնորհօքդ կը բոլորի և կը պատկի ՚ի բնուստ անտի , քո ճըշմարտութիւնն է անոր ուղղափառութիւնը , քո անարատ անուամբն է անոր անարատութիւնը , քո քաջ հովաւապետութիւնն է անոր ընդհանրութիւնը . ինչու որ գերեզմայն կը ճանաչէ անմահ քահանայապետութիւն , գերեզմայն կը դաւա-

նէ ճշմարիտ վէմ հաւատոյ , կենաց դրան փառ  
կանք , սիրոյ կենդրոն և հաւատոյ սահման . դա-  
տաւոր անազառութեան , դուռն ողորմութեան ,  
աղբիւր ամ բարութեան , վարդապետ ճշմար-  
տութեան , մարդարէութեանց լուռմն . անոկիզըն  
սկզբնաւորութիւն , անձառելի և անպարագրե-  
լի Երրորդութեանն միութիւն :

Որչափ որ այս այսպէսէ , բարետտեացն բան՝  
սարկուին թելագրութեամբը ոմանց առաքելա-  
յաջորդ հովիւներուն սրտին մէջ հպարտութե-  
և ամբարտաւանութե ոգին տիրելով , աշխար-  
հային փառօք և մեծութեամբ բարձրաստիճան  
դրած են իրենց իշխանութեան գահը , և միւս  
եղբարց առաքելահիմն եկեղեցեաց վրայ , որոնք  
որ քո խաչակրութեանդ տակն են , արատ դր-  
նելով կ'արհամարհեն , իրոխտանլով կը քրիստո-  
սանան , բայց ոչ Վրիստոսանմանդ գործքերով ,  
կը պանծան առաքելանալ , բայց ոչ առաքելա-  
նման վարուք և արդեամբ , կը պարծին պետքո-  
սանալ , բայց ոչ պետքոսանման ջերմ հաւա-  
տով ապաշաւեալ : Չեն կամենար աստուածային  
սիրովդ ճանչեցընել տալ զիրենք աշակերտ Առ-  
տուածորդւոյդ , այլ ատելութեամբ և հպար-  
տութեամբ կը վարեն իրենց իշխանութիւնը , կը  
ցուցընեն զիրենք ջերմ սիրով վառեալ , բայց  
շինեալ են բնաւին կենդանացուցիչ գործքերով .  
ինչու որ՝ օրինաց և պատուիրանաց լուռմն , որ  
սուրբ սէրն է ՚ի սուրբ սրբէ , զան կատարելով  
չեն պարծենար . այլ Պետրոսի՝ իր եղբարց առա-  
քելոց մէջ հասակաւ մեծութիւը ու նախապա-  
տուութիւը , և անոր հաւատոյ լոկ դաւանու-  
թեամբը կը պարծենան . բայց իրենցմէ շատ կա-  
նուխ , այսինքն՝ յառաջքան զիսաչուիլդ՝ Հայոց  
Արքար թագաւորնիս հեռուէն միացն լսելով ,

Հաւատաց՝ իր յատուկ նամակաւը դաւանելով  
զմէր Յիսուսդ. «Կամ Այտուած և կամ որդի  
Արտօնոյ յերկնից իջեալ», ըստ, և անօր ան-  
գրանիկ հաւատայն համար ալ պարգևեցիր անօր  
քո պաշտելի անձեռագործ դաստառակդ., որ  
պէս յայտնի է բոլոր աշխարհի և կանխագիւ-  
տութեան քում, որ կը մնայ միշտ դեռ նոյն հա-  
ւատայն վրայ. վասն որս՝ անուանեցաւ նախա-  
հաւատ աղդ, անփոփոխ պահելով արդարեւ ա-  
մենահարազատ գործքերով։

Ուրեմն հիմա մեր սը հաւատոյ կրտսեր եղ-  
բայր Առովմայ պատուելի պապը՝ վոխանակ մեղ՝  
հաւատոյ անդրանկութեան պատիւ տալու՝ նու-  
խանձու կրիւք մոլեալ ի՞նչպէս մեղ հերետիկոս  
և հերձուածող կ' անուանէ, Քրիստոսընդդէմ  
ատելութեան և նենգութեան սերմունք սեր-  
մանելով, անխիզ և աներկիւղ կրիւք քո որը  
արեամբդ դնեալ աղդին անվայել վատաքանու-  
թիւններ ընել և դժոխոց որդի անուանել. ին-  
չու որ իրենք զիրենիք դժոխոց և արքայութեան  
տէր ընելով. և բոլոր արդարոց և մեղաւորաց  
դատաստանը իրենք տեսնալով՝ ածապէս կ' որո-  
շեն, և ըստ հաճութեան իւրեանց՝ զոմանս դը-  
ժոխոց որդի առնելով, զոմանս՝ արքայութեան,  
և զոմանս՝ իրենցմէ հիմնադրեալ քաւարանը  
ուղարկելով կը քրիստոսանան, անանկ որ՝ ալ  
Յիսուսի Քրիստոսի Տեառնդ մերոյ վերջին գա-  
լստեանդ՝ դատելու բան մը չմնար։

Զարմանք արդարեւ, Տէր իմ Յիսուս, կար-  
ծես թէ քանի մը անդամ Քրիստոս Եկաւյաշ-  
խարհ, որոնց ամեն մէկը մէկ մէկ օրէնք սահ-  
մանած է, և ամեն մէկ օրինաց մէկ մէկ աղդ  
ծառայած։ և հիմա՝ որպէս թէ անոնց ստու-  
գութեան, կամ ստութեան համար՝ անհնարին

վէճեր կը բանան մէջերնին, ոխւրիմ կրիւք կը  
հակառակին իրարու գէմ, հեթանոսաբար մէկո  
զմէկ կ'ատեն ու կը պախարակեն. Եթէ այդպէս  
լինէր, այսինքն՝ քանի մը անդամ՝ Քրիստոս եւ  
կած ըլլար յաշխարհ, յիրաւի մեղադրելի չէր.  
բայց օրհնեալէ Ճշմարտութիւն Միածնիդ գա-  
լուտեան, Տէր իմ Յիսուս, դու միայն ես առա-  
ջին և վերջին, գու Ա և Օ. քո չնորհացդ եմք  
ծնունդ, քո պատուիրանացդ եմք սնունդ, քո  
կենահրաւէր Աւետարանիդ միայն եմք աշակերտ  
ի սկզբանէ և այժմ և յաւխուեանս, զքեզ մի-  
այն հաւատալով անսահմաննելի Նօր Աստուծոյ  
սիրելի Որդի, որ էիրդ յաւաջքան դյաւխուեանս:

Բայց ի՞նչպէտք է ինձ դիմել սրբազան Հարց  
ժողովոց սահմանագրութեանց և անոնց ածա-  
բանական փաստերուն ասպարէզը մտնել, որոնց  
Ճշմարիտ և առաքելական, կենդրոններէն Հայոց  
եկեղեցին շեղած չէ բնաւին. բայց հռովմէա-  
կան եկեղեցին՝ յետ ժամանակաց նոր հոգւոյ  
ծառայելով՝ այլայլեց և փոխեց զանոնք : Քանզի  
հռովմէականք, ըստ իւրիւանց կարծեաց, խիստ  
խմասոնացան, անանկ որ՝ երկրիս ամեն կերպ  
անլուծաննելինիւթերուն միտք հասցուցին, յայ-  
տնեցին ու կարգադրեցին, անանկ որ՝ ալ յայտ-  
նելու ծածուկ բան մը չլ ժողուցին. իմանալի և  
զգալի գոյակաց վրայ ամենադէտ ըլլալէն զինի՝  
սկսան, Տէր իմ Յիսուս, անձառելի Աստուծ-  
ութեանդ էութիւններն ալքննել, և հա-  
ւատոյդ պակասութիւնները լեցընել և կարգի  
դնել, զորոնք որ դուն որպէս թէ տկարացար  
կամ մոռցար ՚ի լուս ածել, և երբ անհասանե-  
լեացդ ալ կատարեալ հասու եղան՝ հանդիսա-  
ցան լինելնաև տէր երկնլոց, տէր փառաց, տէր  
վերին ծայրագոյն իշխանութեանց, տէր կենաց

և մահու և տէր՝ Ճշմարտութեան։ Ա երջապէս, Տէր իմ Յիսուս, ահա աս ոգւով յերկրէս վերացեալ՝ քո ընտրած երանութեան արժանաւոր հաւատով, յուանով և սիրով ժաղովուրդները՝ անոնց քովը հոգւով և մարմնով կորսուած կը համարուին, և ոխերիմ թշնամիի պէս կը վարուին հետերնին։ Ա նոր համար՝ ես ալ չուզեցի ուրիշներուն դիմել և անոնց վարդապետական վկայութիւններով ։ Եւ իրաւացի փաստերով ։ Իմ հաւատոյ Ճշմարտութեան իրաւունքը փնտուել, որովհետեւ աշխարհածագ Ճշմարտութեան Արքի ինձ առաջնորդող ունիմ, ապա ալ ի՞նչ պէտք է անոր լուսով լուսաւորելոց լուսնին և աստեղաց լուսոյն ապասւինիլ։

Այս, Տէր իմ Յիսուս, քո անստուեր լուսոյ Ճշմարտութեան և իմաստութեան աղբւրիդ դիմեցի հարցընել, և ա՛նսպառելի Ճշմարտութեայնէդ առնուլ հարց մանցս պատասխանները, առ ՚ի առաւել յուաս սդրութիւն միամիտ և ֆերմեռանդ հաւատաց ելոց, թէ՛ Հայոց և թէ ուրիշ Քրիստոսական սիրով միացեալ եղարց, որոնք որ ըստ աշխարհ ի յիմար դատուած են աշխարհային իմաստու թեամբ պանծացաղներէն, և դու իսկ դիտես, Տէր իմ Յիսուս, աշխարհիս յիմար ընտրուածներո վդ՝ ամօթ և կորագլուխ ընել անձնապարծ իմն աստունները։ Ծստ որում, դու ես դատաւոր ար դար, դու եղիր մեր մէջը իրաւարար։ Քո հատուցմունքդ սրանէելեօք են, քո վրէմինդրութիւնն դ արդարացի են։ Քո իմաստութիւնդ կշու դրաւ արդարութե։ Արկինքը անդադար քո փառքդ կը պատմեն, և երկրիս հաստատութիւնքը՝ քո ձեռաց ստեղծուածները կը ճառեն։ Օրերը ոնհատահոս աղբիւրներու պէս քո կամացդ պաշտելի բաները կը բղսեն, և

գիշերները անձառելի դիտութիներդ կը յայտնեն . չկայ արարած մը , որ քո սքանչելեաց զարմանալի ձայները չլսէ :

Աւրեմն երկրպագելով առաջի ամենաըռւեստ հնարաւորութեանդ՝ հարցանեմք , Տէր իմ Յիշառւուս , քո սուրբ և Ճշմարիտ հաւատքդ ի՞նչ բանի վրայ հիմնեցիր . ինչու որ՝ որպէս յիշեցի՝ համահաւատ հռովմէական եկեղեցւոյ պապերը՝ սնապարծութեան ոգւով կը խրոխտան միւս մետասան աղքաց վրայ , այլայլութիւն և տարբերութիւն ձգելով անսյլայլելի և անփոփոխելի Ճշմարիտ հաւատոյդ մէջ՝ կը մեծաբանեն թէ՝ միայն հռովմէական եկեղեցին Ճշմարիտ է և Ճըշմարիտ հաւատոյ վիմին վրայ շինուած . ան մինակ կը համարուի փրկութե եկեղեցի . . . իսկ միւս եկեղեցեք 'Ե քէն սահմանեալ հաւատոյ վիմին վրայ հաստատեալ չեն , ուղղափառ չեն , 'Ի հաւատոյ հերձեալ են , ևն : Վհա ասանկով մեծամեծ գայթակղութիներ ձգելով հաւատացելոց մէջ՝ կը յուսահատեցընեն , մանաւանդ իր ժողովոդեան մէջ , որոնցմէ շատերը գայթակղած՝ սամանք արեւմտեան և սմանք արեւելեան կողմերը ցրուած , լնդդէմ Ճշմարտահիմն և առաքելաւ հաստատ կաթուղիկէ եկեղեցեաց ներհակաբար նորանոր աղանդներ կը սահմանեն , որպէս յայտնի է ամենատես աշացդ . չենք սիսալիր եթէ ըստնք 'Ի քրիստոնէական Ճշմարտութենէ՝ նորէն հեթանոսական աղանդներու դարձրնելու պատճառ կ'ըլլան , ինչպէս օր եղած են . . . :

Պատասխանիք դիմանաբար 'Ի ՚Քրիստոսէ և յառաջելոց պարունակեալ 'Ի ճշմարտապատճան Վակարակի և 'Ի գործս առաջելոց :

Այս , կը սիսալին յոց նապէս՝ գիտենք , քանի այնպիսի սուս ու սպառակարծիքները իրները իմ ան-

Ասհութեան և հաւատոյ պատգամներուս դէմ  
են, զորոնք գոչելով՝ ի լուր աշխարհի ասացի.  
“ | այս յաշխարհ եկի, զի ամ որ հաւատոյ յիս  
ի խաւարի մի՛ մնացէ ” : Ծ սի նաև “ Որ հաւա-  
տոյ յիս՝ ոչ պատասխարտեսցի, և որ ոչ հաւա-  
տայ յիս՝ արդէն իսկ գատապարտեալէ, զի ոչ  
հաւատաց յանուն Վիածնիս ոյ ” : Իմ համա-  
պատիւ և համաշնորհ առաքելոցս պատուիրե-  
լով, որ իմ հաւատոյս ճշմարտութիւնը ինչպէս  
տեսան և լսեցին՝ երթան ամեն աշխարհ պատ-  
մեն, ըսի . “ Գնացէք յաշխարհ ամ, աշակերտեա-  
ցէք զամ հեթանոսս և քարոզեցէք զէւետա-  
րանն ամ արարածոյ . որ հաւատայ և մկրտեա-  
ցի՝ կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ գատապարտեա-  
ցի ” : Եւ ըստ պատուիրանացն՝ ամեն աշխարհ  
գացին, անխորաբար քարոզեցին զանուն Վմե-  
նասուրբ Եղբորդութեն և միոյ Վատուածութեն,  
և ուսուցին միայն անոր հաւատալ, անոր ան-  
ուամբը միայն մկրտիլ, և յաւիտենական խոս-  
տացեալ փառացս ալ իրենց արժանի գործքե-  
րով ժառանգողս գրեցի :

Այս փրկառիթ հաւատոյ սահմաններուս մէջ  
ոչ Պետրոս կայ և ոչ Հոռովմ . ուրեմն յայտնի  
ստութեան՝ յայտնապէս հերքումն ճշմարտուեն  
իրաւամբ արժան է և իրաւ . Վիթէ Պետրոսի  
մեծութեամբ իմ հաւատքս կը միծնայ և կը ճը-  
մարտի, հաւատք Վրիստոսի՝ կ' ըսուի ու կը դա-  
ւանուի, եթէ Պետրոսի . առաքեալք հաւատա-  
ցին, եթէ հաւատք եղան . միթէ Պետրոսի  
հաւատով հաւատացեալք, և Բարթուղիմէոսի  
հաւատով հաւատացեալք զանազան են : Իմ  
հաւատոյ զօրութիս, որու որ թափանցեց, ըստ  
իր արժանաւորութեն՝ հաւատով հանդիսացաւ .  
ինչպէս որ կը լեռ հաւատացին և լուսաւորուեն

շան , անդամալու ծները բժշկուեցան , բորստա  
ները սրբուեցան , կազերը քալեցին , դիւահարա  
ները ազատեցան : Որ հաւատայ յիս կեցցէ ,  
ըսի , և ոչ թէ՝ կեցցէ այն , որ հաւատաց Պետրոսին կամ անոր գլխաւորութեանը , և կամ անոր յաջորդ աշխարհամոլ իշխանաց :

Վպա անտենկ Քրիստոսական համահաւատ եկեղեցւոյ մէջի ինքնահաւան հապարտութեան կը բիւք մոլեալները և ինքզինքնին գահագլուխ գատողները , իսկական հովուութենէ անփոյթ հօվիւները , և որոնք որ առաքելոցս համապատուութիւն չեն ընդունիր , և համատարած Երրարդութեան անուան երկըս պագու ժողովրդեանս վրայ նոր ածս կը ձեւանան իրենք զիրենք հաւատոյ տեղ կը փոխանակեն փոխանակ ՚ի կեանս հրաւիրելոյ՝ ՚ի չուովմ կը հրաւիրեն (վարդապետութիւն գայթակղութեն ,) փոխանակ անձայինս կամքը պաշտելտալու իրենց անձնասէր և փոռասէր կամքերնին պաշտել տուլու կը ջանան : Այս , անտենկ ոչխարահալած հովիւները շեղեալ են բնաւին իմ կենատու հաւատոյ շաւզաց նպատակներէն , բանզի Որբքարձր են առաջի մարդկան՝ պիղծ են առաջի Աստուծոյ , ըսի :

Խոկ ամեն քրիստոնէից մէջ յաւերժացեալ հաւատոյս անտարբերութեան վասյօք՝ հարցուր նաև իմ ճշմարտաքարող առաքելոցս , որոնք որ իմ նմանութիւնս յանձինս իւրեանց ցուցուցինս , իմ ազատ հաւատքս քարողեցին և ճշմարտութեան բանիւ վկայեցին : Նոյն վկայութիւն թող հոս յայս իմ անուն կնքեալ գրքոյին մէջն ալ վկայեն , ինչպէս որ աներկիւղ և անաչառ վկայեցին եկեղեցահալած հեթանոս թագաւորաց , մահացունչ բռնտւորաց և անիրաւ դատակորաց :

և այլոց քիւրազանդ ճշմարտուեն գէմ զինողաց :  
Հարց . Ուրեմն նախ դու վկայեա , Յօհաննէս  
աւետարանիւ , ի՞նչ է փրկարործ հաւատքն Քը-  
րիստոսի և ի՞նչովէս քարոզեցիր քրիստոնէից :

Պատասխանի . Ես ալ ի՞նչ որ ուսայ ՚ի Յիսուսէ  
Քրիստոսէ Տեառնէ մերմէ՝ իմ համաշնորհ և  
համապատիւ եղարց հետ ականատես և ական-  
ջալուր ըլլալով , համաձայն բանիւ քարոզեցի և  
դրով ալ աւանդեցի իմ կաթուղիկեաց թուղ-  
թիս մէջ ասելով . “ Ամենայն որ հաւատայ եթէ  
Յիսուս է Քրիստոսն՝ յԱստուծոյ է ծնեալ , և  
ամենայն որ սիրէ զծնողն՝ սիրէ և զծնեալն ՚ի  
նմանէ ” : Կամթէ՝ “ Որ հաւատայ յԱրդին Յատու-  
ծոյ՝ ունի յանձին զիկայութիւն զայս , որ ոչ  
հաւատայ Արդւոյն Յատուծոյ՝ սուտ առնէ զնա  
(այսինքն զԱստուած ) ” : Քանզի չհաւատաց վր-  
կայութեն , զոր վկայեաց Յատուած իր Արդւոյն  
վրայ : Կամթէ՝ “ Եւ այս է օրատուիրան նորա ,  
զի հաւատասցուք յանուն Արդւոյն նորա Յի-  
սուսի Քրիստոսի և սիրեսցուք զմիմեանս որպէս  
և ետ մեղ պատուէր ” : Կամթէ՝ “ Օի ամենայն ,  
որ յԱստուծոյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի Հա-  
ռապէն մեր , և ո՞իցէ որ յաղթիցէ աշխարհի , եթէ  
ոչ որ հաւատայցէ եթէ Յիսուս է Արդին Յա-  
տուծոյ ” :

Առ խօսքերուս մէջը Պետրոս կայ , յաղթուիր  
Պետրոսի գլխաւորութեան վրայ է . առանց Պե-  
տրոսի՝ Քրիստոսի հաւատացեալք թերի՝ կը հա-  
մարուին , ոչ ապաքէն շատ ժամանակ Պետրոսին  
հետ միատեղ էինք , Պետրոս ինքզինքը գլուխ  
առաքելոց քարոզելով հաւատք շտարածեց իր  
վիճակին , այսինքն՝ Հրէից և հեթանոսաց մէջ ,  
այլ ինչովէս մետասանիքն՝ նոյնպէս և Պետրոս  
Քրիստոսի հաւատքը քարոզեց , անոր օրէնքը

Հաւատատեց, անոր պատուիրանքը պատմեց, անոր փրկական խորհուրդները գործքի դրաւ: Ուրեմն այսպէս հաւատացողաց դէմ քարոզողք՝ յայտնապէս ընդդէմ կը գտնուին Քրիստոսական Ճշմարիտ հաւատոցն և Ճշմարիտ հաւատացելոց:

Ա. Դուն ի՞նչ կ'ըսես աս Ճշմարտաբանութե՛, սուրբ առաքեալդ Պօղոս, քրիստոնէից հաւատքը զանազա՞ն է եթէ մի: դու որ ըսիր: « Ուր միանգամ միրտեցայք՝ ՚ի Քրիստոս՝ չիք խտիր ոչ Նրէի և ոչ հեթանոսի, ևն »: Ուր է հապա աս անխարութիւնը: Հիմա մեծ խորութիւն կայ միահաւատ քրիստոնէից մէջ, հռովմէական նոր աստուածացելոց վարդապետութեամբը, անանկ որ՝ յետ Քրիստոսի՝ Նռովմայ պապը չդաւանողը փրկութենէ զուրկ կը քարոզեն:

Պ. Առւտ է, մի հաւատացք, նենգութիւն է, գգուշացէք, այդ վարդապետութիւն չէ, այլ վրդովութիւն է, խաղաղութեան ելք չէ, այլ խռովութե՛ բերք է: Քրիստոնէական հաւատքն անսահմանելին սահմանեց: Վարդը ովլ է որ արեգակին ընթացքը փոխէ, կամ լուսնին կատարելութիւնը առաջ ձգէ, կամ աստեղաց դիբքը և ընթացքը այլայլէ: ՚Նոյն հաւատոյ լուսաւութութե արեգակն է, որ ծագեցաւ ընդ համայն տիեզերու, իբրև աներեւոյթ և անպատճառ բընութեան մարդկան և ծագի մինչև յաւիտեան: ՚Նոյն օրինաց լուսինն է, որ միշտ ոկիզըն կ'առնու և կը նորոգի Ճշմարիտ հաւատոյ արեգակէն և կը լսանայ մարդկան խաւարտուէր կենաց ընթացից վրայ: և նոյն աստեղք են, որոնց ոմանք բեկուեալ կան ՚ի վերայ բարձրութեան մտաց մարդկան, որ մեղաց խաւարին մէջ չիմնան:

Վհա ես ալ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ անփոփոխ հաւատոյ Ճշմարտութեան անազօտ

շուիզը ընթանալով՝ իմ առաքելագործութիւնն  
անխօնջ քարողելով կատարեցի, ինչպէս ակն  
յայտնի է առ Ափեսացիս գրած թուղթիս մէջ  
ըսելով՝ “Ո՞ի է Տեր, մի հաւատք, մի մկրտութ,  
մի Վատուած և Հայր ամենեցուն, որ ՚ի վերաց  
ամենայնի և ընդ ամենեսին և յամենեսին ՚ի  
մեղ” . (դ. 5.) . Գրած եմ նաև՝ “Վասն այնու  
րիկ և մեք գոհանամք զՄատուծոյ անպակաս, զի  
առեալ զլուր բանին Վատուծոյ առ ՚ի մէնջ ըն  
կալարուք ոչ իբրև զբան մարդկան, այլ որպէս  
Ճշմարտիւ զբան Վատուծոյ, որ յաջողեալ է իսկ  
՚ի ձեղ ՚ի հաւատացեալող” . (ա ՅՇաալ. բ. 13.) .

Դնա բաց կարդա Երրայեցւոց գրած թուղթ  
թերուս մէջ ժամ Գլուխէն մինչև քառասուն  
թիւը, տես նախնի ջերմեաանդ հաւատով վա  
ռուած նահայետաց համար ինչքը գրած եմ,  
ուր կ'ըսուի : “Օինչ են հաւատք, եթէ ոչ  
յուսացելոց իրաց հաստատութիւն, և յանդիւ  
մանութիւն, որոց ոչն երեին, զի նովաւ վկայ  
եցան առաջինքն” :

Քանիզ Վեելի հաւատքն իր պատարագը հա  
ճյացուց Վատուծոյ : Ենովքին հաւատքը՝ իրեն  
մահ ճաշակել չուաւ, այլ փոխել տուաւ յեր  
կրէ յերկինս : Երայ հաւատքը զինքն ընտանեօք  
աշխարհակործան ջրհեղեղէն ազատեց : Դովոյ  
հաւատքը զինքն իր աղջիկներով Սոդսմային Վր  
տուածասատ պատիմէն ազատեց : Վմուլ Վա  
ռային հաւատքն իր զառամեալ հասակին որդեա  
ծննդեան զօրութիւն տուաւ : Վովսէսին հաւ  
ատքն Իսրայէլեան ազգը Փարաւոնին գերուեն  
ազատեց, Կարմիր ծովը իրենց ազատութեան  
ճանապարհ դարձուց . քարեն ջուր բղիսեցուց,  
յերկնից մանանայ իջուց, Վատուածատեսութե  
արժանացուց, Վատուծոյ օրինաց և պատգամաց

պատգամաքեր հանդիսացուց , ևն , ևն :

Միթէ անոնց հաւատքն արդի հաւատքէն տարբեր է , մի և նոյն Աստուածը չէ . միթէ հաւատքը քաղաքով կամ ցեղով կը տարբերի . ասոնց բնակած քաղաքներուն կամ ցեղերնւն նայելով , իրենց հաւատքը ընդունեց Աստուած , եթէ իրենց գործքերուն . չէ որ իրենց ածպաշտական գործքերէն իրենց հաւատքը Աստուածոյ հաճոյ եղաւ : Բախաք պոռնիկը անհաւատ կին մի էր , որ կը բնակէր Երիքովի պարսպին տակը . երբ Յեսուսին լրտեսները իր տունը ընդունեց , լսելով անոնց ոյ ամենակարող զօրութիւնը , որ զիրենք մեծամեծ ոքանչելեօք Փարաւոնին գերութենէն և Կարմիր ծովին աղատելով և ուրիշ շատ սքանչելիքներով փրկեր է՝ հաւատաց Աստուածոյ . և նոյն հաւատքը զինքն իւր բոլոր աղգականներովը աղատեց չկորսնցուց անհաւատներուն հետը :

Ոչ ապաքէն յատկապէս Հռովմայեցւոց գըրած թուղթիս մէջն ալ գրած եմ հաւատոյ համար ըսելով . “Օի եթէ խօսովանեսցիս բերանով Տէր զՅիսուս և հաւատացես ’ի սրտի քում” թէ Աստուած յարոյց զնա ’ի մեռելոց կեցցես , զի սրտիւ հաւատայք յարդարութիւն և բերանով խօսովանիք ’ի փրկութիւն : Քանզի ասէ զիրն . ամենայն որ հաւատայցէ ’ի նամի ամաչեսցէ , զի ոչխոտիր է Հռէի և հեթանոսի . քանզի նոյն Տէր է ամենեցուն , բաւական յամենեսին , ոչք կարդան առ նա , զի ամենայն որ կարդասցէ զանուն Տէառն՝ կեցցէ” : (Ժ . 9 :

Ուրեմն զանուն Տէառն կարդացողին առջել գմոխք բացովը կամ արքայութիւնը փակողը՝ ո՞ր չաստուածին անունը կարդալով առ իշխանութիւնները ստացեր է :

Իսկ Վրիստոսով հաւատացելոց համար ասանկ գրած եմ. “Ու գիտէք եթէ տուժար էք Աստուծոյ կենդանւոյ, և հոգի Աստուծոյ բնակել է ՚ի ձեզ, եթէ ոք զտաճարն Աստուծոյ ապականէ՝ ապականեսցէ զնա Աստուած, զի տաճար ոյ սուրբ է, որ էք դուք”։ (ա Կորնլ. գ. 16: ) Աս որ էտ որուսը որո՞նց համար է, չը որ գՅիսուսը Հօր Աստուծոյ Որդի դաւանողաց, անոր մկրտառութիւնը մկրտողաց, անոր մարմնոյ և արեան հաղորդողաց համար է։

Հ. Դուն ի՞նչ կ'ըսես, սուրբ առաքեալրդ Պետրոս, հաւատով յԱստուած յուսալ պէտք է, եթէ ՚ի մարդ, ՚ի ձեռն մարդ ոյ կը փրկուի քրիստոնեան, եթէ ՚ի ձեռն հաւատոյ։

Պ. Ասոր վրայ գրած եմ իմ Կաթուղիկեայց ան թուղթիս աղ ՊԼ. , 20 համարին մէջ ըսելով։ “Որ յառաջնօթ էր նախ քան զիս ՚ի սկզբանէ աշխարհի, և երեւեցաւ ՚ի վախճան ժամանակաց վասն ձեր, որք նովաւ հաւատացիք յԱստուած, որ յարոյց զնա ՚ի մեռելոց և ետ նոցա փառս։ զի հաւատքն ձեր և յոյս իցեն յԱստուած . . . ծնեալ ք վերատին ոչ յապականացուէ սերմանէն, ոյլ յանապականացուէն, կենդանի և մշտնջեն նոկան բանիւն Աստուծոյ . . . իբրև զարդի ծընեալ մանկունս խօսունս և անխարդախ կաթիւնն (այսինքն՝ հաւատոյ) փափագիցէք, զի նովաւ աճիցէք ՚ի փրկութիւն”։

Բ. — Հարցմունք ՚ի վերայ արդարուսական օրինականութեան։

Տէր իմ Յիսուս, քո սուրբ և ձշմարիտ օրէնքը և պատուիրանքդ քեզմէ ու քու կամաց պատգամներէդ կախեալ է, եթէ մարդկային մտացածին իմաստութեամբ պարծենցող բանե-

կէն ոչխարաց ասրն և կաթն կողսպոռդ հոգեառ  
անուանեալ հովիւներէն : Եւ կամ ի՞նչ նշանաւ  
յայտնի կ'ըլլան քու սուրբ օրինացդ օրինա  
պահները և պատուիրանապահները . եթէ քո  
սուրբ կամացդ պէս՝ ով ոք և իցէ , կամ ո՞ր  
աղդէ և իցէ , օրէնքդ և պատուիրանքդ սիրով  
և հաւատով , և երկնային ոք արքայութեանդ  
արժանանալու յուսով կատարէ , այնպիսին Քրիս  
տոսապաշտ կամ կատարեալ հաւատացեալ կ'ըն  
դունին թէ ոչ : Քանզի Հռովմայ պապն կ'ըսէ .  
որոնք որ ես ընդունիմ՝ Քրիստոս ալ ընդու  
նիր , վերջապէս անանկ կը համարձակի մեծաբա  
նել , որպէս թէ անպարագրելիդ իր կամացը մէջ  
պարագրած՝ բոլոր քրիստոսահիմն եկեղեցւոյդ  
տրատ դնելով , մեծամեծ գայթակղութիւններ  
կու տայ հաւատացելոցդ , ինքզինքը ամենուն  
պաշտել տալու համար , օրէնք և պատուիրանքը  
ինձմէ կախեալ է ըսելով :

Պ. Ախալեալէ գիտենք , քանզի ըստ ամենայ  
նի գէմ է իմ աս Ճշմարիտ օրինաց աւանդու  
թեցս , զոր աւանդեցի իմ հարազատ հաւատա  
ցելոցս ըսելով . “Որ ունի զպատուիրանս իմ և  
պահէ զնոսա , նա է որ սիրէ զիս , և որ սիրէն  
զիս՝ սիրեսցի ’ի հօրէ իմմէ , և ես երևեցուցից  
նմա զիս : (Յով . ժդ . 21 : ) ”Կարձեալ ըսի . “Եւ  
թէ ոք սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ և հայրն  
իմ սիրեսցէ զնա և առ նմա եկեսցուք և օթեւ  
ւանս արասցուք . և որ ոչն սիրէ զիս՝ զբանն իմ  
ոչ պահէ . և քանին իմ զոր լսէք՝ ոչ է իմ , այլ  
հօրն , որ առաքեաց զիս : (Ինչն , ժդ . 23 : )  
Կամ թէ “Ես յու հանգեայց , եթէ ոչ ’ի հեզս  
և ’ի խոնարհս և ոյք դողան ’ի բանից իմոց , այս  
ինքն՝ յօրինաց և ’ի պատուիրանացս , քանզի որ  
հաւատայ յիս՝ մի կորիցէ ’ի յաւիտեան ” : Ապա

ասանի յայտնի և աղատ օրինացս անժխտելի աշ  
պացոյցները ի՞նչպէս կը վատահին այլայլել, ի՞նչ  
պէս կը համարձակին ճշմարտութե՛ դէմ օրէնքը  
իւրացընել, օրէնք քարոզել և ջերմեռանդ հա-  
ւատացելոցս միտքը վասն փառասիրութե՛ իւրա-  
եանց պղտորութիւն ձգել, և եղբայրատեցութի՛  
սերմանել մէջերնին, փոխանակ օրինավայել  
գործքերով առաւել հաստատելու զանոնք օրի-  
նացս և պատուիրանացս մէջը, իրենց անուան  
փառաց և վաղանցուկ հեշտութե՛ց համար՝ աւե-  
տարանական ճշմարիտ և աղատ օրէնքէս դուրս  
ինքնահնար վարդապետութեամբ օրէնք կը սահ-  
մանեն, ի՞նչպէս չեն պատկառեր ՚ի ճշմարտուէս,  
ի՞նչպէս չեն զարհուրիր արդար դատաւորուէս  
կը հարցընեմ իրենց քրիստոսական օրէնքը ան-  
սիրութեան վրայ է, եթէ՝ ածոիրութիւնը փա-  
ռասիրութեան վրայ ։ աւանդ դիտութեամբ մե-  
ղանչողացն ։ ան ծառան, որ իր տիրոջ կամքը կը  
կատարէ ըստ ամի՞ որ օրէնքը ան ծառային կը ք-  
նայ վատ խօսիլ կամ օրինապարտ համարել ։ ծա-  
ռան իր տիրոջ կամքը կատարելու պարտաւոր  
է, եթէ՝ իր ծառայակցին։ Զի՞ որ սաստիկ ար-  
դիւած եմ, ընկեր զընկեր չդատել ։ դու ո՞լ ես  
որ դատես զընկեր քո, որովդատաստանաւ դա-  
տես՝ դատելոց ես։

Կը հարցընեմ օրինապահները անծային օրէն-  
քէս կախեալ կը պարտաւորին, եթէ՝ օրէնքն  
պատուիրանապահներէն ։ ոչ ապաքէն օրէնքն ա-  
ռաջնորդող է, և օրինապահքն՝ հետևող։ Օ-  
րէնքն ՚ի ձեռս առաջնորդաց տուան, այս, բայց  
ըսել չէ թէ՝ ածասահման օրէնքը փոխել՝ առաջ-  
նորդաց ձեռքն է, այլ ածասահման օրէնքը և  
պատուիրանքը՝ անօրինին, օրինապահնցին, մեղա-  
պարտին և կամ տգէտին տալ և հասկըցընել

ըսել է : Ըստ որում՝ լուսաւորին լոյս պէտք չէ , և ոչ առողջին՝ բժիշկ , և ոչ ուղեալին՝ առաջնորդ : Վահապէս՝ հովուաց հովիւ պէտք չէ . քանզի հովուութիւ սահմանողին կանոնները հովուաց վրայ անմահ հովուապէտ են , որոնցմենախ իրենք կը հովուին , և ապա կ'ուսուցանեն օրինաց ցանկին դուրս ելլողներուն՝ ըստ հոգւոյ մահացու վիասները :

Աւրաքանչիւր հովիւ երբ իր հաւատոյ վիմութիւր , և առաքելոցս պէս չնաշխարհիկ գործքելով ձոխացեալէ , վէմ կը կոչուի , և ասոր պէս ներուն ալ կը կրկնուի՝ թէ ՚ի վերայ ձեր այդք հաւատոյ վիմին պիտի յարատեի իմ եկեղեցիւներուս շինութիւնը , անոր պէսներուն ալ մի և նոյն ձայնս կը թափանցէ , յանձնել իմօրինացառջարները : Պետրոսիւ և Պօղոսիւ պարծենալինէ օդուտ ունի , երբ գործքերնին անուններուն չյարմարին . յաթոռն Ովուէսի , այս , նըստան , բայց խաքեքայ դպիքն և փարիսեցիք , և ոչ Ովուէսի գործոց նմանութիւ ունեցողները , որոցմէ մէկը երբ զիս փորձելով հարցուց թէ՝ “Վարդապէտ , ո՞ր պատուիրան մեծ է յօրէնս ” , ըսի անօր . “ Ոիրեսցես զջէր Կատուածքո յամ սրտէ քումմէ և յամ յանձնէ քումմէ և յամ մտաց քոց , այս է մեծն և առաջին պատուիրան : Եւ երկրորդ՝ նման սմին . սիրեսցես զընկեր քո երբեւ զանձնքո : Յայս երկու պատուիրանս ամօրէնք և մարդարէք կախեալկան ” : ( Ոտքի . իդ . 35 : ) Աւրեմն մարդիկ յօրինաց կախեալ կան և ոչ օրէնքն ՚ի մարդկային սահուն բնութենէն և ՚ի փոփոխամիտ կրիցն ստիպմանէն :

Աւրեմն ան անձը թող պարծի քրիստոսական օրէնքովս , երբ զինքը օրինացս և պատուիրանացս մարդու բնակարան ըրած է , և երբ իր առաքե-

լական գործքերը զինքը կը բռնադատեն գլուխ  
և օրինաց ուսուցիչ հանդիսացուցանել իր ժո-  
ղովրդեան վրայ , թող յիշէ երեք քանքարաթաւ-  
գոյցին առակը . մըր իր տիրոջ հաւատարիմ գործ-  
ծունեայ գտնուեցաւ , թաղմղը , եթէ՝ գործ ա-  
ծելով շահողը : Որ ունիցի անանջս լսելոյ՝ լուիցէ :

Հ . Դուն ի՞նչ կ' ըսես , սուրբ առաքեալդ  
Յակոբ , քրիստոսական օրէնքը հաւատացելոց  
վրայ կը տարբերի , ոմանց կը ներգործէ և ոմանց  
շիներգործեր , կամ առանց գործոց լոկ հաւա-  
տով պարծենցողին քովը հաւատքը կենդանիէ ,  
եթէ՝ մեռեալ , հաւատք խաղաղութեան մէջ  
կը կենդանանայ , եթէ՝ խռովութեան :

Պ . Այս ապաքէն իմ համաշնորհ առաքեալ եղ-  
բարցս հետ ամեն հարկաւոր եղածները թէ ըստ  
հոգւոյ և թէ ըստ մարմնոյ՝ բանիւ քարոզեցինք ,  
և գրով ալ աւանդեցինք քրիստոսական եկե-  
ղեցւոյն , և յատկապէս ատ բանին համար ալ՝  
ես առաւել հոգ տանելով , յաճախակի ըսած  
եմ , ինչպէս . “ Օ ի՞նչ օգուտ իցէ , եղբարք իմ ,  
եթէ ասիցէ ոք հաւատս ունել և գործս ոչ ու-  
նիցի , միթէ կարիցէն հաւատքն ապրեցուցանել  
զնա . հաւատք առանց գործոց ոչ երեխ , հաւատք  
առանց գործոց մեռեալ են : Երբահամ հայր  
մեր ’ի գործոց արդարացաւ : Բախար պոռնիկ  
’ի գործոցն արդարացաւ ” : ( Յակոբ , բ . 14 . )  
Ուրեմն ինչպէս որ մարմին առանց գործոց մե-  
ռեալ է , այնպէս ալ հաւատք առանց պործոց  
մեռեալ է : Վել իցէ իմաստուն և հանձարեղ  
’ի ձեզ՝ ցուցցէ ’ի բարեոք գնացից իւրոց զգոր-  
ծըս հեղութեամբ իմաստութեն , ապա եթէ նա-  
խանձ և գառնութիւն և հակառակութիւն ու-  
նիցիք ’ի սիրոս ձեր՝ մի՛ պարծիք սուտ առնել  
զՃշմարտութիւն : Վէ է իմաստութիւնս այս իւ-

ջեալ՝ ՚ի վերուստ, այլ երկրաւսր, չնչաւոր և  
դիւական, զի ուր հեռ և նախանձ անդ է ան-  
կարգուի և ամենայն իրք չարք : (| նոյն, գ. 13 :)

Իսկ վերին իմաստութիւնն նախ զի սուրբ է,  
և ապա խաղաղասեր, հեղ, դիւրահաւան, ան-  
խիղճ առանց կեղծաւորութեան, պտուղարդա-  
րութեան, խաղաղութեամբ սերմանի այնոցիկ,  
որ առնեն զխաղաղութիւն : Վացի, ուստի պա-  
տերազմունք, և ուստի կոփւք ՚ի ձեղ, ոչ յայդ-  
պիսի ցանկութեանց ձերոց, որ զօրացեալ են  
յանդամս ձեր : Ոիթէ ոսկի մատանի ունեցողին  
և պայծառ զգեստ հագնողին հաւատքն քծուծ  
և աղոթեղի հագնող աղքատին հաւատքէն մէծ  
է . չէ , քաւ լիցի . թէպէտ աշառու դատողութ  
աստ կը տարբերին և պատիւ կը դանան մեծա-  
տունք . բայց առաջի կամաւ աղքատացելոյն Յի-  
սուսի Քսի Տեառն մերոյ բարձր է և պատուելի :

Գ. - ՞ արյունէք ՚ի վերայ Գլաւորութեան Պետրոսի :

Տէր իմ Յիսուս, յետ համբառնալոյդ յերկինս՝  
երկոտասան ընտրեալ առաքելոց վրայ տեղդ ով-  
փոխանորդ կարգեցիր, որ Վատուածական գործ-  
քերովդ տիրէ և հրամայէ միւսներուն, որ ա-  
նոնք ալ հնազանդին ըստ ամի իրենց Վատուա-  
ծանման փոխանորդին, անոր կամքէն դուրս չել-  
լեն, և երբեմն անոնց պակասութիւնը իր գերա-  
զանց գիտութեան գործքերովը լեցընէ և ինքը  
բոլորովին անբիծ և անարտ վարուք քեղնմա-  
նեալ փայլի աշխարհիս մէջ :

Քանզի Հռովմայ պատուելի պատն կ'ըսէ թէ-  
քիստոս Տէրն մեր միայն Պետրոս սրբազան ա-  
ռաքեալը կարգեց իր տեղը իսկական փոխանորդ  
մետասան առաքելոց վրայ, այնուհետեւ նա եղե-

տէր և իշխան հաւատոյ , այս ինքն՝ սահմանաւ գրիչ , ուսուցիչ , հայր , վարդապետ և քահանացագետ , են . որուն փոխանորդն աղ ես եմ . պէտք է որ միւս մետասան առաքելոց փոխանորդները իրենց հովուած ժողովրդով ինձ հնազանդին և իմ իշխանութեան կապիս տակը միշտ կապեալ մնան , ապա թէ՛ ոչ ապստամբած կ'ըլլան . քու Արտուածային իշխանութեն էդ , Ճշմարիտ և ուղղափառ քրիստոնեայ չեն համարուիր . հռովմէական եկեղեցւոյ դէմ եկեղեցիր , կ'ըսէ , հերձուած , հերետիկոս , մոլորեալև չարափառ են , են , են , են : Քանզի ինչպէս իրենց | ուտովիկոս ։ Ապերթի Արտուածաբանութեան մէջը , երես 468՝ Յունաց ազգը հերձուածող , և այլք՝ հերետիկոս են , ըսելէն ետե՛ կը պարծենայ թէ | ատերանեան ժողովն յամի Տեառն 1215՝ այս պէս սահմանեցին թէ՝ Առովմէական եկեղեցին տնտեսութիւն Արտուածոյ ունի զնախագահութիւնի վերայ ամ այլ կարգեալ իշխանութեան , որ պէս մայր հաւատացելոց և վարդապետ : | Եւ Փլովինտեան ժողովն 1439ին ալ կ'ըսէ . Այհեմ մանեցինք՝ թէ ոք առաքելական գահն և հռովմէական քահանայապետն ունի զգլխաւոր իշխանութիւն յընդհանուր տիեզերս , և նցնքահանայապետը ։ Առովմայ է , յաջորդ երանելոյն Պետրոսի իշխանին առաքելոց և Ճշմարիտ փոխանորդ՝ Քրիստոսի և գլուխ բոլոր եկեղեցւոյ և է ամ քրիստոնէից մայր և վարդապետ , և սմօյ յերանելին Պետրոս աւանդեցաւ ՚ի Տեառնէ մերմէ լիալիր իշխանութիւն արածելոյ , ուղղելու և հովուելու զնդհանուր եկեղեցին . . .

Պ. Ալս սխալին . ըստ որում՝ ես երկոտասան առաքելոց մէջէն իրենց վրայ գլուխ և իշխան չկարգեցի , և մէջերնին ամենեն մեծ և փոքր

չդասեցի , և եկեղեցւոյ հոգը և կառավարութիր մէկին ջանձնեցի , այլ երկոտասանիցս մէկէն յանձնեցի , հաւատոյ քարոզութեան իշխանութիւնս հաւասար բաշխեցի : Քանիզի յետյորութեանս՝ երբ Գալիլեա գնացի , երևեցայ մետասանիցս , հոն ամենուն հաւասարապէս տուի հովուական իշխանութիւնս , ըսելով . “ Գնացէք ոյսուհետեւ աշակերտեցէք զամհէեթանոսս , մըս կրտեցէք զնոսա յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ . ուսուցէք նոցա պահել զամհ որինչ պատուիրեցի ձեղ և ահաւասիկ ես ընդձեղ եմ զամհ աւուրս մինչեւ ’ի կատարած աշխարհի ” :

Նա մանաւանդ՝ այդպիսի գիտաւորութինները ներհակ են իմանային կանխագէտ աւանդութեցս , զորոնք որ տւանդեցի աշակերտացս և նոցին առաքելայաջորդ անխարդախ և ուղղաշաւիլ փոսխանորդացս , ըսելով . “ Ո՞ի՛ կոչէք ձեղ՝ հայր՝ յերկրի , զի ձեր մի է հայր , որ յերկինս է , և մի՛ կոչիցէք ուսուցիչը , զի ուսուցիչն ձեր Վրիստոս է : (Վատիլ . իդ . 9 : ) Քանիզի ես իմընտրել աշակերտացս մէծամոռութեան և ամբարտաւանութեան առիթ չտալու համար՝ մէջերնին մէծ ու փոքր չանուանեցի . մէկը՝ գլուխ , մէկալները՝ անդամ , մէկը՝ հրամայող , մէկալները՝ հրամանակատար կամ պաշտօնեայ , կամ մէկը՝ տէր , միւսները՝ ծառայ չկարգեցի . ըստ որում գլուխ առաքելոցս , գլուխ եկեղեցւոյս , տէր և վարդապետ աշակերտացս՝ ես իսկ եմ . միթէ ես յաշխարհէ ելի՞ , միթէ իմ անսպառելի չնորհքս սպառեցան յաշխարհէս , հիմա Պետրոսի անուան և իրեն անյարմար և ներհակ փոխանորդաց չնորհքը կը ներդործէ . միթէ ես միայն երկի՞նքն եմ ու յերկրի չեմ , միթէ ես ալ Պետրոսի պէս

մահկանացու էի, միթէ իմ իշխանութիւնս պյանձ  
քան տտեն տեսեց աշխարհիս վրայ և հիմա իմա-  
մենազօր աստուածային իշխանութիւն և անսպա-  
ռելի մարդասիրութիւն չեն ներգործեր աշխարհիս :  
Ինչու ուղիղ դատողութեամբ չեն յիշեր իմ ան-  
սուտ պատգամներս, զորս յայտնապէս աւանդե-  
ցի երկոտասան առաքելոցս, որոնց ինչ շնորհը  
և ինչ իմաստութիւն և իշխանութիւն որ բաշ-  
խեցի՝ ամենուն ալ հաւասար բաշխեցի : Քանզի  
երբ “Դուք էք աղ երկրի, դուք էք լոյս աշխար-  
հի”, ըսի՝ ամենուն մէկէն ըսի :

“Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդ՝  
կան, որպէս զի տեսոցեն դգործս ձեր բարիս և  
փառաւորեսցեն զայր ձեր, որ յերկինս է”,  
ըսի, բայց ամենուն մէկէն ըսի :

“Որ ոք լուծցէ մի ինչ՝ ի պատուիրանացս յայս-  
ցանէ՝ ի փոքունց, և ուսուսցէ այնպէս զմարդիկ՝  
փոքր կոչեսցի յարբայութեան երկնից”, ըսի,  
բայց ամենուն մէկէն ըսի :

“Եւ կոչեցի զերկոտասան աշակերտս, ետու-  
նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց հանել  
զնոսա և բժշկել զամենայն զցաւս և զամենայն  
հիւանդութիւնս”, ամենուն մէկէն տուի :

“Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէք և ասա-  
ցէք թէ մերձեալ է արբայութիւնն երկնից,  
զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, դգես-  
հանէք, ձրի առէք և ձրի տուք : մի՛ ստանայք  
ոսկի և մի՛ արծաթ և մի՛ պղինձ ՚ի գօտիս ձեր”,  
ըսի, բայց ամենուն մէկէն ըսի :

“Երթամ և պատրաստեմ ձեզ՝ տեղի, դար-  
ձեալ գտմ և առնում զձեղ առ իս, զի ուր  
եսն իցեմ և դուք անդ իցէք, և ուր երթամն  
գիտիցէք և զջանապարհն գիտիցէք”, ըսի, ա-  
մենուն մէկէն ըսի :

“ Ես եմ որթ և դուք ուռ . որ հաստատեալ է յիս և ես՝ ՚ի նո , նա բերէ պտուղյոյժ . զի աւատնց խմ ոչինչ կարէք առնել ” , ըսի՝ ամենուն մէկէն ըսի :

“ Ու եթէ դուք ընտրեցիք զիս , այլ ես ընտրեցի զձեղ և եղի զձեղ , զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք , և պտուղն ձեր կացցէ , և զոր ինչ խնդրիցէք ՚ի ծօրէ իմմէ յանուն իմ տացէ ձեղ ” , ըսի , բայց ամենուն մէկէն ըսի :

“ Հայր սուրբ , պահեա զնոսա յանուն քո , որով ետուրն ինձ , զի եղիցին մի , և զփառսն , զոր ետուրն ինձ՝ ետու նոցա , զի եղիցին մի , որպէս և մեք մի եմք , ես ՚ի նոսա . և դու յիս , զի եղիցին կատարեալք ՚ի մի ” , ըսի , ամենուն մէկէն ըսի :

“ Եւ յետ յարութեանս միաշաբաթի ( այս ինքն՝ Վիրակի երեկոյին ) , երբ աշակերտները ծրէից վախէն հաւքուած էին տունի մը մէջ դըռները փակած՝ յանկարծ գացի մէջերնին կայնեցայ , ողջոյն տուի ու ցուցուցի ձեռս և կոզս ու ըսի . “ Որպէս առաքեաց զիս Հայր , և ես առաքեմ զձեղ ” : Մա ըսելով՝ փշեցի անոնց վրայ ու ըսի . “ Մուէք Հոգի սուրբ , եթէ ումեք թուզուցուք զմեզս՝ թողեալ լիցի նոցա , եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի ” , ըսի՝ ամենուն մէկէն ըսի :

“ Աբ զձեղ ընդունի՝ զիս ընդունի , և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ ” , ըսի ամենուն մէկէն ըսի :

Վերջապէս՝ “ Եւ ես ուխտեմ ձեղ , որպէս և հայրն իմ ուխտեաց ինձ զարքայութիւն , զի ուտիցէք և ըմպիցէք ՚ի սեղանն ծօր իմոյ յարքայսւթեան իմում . և դուք նստջիք ընդ իս յերկոտասան աթոռս դատել զերկոտասան ազդն :

իսրայէլի", ըսի, բայց ամենուն մէկէն ըսի։  
Աւրեմն այսքան բացայսյոտ ճշմարտասիրու-  
թեան դէմ հակառակողը՝ թողըսէ թէ եռ Քը-  
րիստոսի աշակէրտ, կամ Քրիստոսի առաքելոց  
փոխանորդաց գոխանորդն եմ, որոնք որ իրենց  
փառասիրութեանց համար գրրիստոնեցո պետ-  
րոսեանքի կը դարձընեն։ Փոխանակ սիլոյ՝ առե-  
լու թիւն կը սերմանեն։ Եսու թեամբ կը պարծին,  
առանց ինձի կը մեծանան, սահմանով առաջաւ-  
կայ կը հանդիսանան, գինուց և զինուորաց զօ-  
րութեամբ կը պահպանուին, այն կիրքը որ եռ  
խօ աշակէրտաց սիրուէն արմատախիւլ ըրի՝ առ-  
ննք զան աճեցընելու կը ջանան։

Դանզի այդ փառասիր կրիւք գլուխորութե-  
իշխանութիւնը խնդրելը՝ իմ երկուասան առա-  
քելոցս մէջու ալ մտաւ։ Երբ իրարու հետ կը  
վիճին թէ ալ մէջերնին մեծ կամ գլխաւոր  
պիտի համարուի։ Եթէ արդարեւ ստուդիւ Պետ-  
րոսին՝ առաքելոց վրայ գլխաւորութիւնը հար-  
կաւոր ըլլար, պէտք էր որ այն միջոցին յարոնի-  
ընէի իր ընկերներուն առջել, թէ Պետրոս ա-  
ռաքեալլ պիտի ըլլայ ձեր գլուխ կամ իշխանալեա-  
տը, բայց ես երբ անոնց այս փառասիրութեան  
վեճերնին հասկըցայ, ամենելին հաճութիւն մը  
ցուցուցի, որայնեաւ բոլորավին իմ կոմքէ ա-  
դուրս բան էր։ Եթէ ստոյդ ըլլար, պէտք էր որ  
մարդարէներուն մէկին ալ նախապէս գուշակել-  
տայի անոր այդ աստիճան երկնի և երկրի տիրող  
պետութեան վրայօք, ինչպէս որ մատնիչ Յու-  
գային վրայօք Դաւիթին հոգի մարդարէուն  
տուի, որով մարդարէացաւ։

Բայց ես յանդիմանելով զաննք՝ ըսի։ " Թա-  
գաւորք, ազգոց վրայ իշխելով, իրենց մարմնաւոր  
իշխանութեան զօրութեամբը բարերար կը կո-

շունի իրենց հաղատակաց ։ բայց դուք անանկ պիտի չըլաք, հապա ձեր մէջը մէծ համարուսովը՝ ձեզի իրքեւ ծառայ կամ կրտսեր պիտի ըլլայ, և առաջնորդն՝ սովորաւորի պէս” ։

Ասոր համար փոքրիկ մանուկ մի առի գիրկա աշնոց առջեւ ու ըսի, “Ով որ այս փոքրիկ միտմիտ մանկան պէս խոնարհութիւն ցուցունէ՝ ան զիս ընդունած կ'ըլլայ և արքայութեանս արժանի, և ով որ զիս ընդունի՝ զիս առաքողը ընդունած կ'ըլլայ” ։

Ով յամառ ընութեանս մարդկան, մինչեւ Հրբ պիտի չժամանցեն այս իմ ճշմարտութեան պատգամներս իրենց կամապաշտութեան սրտին մէջը ։ ու ովմայ պատերը պէտրոսանալ կը ցանկան և Քրիստոսական իշխանութեամբս մինակ գլուխ ըլլալ և իշխել կ'ուզեն՝ գիտեմ, բայց շատ կը սխալին ։ Ուղղ մերկանան իմ աշխարհաւորած ազատ հաւատոյս ներհակ կիրքերը ։ հաւատոք իրենց խելաց հալոցին մէջ հռովման յացընելնուն տեղը, թող մեծասրտութեան և ամբուրտաւանեւթեան ժանդերով ժանդուած ու ովման՝ ճշմարտասիրութեան ու Քրիստոսաքարող խոնարհութեան հալոցին մէջ գնեն, զոեն ու մաքրեն, իմ երկնի և երկրի հաճելի կամացս յարմարցընեն իրենց հաւատօքը, թող պդասաւանան իրենց շափազանց հեշտութիւններէն, զեղսութիւններէն, արքեցութիւններէն, պՃնասսիրութիւններէն, անգութ և անիրաւելքայրատեցութիւններէն և այլ զանազան մաս թիւններէն, թերահաւատութիւններէն և որ ամենէն մեծ մեղքն է՝ յեկեղեցւոյ խտրութիւններէն ։ քանզի յանուն Վմենասուրբ Երբորդութեան կառուցեալ տաճարաց արաւադայով, մինչեւ անգամ իրքի մեջեան համարելով” ։

մեղք կը համարին ներս մտնալ, և կամ մտնան  
ալ նէ հեթանոսաբար և բնաւին առանց քրիս-  
տոնէավայել ջերմեռանդութեան մը : Ահա քեզ  
պտուղ հռովմէականաց Աստուածաբանից, որ  
է իսկութիւն հին բազմաստուածութեանց և  
չաստուածապաշտութեանց ահա քեզի լուսա-  
ւորութիւն ՚ի հռովմէածաւալ լուսաւորութե-  
նէ փայլեալ, որոյ շնորհաց թափանցութիւնք  
այնքան ներգործեր են շրջակայ քրիստոնեայ աղ-  
գաց մէջը, որոնք փոխանակ Քրիստոսարուեստ  
սիրով զաշխարհս խաղաղցընելու՝ աղդ աղդի  
վրայ հեթանոսական ատելութիւն յարուցանե-  
լով, իրարու գէմ արիւնհեղութեան յաղթա-  
նակներով կը պարծին անանկ որ՝ վերջին գա-  
լստեանս աշխարհասարս արկածներուն նշանները  
նախ իրենցմէ ծագիլ յայտնի կը դուշտիւն : Ահա  
իրենց վարդապետութեան պտուղները ասոնք  
են :

Աւաղ կորստական վարդապետութեան նոցին,  
հաւատոյ և աղդաց գլուխ ըլլալ կը ցանկան,  
բայց հաւատոյ անդամները մէջերնին մեռցընել  
մեղք չեն համարիր . իրենք հաւատոյ ծառայե-  
լու տեղ՝ հաւատքը իրենց կամացը կը ծառայե-  
ցընեն : Պետրոսանալ կը ցանկան, բայց Պետ-  
րոսի գործքերը իրենց անծանօթ են . քանզի  
Պետրոս ՚ի հաւատս կը դարձնէր, անոնք՝ ան-  
հաւատ աղանդներու դառնալու պատճառ կու-  
տան : Պետրոս ՚ի կեանս կ'որսար, անոնք՝ ՚ի կո-  
րուստ : Պետրոս զեղքայրսիրութիւնը կը ծաղկե-  
ցընէր, անոնք զեղքայրատեցութիւնը կը բոր-  
քոքեն : Պետրոս չըէից և հեթանոսաց մէջ ան-  
երկիւղ կը քարոզէր, բայց պապերը իրենց աշ-  
խարհասէր և անխաղաղասէր մեծամիտ վարուց  
համար՝ իր հաւատացեալներէն երկիւղունելով՝

զինուորաց պաշտպանութեամբ կը պահպանուին Պետրոս բանիւ կը բժշկեր յիս հաւատացողները, իսկ պապերը գանիւ կը տանջեն իրենց կամա պաշտ կամաց անհնաղանդ եղողները, իրենց նուրասահման օրինապետութեամբը։ Պետրոս թէ ըստ հոգւոյ և թէ ըստ մարմնոյ կաղերուն, կոյրերուն, անդամալոյծներուն և մեռեալներուն անգամ բժշկութիւն և կենդանութիւն կուտար, բայց պապերը ընդ ներհակն՝ կը ջանան որ իմ օրինապահութեանս մէջ առողջները և հաւատոյ լուսաւորութեան մէջ գործով կենդանիները կաղացընեն, ու մահացընեն։

Եղա եթէ արդարեւ Պետրոսիւ պարծենալով, ինձի և ժողովրդեանս հաճոյանալ կ'ուզեն, պէտք է որ Պետրոսի նման Աստուծոյ և մարդոյ արժանաւոր և հաճելի գործեր գործեն, հաւատացեալքս իրենց ճշմարիտ հաւատոյ վրայ հաստատ պահեն, զթերահաւատս և զանհաւատս ՚ի հաւատս գարձընեն, աներկիւղ և անաչառ քարոզութեամբ հոգեկորոյս ճանապարհներ բան, չերկնչելով անմահացուցիչ մահուանէ, յազատութիւն հանող կապերէն և շլթաներէն, ՚ի լուսաւորութիւն հանող բանտերէն և առ Աստուծած ձգող հալածմունքներէն, և պարծենալով մի միայն ճշմարտութեանս անունովը, և իմ պատուիրած խաչս առած գան ետեէս. ինչ պէս որ ըրին իմ ընտրեալ առաքեալքս և համապատիւ առաքելայաջորդ հայրապետքս. ապա թէ ոչ անանկներուն համար է որ կ'ըսէ. “Օ ի՞ կոչէք զիս տէ՛ր տէ՛ր, և զոր առեմս ոչ առնէք”։

Ուրեմն անոնք որ կը կամին իմ աշակերտացս նմանելով ինձի հաճոյանալ թող աշխարհային և ծուռ վարդապետութեամբ մէծութիւն և փառք ստանալու ետեէ չկընան, թող զիս և իմ

աշակերտներէս օրինակ առնեն . ապա թէ յաւ  
մառեալ մնան այնպիսի ամբարտաւան խորհուրդ  
ունեցողները՝ գուցէ վերին անկեալ դասուց  
նմանին . քանզի անոնք ալ աճային Ճշմարտուեն  
դէմ մեծութեան ու փառաց ցանկանալով՝ ան  
կան ՚ի կորուսոն յաւիտենական . Ո՞չ ապաքէն  
ըսի . “ Որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրաս-  
ցի , և որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհես-  
ցի ” : Վպա վայ այնպիսեացըն , որ զճանապարհ  
Ճշմարտութեանս գիտելով կը մեզանչեն . որոնց  
համար ալ ըսի . “ Օրառայ , որ գիտեցէ զկամա  
Տեառն իւրոյ և չառնիցէ արբցէ գան բաղաւմ ” :

Հ . “ Դուն ի՞նչ կ'ըսես այս Ճշմարտութեան Ա .  
առաքեալդ Պետրոս , դու որ թշփատութեան ,  
այսինքն՝ Նրէից աղքէին , յատկապէս առաքեալ-  
էիր :

Պ . Համաձայն և համաշունչ եմ և ես բանից  
Ճշմարտութեան սուրբ Աւետարանի Ծեառն մեւ  
րոյ Յիսուսի Քրիստոսի , որպէս մետասան հա-  
մաշնորհ առաքեալ Եղագարք , քանզի հովուա-  
պետ քաջե տէր կենաց և մահու՝ մի միայն ըղ-  
Տէրն մեր Յիսուս Քրիստոս քարողեցի Նրէառ-  
տան վիճակին մէջը եղած ժողովրդեան , զորոնք  
որ ՚ի հրէութենէ գարձուցի ՚ի քրիստոնէութիւն .  
և անսնց մեջի երէցներուն միայն , այսինքն՝ հու-  
գեոր հովիւներուն կը յորդորէի , որ ամեն մէկ  
իրենց յանձնուած Աստուծոյ հօտը աղէկ արածեն ,  
որ հաստատ կենան իրենց Ճշմարիտ հաւատքնուուն  
վրայ , ինչպէս որ գրած եմ առ Ալլիլ . առ Թաուզ-  
թիս մէջը , ե . Ա . ըսելով . “ Այսուհետեւ աղա-  
շեմ իրրե Երիցակից ինձ և Քրիստոսի չարչա-  
բանացն վկայ և նորին հանգերձեալ փառացն հա-  
զորդ , արածեցէք որ ՚ի ձեզ հօտդէ Աստուծոյ ,  
Ջերակացու լինելմի իրրե ակամայ , այլ կամաւ

ըստ Աստուծոյ, մի զօշաբաղութեամբ՝ այլ յօւժարութեամբ, մի իրբեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին, զի յերեխլ հօտապետին՝ ընդունիլիք գանթառամ փառացն ուսակ” ։

Այս երիցունիք ըստո՞ւ առաքեալ ք չէին, այլ նոյն վիճակին մեջի նորընծայ երիցանց համար էր իմ այս խրախուսական պատուելոներս, և ու իմ համաշնորհ և համահայր եղբարց առաքելոց, քանզի մենք առաքեալքս ամենքս ալ համապատիւ և համիշխան եղբայր գրեցանիք և կնքեցանիք ՚ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, համաշնորհ գտնուեցանիք նաև ’ի Հոգւոյն Աստուծոյ ։ Ինչպէս որ առ առ կաթուղիկեայց ք. թուղթիս մէջը, գ. 45. գրած եմ երեքտասան բազմարդիւն Պօղոս առաքեալ եղբօրս համար ըսելով. “Օոր օրինակ և սիրելի եղբայրն մեր Պօղոս ըւտ շնորհելոյ իմաստութեան նմա յԱստուծոյ գրեաց ձեզ, և այլն, քանզի որոնց որ ես կը գրէի Պօղոս առաքեալն ալ իւր ազատ և գերիմաստ գրչուն կը գրէր նոյնպէս և միւս առաքեալ եղբարք. քանզի անկախ էինք իրարմէ դՔրիստոսի Ճշմարիտ հաւատքը քարողելու, մեր առաքելուկան իշխանութեան կախումը՝ մի միայն ’ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ էր, ինչպէս որ ինքը աւանագեց և սահման գրաւ մեր վրայ ըսելով. “Ո՞վ կոչէր ձեզ հայր կամ վարդապետ կտմ ուսուցիչ, զի մի է ձեր հայր, մի է վարդապետն և մի ուսուցիչն ձեր Յիսուս :

Ուրեմն անոնիք որ կանխապէս դիտեն ոյս անմըստելի Ճշմարտութիւնները և գարձեալվասն աշխարհային տեսակ տեսակ մնութի փառաց և մեծութեանց վայելութիւնները ինձմով պարծենալով, ձեռք բերել կը ջանան՝ յԱստուծած կը խաբեն : Իայց մարդ ովէլ է որ դյաստուածը խաբէ :

այսպիսի գիտութեամբ յամառեալ և կոմաւ ըլք ձշմարտութիւնն ու բացելոց համար ալ ք. Թուղթ թիս մէջ, գ. 51. գրած եմ ըսելով. « Օի լաւ էր նոցա թէ բնաւ չէր իսկ ծանուցեալ զարդարութեանն ճանապարհ, քանզի ծանեան և յետս կացին 'ի սուրբ պատուիրանէն որ նոցա աւանդեցաւ » : Հարցուցեք մահաւանդ և ձշմարտապատում Պօղոս առաքեալին, որ ոչ ինքը կը պիտի և ոչ ուրիշառաքեալները իմ իրենց վրայ գլուխ կամ իշխան կարդուիլս 'ի Յիսուսէ Քը բիստոսէ . քանզի նա առաւել ևս յոյտնապէս կը քարոզէ եկեղեցւոյ գլխաւորութեան համար թէ չի ծայրագոյն գլուխ եկեղեցւոյ բաց 'ի Յիսուսէ Քրիստոսէ :

« Ճշմարտաբանէ, սուրբ առաքեալդ Պօղոս, քո աշխարհաքարտ վարդապետութեանցդ մէջ գլուխ ընդհանուր եկեղեցւոյ կամ իշխան առաքելոց զո՞լ քարոզեցիր »

Պ. Պլուխ ընդհանուր եկեղեցւոյ . չիք ոք գլուխ ընդհանուր եկեղեցւոյ՝ բաց 'ի Յիսուսէ Քրիստոսէ, և չիք ոք իշխան առաքելոց և առաքելոյածօրդ հովուաց՝ բաց 'ինմանէ : Ոչտպաքէն բազմիցս գրած եմ այդ բանին համար նախ առ Եփիսացիս, առ. 21, 22. ըսելով. « Օի յարոց զնա Աստուած 'ի մեռելոց և նսաոյց ընդաշմէ իւրմէ յերկնաւորս 'ի վերայ ամենայն իշխանութեան պետութեան և զօրութեան և տէրութեան և ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ՝ այլ և 'ի հանդերձելումն, և զամենայն հնագմնդ արար 'իներբոյ սահից նորա, և զնա եղ գլուխ 'ի վերայ ամենայն իրեք եկեղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն, որ զամենայն յամենայնի լու » :

Այլ ճշմարտեալք սիրով աճեսցուք 'ի նա զու-

մենայն , որ է գլուխ վրիստոս ” . ( Ենոյն , դ : 15 ) :

“ Օի այր է գլուխ կնոջ , որպէս և վրիստոս գլուխ է եկեղեցւոյ , և ինքն է փրկիչ մարմնոյ ” . ( Ենոյն ) :

“ Եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ , զի է սկիզբն անդրանիկն ՚ի մեռելոց , զի եղեցի ինքն յամենայնի յառաջացեալ ” . ( Կրոն . ա . 18 ) .

“ Օի մի այսուհետեւ իցեմք տղայք խոռվեալք և տատանեալք յամենայն հօղմոց վարդապետութեան խաբէութեամբ մարդկան , խորաման կութեամբ ՚ի խաբէութիւն մոլորութեան , այլ ճշմարտեալք սիրովաճեսցուք ՚ի նա ամենայնիւ , որ է գլուխ վրիստոս ” :

Կամ թէ “ Երուքը ընդ միմեանս քաղցունք , գթածք , շնորհել միմեանց , որպէս և Վատուած Վրիստոսիւ շնորհեաց մեզ ” :

Հ . Վահ Պուկաս աւետարանիւ , դուն որ Յիսուսի աշակերտներէն էիր և անոնց ժամանակակից , և ականատես Յիսուսի Տեառն մերոյ Վատուածահրաշ գործքերուն և առաքելոց գործոց և վարուց քաջ տեղեակ , դուն ալ Յիսուսին կարգեալ առաքելոց իշխանապետ Պետրոսին պաշտօնատար էիր , և անոր հրամանաւը Առւրբ Վետարանը և Գործք առաքելոցը գրեցիր , եթէ այլոց խնդրանօք , անոր հրամանաւը և անօրէնութեամբը Պօղոս առաքեալին գործակից եղար եթէ աղստ կամօքդ :

Պ. Յիսուսի առաքելոց վրայով աղ հարցումները վայելելու հարցմունքներ են , որ կը հարցը նես , առաքելոց գլուխ և իշխանապետ միայն Տէրն մեր Յիսուս Վրիստոսն էր , ալ ուրիշ իշխանապետի կարօտ չէին , որուն աշակերտներն էին , որ մահկանացուաց պէս կառավարուելու

կարօտանացին , չէ որ ամենազօր սրտագետն Յիշ  
 սուս էր , և այն ինքն է զիրենք աշակերտող և  
 վարդապետող , չէ որ մահիանացու թիւնը բնութիւնը  
 անմահացընելու հեղինակութիւնը ըրաւ անոնց ,  
 չէ որ իւր անփոփոխ իշխանապետութիւնը միշտ  
 վրանին և հետերին ըլլալ խոստացաւ , ըսելով .  
 “ Ես ընդ ձեղեմ զամենայն աւուրս մինչեւ ’ի կա-  
 տարած աշխարհի ” : Ոիթէ այս իշխանութիւնը  
 սուտ է , որ Պետրոսը կամ Պօղոսը առաքելոց վրայ  
 իշխան իշխանապետ ըլլային : Աւետարանը չէք  
 կարդար , ուր յիշեց Յիսուս այդ իշխանութիւնը ,  
 որ մենք չակցինք , որ գրէինք : Աչ , ոչ , տուա-  
 քեալքս համապաշտօն էինք , առաքելոց մէջը  
 իմ և քո չկար , որ դատաւորի կարօտ ըլլայինք ,  
 մէջերնիս անիրաւութիւն չկար , որ իրաւարարի  
 կարօտանայինք , մէջերնիս յիմար կամ ապաշնորհ  
 չկար , որ իմաստունի և շնորհալի կարօտանա-  
 յինք , քանզի ամենքս ալ համաշնորհ , համա-  
 պատիւ և համիշխան էինք , իրարու վարդապետ-  
 ութեան կամ առաջնորդ ութեան կարօտ չէինք ,  
 իրարու վրայ ամենենին ատելութեան կիրք չու-  
 նէինք , քանզի աշակերտ սիրոյ էինք , իրարմէ-  
 փառասիրութիւն յափշտակելու ակնկալութիւն  
 չունէինք , քանզի ամենքս ալ անմահ փառաց  
 կաշակերտէինք , մեր համախմբութեան անունը  
 եղբարք էր , Ո՞ւր հետը միացեալ միահաւատ  
 բազմութեան անունը՝ եկեղեցի էր : Եւ մեզ  
 համահայր և համամայր ընողծնող՝ ջուր և հո-  
 գին էր , և մեզի իրեն հետ միացնող՝ իր կեն-  
 սաբաշխ մարմինը և արիւնն էր , կենաց առաջ-  
 նորդն՝ իսրայէլեան լուսեղէն ամպին իսկութիւ-  
 նը , հաւատոց ճշմարտութիւնն էր : Ո՞ւր հա-  
 րսութեան ակնկալութիւնը կենցաղոյս տրօք  
 բաւական չէր , մեր փառասիրութեան կիրքերը՝

ան ժամանակաւոր կենաց պահուած էր, մեր իրարու մեծութիւն ցուցունելն՝ իրարու խո նարհութիւն լնելն էր, մեր ստացուածքը և ինչ քը տէր չունէր, մեր ավ ըլլալը յայտնողը արա րածոց թագաւորին անախտ սէրն էր, մեր պար ծանաց պարծանքը՝ Կատուածընդդէմ հոգեւ մարտ թշնամւոյն դէմ պատերազմիլն էր, մեր փառքը և պսակը՝ ըստ օրինակի մից գլուցն մեւ ըս Յիսուսի Քրիստոսի խաչակիր լինելն էր, մեր աստի կենաց քաղցրութիւնն ՚ի սէր հանդերա ձեալ կենաց տիրող նահատակութեամբ ներ կոյտնալն էր, մեր աստի կենաց ամենաքաղցր հեշտութիւնն՝ զմեղաւորս ընդ Կատուծոյ հաշտեցընելն էր, մեր աստէն ուրախութեան հար անիքը, զմարդիկ աստէն յերկինս հրաւիրելու հանձարն էր, մեր կաշառքն առ անաջառ դատաւորն՝ ահա ես և մանկունքն իմ ըսելն էր, մեր աստէն անդահասիրութիւնն՝ անդին ընդ Յիսուսի յաթոռ բազմիլն էր, մեր աստէն փառաւորութիւնն՝ ՚ի սէր անանց փառաց անար գութիւնն էր։ Կնոնց ամենուն առաջնորդն և հեղինակն և ձեռնտուն միմիայն Յիսուս Քրիստոսն էր։

Կպա քաջ ՚ի միտ առ զբան Առւրե Քրոց, և քաջ վերահասու եղիր Յիսուսի պաշտելի կա մացը, թէ իր պատուիրանքներուն մէջ և թէ իրեն առաքելոց և առաքելայածորդ փոխանոր դաց քարոզութեանց մէջ։ ուր կը տեսնաս որ իւր ձեռնասուն և շնորհասուն առաքեալները մէկը մէկալէն աւելի կամ պակաս շնորհաց տէր չէին, քանզի ամենուն վարդապետն՝ իմաստութիւնն Նօր Յիսուսն էր, զիրենք լցուցանօղն՝ ամենասուրբ Նոդին Կատուածն էր։ Պետրոսն ինչ էր նէ՛ նոյն էր և թաղէոս և քարթուղիւ

մէսս և Պօղոսն և այլք : Մէջերնին ինքնագլուխ  
չկար , պետ , վեհ և իշխան անուն կրող չկար ,  
ինչպէս որ կը գատեն յուղղութենէ գիտութ  
խոտորեալները : Քանզի և Պետրոսն ընդ իշխա-  
նութեամբ առաքելոց եղբայրութեան գումա-  
րին էր , ընդ երիցանց կամեցողութեան էր , ա-  
նոնց լրութեան մէկ անդամն ալ ինքն էր , ինչ-  
պէս որ յայտնի ըրած եմ առաքելոց Դործոց  
մէջը , ԳԼ . զ . 2 . ասելով . “ Կոչեցին երկո-  
տասանքն զբազմութիւն աշակերտացն , ( որոնց  
մէկն ալ ես եմ ) , և ասեն , ոչ է հաճոյ  
մեղ թողուլ զբանն Աստուծոյ և պաշոել զե-  
ղանն , ընտրեցէք նղարք վկայեալս ’ի ձէնջ արտ  
եօթն , զորս կացուսցուք ’ի վերայ պիտոյիցս այ-  
սոցիկ ... և հաճոյ թուեցաւ բանն առաջի բազ-  
մութեան և ընտրեցին զլյուեփաննոս և զՓիլիպ-  
ոսս և զՊրօքորոն և զՆիկանովլուս և զՏիմովնա  
և զՊարմենայ և զՆիկողայոս , զորս կացուցին ա-  
ռաջի առաքելոց և աղօթս արարեալ եղին ’ի վե-  
րայ նոցա զձեռու ” :

Ուր է ուրեմն առաքելոց իշխան կամ իշխանա-  
պետ անունը , որ յատկացեալ չէ և չեմ յի-  
շեր , այլ մինակ լրուին , որ ըսել է հոգեորա-  
կան հասարակապետութիւն :

Ծնդ առաքելոց խմբին իշխանութեան էր  
ըսի , այս , կարդաքործ . ը . 14 . ուր գրած եմ .  
“ Պբը լուան որ ԱՅլուսաղէմ առաքեալքն էին  
թէ ’ի Խամարիա ընկալան զբանն Աստուծոյ՝ ա-  
ռաքեցին առ նոսա զՊետրոս և զՅովհաննէս ,  
որք եկեալ կացին յաղօթս և եղին զձեռու ’ի  
վերայ նոր մկրտելոցն և առնուին զուուին նր ” :  
Հիմա տես թէ Պետրոսն ալ առաքելոց խմբին  
իշխանութեան ամկն էր , թէ ոչ . քանզի ինչ-  
պէս միւս առաքեալքն ինքն ալ միաբան եղ-

բարց լրութեան հըսւ և հնազանդ էր միշտ ,  
 ինչպէս որ գրեալ կայ 'ի նոյն . “ Եւ իբրև ան-  
 ցանէին ընդ քաղաքսն՝ աւանդեցին նոցա պա-  
 հել զհրամանսն պատուիրեալս յառաքելոցն և  
 յերիցանց ” : Ուր է հապա Պետրոսին անունը :  
 Եցնպէս Գործ . ժե . 2 . “ Եւ 'ի լինել ոչ սա-  
 կաւ հակառակութիւն և խնդրոյ Պօղոսի և Բառ-  
 նաբայ և ոմանց 'ի նոցանէ առ առաքեալս և  
 երիցունս յերուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ ” :  
 Ուր է հապա Պետրոսի անունը , չկայ : Ի նոյն  
 Գործ . ժե . 4 . “ Եւ հասեալք յերուսաղէմ ըն-  
 կալեալք յեկեղեցւոյն և յերիցանց և յառա-  
 քելոց , պատմեցին որչափ ինչ արար ընդ նոսա  
 Աստուած ” : Ուր է ապա Պետրոսի անունը յառ-  
 կացեալ չէ : Ի նոյն , ժա . 22 . “ Ո ու եղե բա-  
 նըս այս յականջս եկեղեցւոյն , ( որ կը հասկը-  
 ցուի առաքելոցն համախմբութիւնն ) առաքեցին  
 Պառնաբաս մինչև յԱնտիոք ” : Քաջ վերահասու-  
 եղար հիմա թէ առաքելոց միաբան և միակամ-  
 լութիւնն էր կառավարող վնորահաւատս միան-  
 գամայն և զեղքարս և զերիցունս և ոչ թէ Պե-  
 տրոսի առանձնակալ իշխանութիւնը , ըստ կողման-  
 ուէր կրից ծառայողաց : Տե՛ս նաև Գործոյ , ժե . 6 .  
 “ Եւ ժողովեցան առաքետլքն և երիցունք տե-  
 սանել վասն բանիս այսորիկ ” : Ուր է Պետրոսին  
 իշխանութիւնը : Եւբ Յուղային տեղը Աստա-  
 թիան ընտրուեցաւ , մինակ Պետրոս չանօրինեց ,  
 այլ համակամութեամբ առաքելոց և այլոց բազ-  
 մաց իբրև հարիւր և քսանից , ինչպէս եղածին  
 պէս գրած եմ Գործ . ա . 23 . “ Եւ կացուցին  
 երկուս , զՅովսէփ , որում Բարսաբայն կոչէին ,  
 որ անուանեցաւ Յուստոս , և զՄատաթիա . և  
 կացեալ յաղօթս ասեն . “ Դու Տէր , սրտագէտ  
 ոմի , յայտնեա զմի ոք զոր ընտրեցեր 'ի սոցանդ

յերկոցունց, առնուլ զվիճակ պաշտամանս և  
 զառաքելութեան» . ևն : Ուր է հաղա , Պետրոս  
 սի իշխանագետութեան յատուկ նշան մը չկայ :  
 «Եւ ՚ի կատարիլ աւուրցն Պենտէկոստէից . էին  
 ամենեքեան միաբան ՚ի միասին , և եղեւ յանս  
 կարծակի հնչիւն յերկնից եկեալ իբրև սատոփի  
 հողմոյ . . . և երեւեցան նոցա բաժանեալ լեզուք  
 իբրև ՚ի հրոյ և նստաւ իւրաքանչիւր ՚ի վերայ  
 նոցա և լցան ամենեքեան Հոգւով Արքով և  
 սկսան խօսիլ յայլ և այլ լեզուս , որպէս Հոգին  
 տայր բարբառել նոցա : Ուր է հաղա Պետրոս  
 սի յատուկ շնորհընկալութիւնը : Հիմա ալքաջ  
 վերահասու եղանք առաքելոց համաշնորհընկալու  
 թիւնը , տեսա՞ր հիմա իրենց լուութեան իշխա-  
 նութիւնը , որոնք միաբան ազօթեցին , միաբան  
 ձեռս եղին եւ միաբան տուին զվիճակս , եւ  
 միաբան եղեն տնօրինօղ ամենայն յառաջադի-  
 մութեանց եկեղեցւոյ եւ եկեղեցականացն :

Վհա քեղ անժխտելի հաւասարութիւն առա-  
 քելոց իշխանութեան և պետութեան և շնորհաց  
 զօրութեան , զոր Հոգին Կատուծոյ հաւասարա-  
 պէս բաշխեաց ամենեցուն , և ոչ երկրաւոր իշ-  
 խանութիւնք և պետութիւնք . քանզի Վրիստոյ  
 սի մը պէս և Վրիստոսէ զատ՝ ուրիշ ընդհանուր  
 երեւելի գլուխ եկեղեցւոյ մը չունինք , որ իբրև  
 իսկապէս տեղակալ Վրիստոսի ըլլալով՝ հովուէ  
 զագգս և զեկեղեցիս Վրիստոնէից . քանզի հո-  
 վուաղետութեան հոգը՝ երկոտասան առաքելու-  
 ցըն միանդամայն տուաւ , առանց նախադասե-  
 լու զմէկը միւսէն , ոչ Վրիստոս Տէրն մեր կար-  
 գեց զՊետրոսն առաքելապետ կամ գլուխ եկե-  
 ղեցւոյ , և ոչ նա ինքն Պետրոս ինքըզինքը յա-  
 տուկ անանկ ճանչցաւ առաքելոց կամ եկե-  
 ղեցւոյ վրայ , և ոչ առաքեալք թէ բանիւ և թէ

գրով անանկ նշան մը ցուցըցած են Պետրոսին  
 վրայ , միայն պատուով Պետրոսն և Յակոբոս  
 եղբայր Տեառն նախադատիւ համարեցան և ոչ  
 թէ իշխանութեամբ կամ իրաւաբանութեամբ ,  
 քանզի ինչպէս ըսի , ամենեցուն շնորհաց լու-  
 սատուութեան արեգակն մէկ էր և մէկ է : Ո՞ւ-  
 թէ արեգակէն արեգակն կը ծնանի , չէ՞ որ արե-  
 գակէն ծնեալքն շառաւիղը են , միթէ աչքը  
 շառաւղաց մէջէն մեծ ու փոքրն կրնայ որու-  
 ցէլ կամ խըտրութիւն ընել , ոչ ապաքէն մէկ  
 արեգական զօրութեան տուչութենէն կը ցու-  
 լանան , ուրեմն լուսաւորութենէն լուսաւորք  
 յառաջ կուգան և ոչ թէ լուսաւորեալքէն լու-  
 սաւորութիւն , իմաստութենէ իմաստունիք յա-  
 ռաջ կուգան և ոչ թէ իմաստութիւն ինքը ի-  
 մաստուններէն . գերազանցութենէն գերազան-  
 ցեալք յառաջ կուգան և ոչ թէ գերազան-  
 ցութեան ինքը գերազանցեալներէն : Գիտե՛մ ,  
 Ճշմարտասէրք և Ճշմարտութենէն երկնչողք՝ չեն  
 յամառեր սցյա այս ակնյայտնի Ճշմարտութեանց  
 դէմ : Իսկ անոնք որք Ճշմարտութեանն զօրու-  
 թենէն կը համարձակին չերկնչել , Ճշմարտու-  
 թիւն ինքն թող դատախազըլլայ : Քանզի Ճըշ-  
 մարտութիւնն ակներե կը յայտնէ թէ ամենայն  
 առաքեալք շառաւեղք միոյ արեգական էին , ի-  
 մաստունիք՝ ՚ի ծայրագոյն իմաստութենէ , գե-  
 րազանցեալք ՚ի վերին գերազանցութենէն , և  
 լուսաւորեալք ՚ի վերին անհատական լուսաւո-  
 րութենէն . ըստ Յակոբայ Աստուածաշնորհ ա-  
 ռաքելոյն ասութեան . “ Ո՞ւթէ աղքիւր անհա-  
 տին ՚ի միոյ ականէ բղլսից՝ քաղցր և դառն ” : Ոչ  
 ամենեին և ոչ բնաւ :

Ուրեմն ինչպէս Պետրոս առաքեալն և այլմէ՝  
 տասանիքն՝ նոյնպէս և Պօղոս երեքտասան առա-

քեալն։ մի թէ Քրիստոս Տէրն մեր Պօղոս Առաքեալին Պետքոսէն կամ միւս առաքեալներէն քի՞չ պատիւ և պարգև ըրաւ յատուկ նշաննեւ բով, չէ որ Քրիստոս Տէրն մեր մինչդեռ մարմնով երկրիս վրայ էր՝ ծովերուն մէջէն ձուկ ոռասողներէն և մաքսապետներէն կանչեց ու առաքեալ ըրաւ։ իսկ զՊօղոսը՝ յերկնից կոչեց առաքելագործութեան պաշտօնը։ Առաքելոց ըստ։ “Արարից զձեղորսորդս մարդկան”։ իսկ Պօղոսին ալ ըստ։ “Անօթ ընտրութեան է դաինձ։ Առաքելոց՝ մինչ աստ յերկրի էր՝ ըստ։ “Գնացէք յաշխարհ ամ ուսուցէք նոցա” ևն։ իսկ Պօղոսին ալ յատկապէս յերկնից ըստ։ “Ե՛թ զի՞ հեթանոսս հեռաւորս առաքեցից զքեղ”։ Զյանձնեց միւս երկոտասանիցն ընտրութեան և մանաւանդ յատկացընելով ևս առաքելոց մէջը՝ ’ի ձեռն Հոգւոյն Որբոյ ըստ։ “Որոշեցէք ինձ զՊօղոս և զԲառնաբաս ՚ի գործ, յոր կոչեցեալէ իմ զդոսա”։ Քաջ վերահասուեղար թէ ովէ կոչողը և ովէ տնօրինողը, ահա Քրիստոսն է և ոչառաքեալը և ոչնաև Պետքոսը ստ փառտսէր կողմնասիրաց։

Հիմա այս յատուկ վերնաձիր պարագաներով կընանէք անճոռնի վարդապետութէ իրաւաբանել, թէ Պօղոս առաքեալը միւս առաքեալներէն մէծ է ըստ շնորհաց, քան լիցի, այլ ամէնն ալ համահաւասար էին, և առաքելոց համաշունչը ըստթեան անզանաղան անդամ էին։ քանի ևս սա քնդ հրամանաւ լրութեան տռաքելոց միակամ եղայրութենէն էր, ինչպէս որ անոր համար ալ դրած եմ։ “Իսյց եղայրըն վաղվաղակի գիշերայն յուղարկեցին զՊօղոս և զԾիլայ ՚ի հերիս”։ Եւ կամ։ “Դարձեալ յայնժամ վաղվաղակի զՊօղոս առաքեցին եղայրքն դնալ ՚ի

ծովեղին” : Ազէկ վերահասու եղիք , Վետրոս չէր  
խաւրողը՝ սյլ եղարց լութիւնն : “Դարձեալ  
“ իջեալ Պօղոս ’ի Կեսարիա . եւ և ետ ողջոյն եւ  
կեղեցւոյն էջ յԵսփոք” : Ազէկ ’ի միտառ . առ  
եկեղեցին , կ’ըսէ , որ է ’ի մի սէր և ’ի մի հաւատ  
միաբանեալ ժողով եղարց և հաւատացելոց և  
ոչ թէ միայն Պետրոս :

Դարձեալ՝ ինչպէս որ յայտնի է իմ շատ ժա՞  
մանակ Պօղոս առաքեալ եղքօրս հետ շրջելս , աւ  
նոր համար գրած եմ . “ Հւ . ’ի մտանելն մեր յիշ  
րուսացէմ՝ խնդութեամբ ընկալան զմեզեղքարք ,  
և ’ի վողիւ անդր եմուտ Պօղոս ընդ մեղ առ  
Յակոբոս և եկին ամ երիցունիքն” : Ազէկ ’ի միտ  
առ , եղքարք մեզի ընկալան , կ’ըսէ , և ոչ թէ միայն  
Պետրոս , և ապա մինակ առ Յակոբոս մտաք ’ի  
խորհուրդ , որ և առաքելոց գասուն մէջ զվար  
ւոր կ’ անուաներ և Պետրոսէն ալնախաղատիւ .  
ինչպէս որ յայտնի է իր նախասահման կաթոււ  
զիկեայց անուանեալ թուղթին կամ կոնդակին  
սկիզբը , որ գրած է առ համատարած աղքս քըս  
րիստոնէից այսպէս սկսելով .

“ Յակոբոս Յատուծոյ և Տեառն Յիսուսի Քըս  
րիստոսի ծառայ , երկոտասան աղդացդ , որ ’ի  
սփիւռս էք՝ ողջոյն” :

Յակոբոս , ինչպէս տեսար , առ ընդհանուր  
աղդս կը գրէ , “ Երկոտասան աղդացդ , կ’ըսէ ,  
որ ’ի սփիւռսդ էք” :

Իսկ Պետրոս մինակ իր վիճակաց ժողովրդեան  
կը գրէ , ըսելով .

“ Պետրոս առաքեալ , Յիսուսի Քըստոսի ըն-  
տրելոց նժդեհից՝ որ ’ի սփիւռս Պոնտացւոց ,  
Գաղատացւոց և Կապադովիկացւոց և Խիացւոց  
և Ծիւթանացւոց . . շնորհը ընդ ձեղ և խաղա-  
լութիւն բազմացի ” :

Առաջ մտիկ ըրէ : “ Եւ ՚ի վազուեան գիշերին՝  
Եկաց առ նմա Տէր և ասէ . Քաջալերեաց , Պօղէ ,  
զի որպէս վկայեցեր վասն իմ յերուսաղէմ ,  
այնպէս պարտ է քեզ և ՚ի Հռովմ վկայել ” :  
Ի՞նչ զարմանք որ՝ Պետրոսին համար ալ Հռովմ  
երթալուն վրայօք ասանկ յիշատակութիւն մը  
ըրած չեմ : Պօղոս առաքեալին երբ , ինչու և  
ի՞նչպէս երթալը , ճանապարհին մէջ քաշած նե-  
ղութիւնները պարագաներով յայտնի ըրած եմ ,  
Պետրոսին Հռովմ երթալուն վրայօք , անոր երբ  
կամ ինչու եւ կամ հոն ինչ ընելը չէ՞ մի գրեր :  
Եթէ Պետրոս Հռովմ քարոզութեան գացած  
ըլլար՝ ի՞նչ ոլէտք եր ալ Պօղոսին Հռովմ եր-  
թալ , որ Յիսուսի Քրիստոսի Տեառն ազդուու-  
թեամբ յատկապէս քարոզութեան գնաց :

Վմեն առաքեալք համիշխան և համակամէին  
ըսի . այս , քանզի ՚ի պաշտօն հաւատոյ տարած-  
ման՝ պետութիւն և գլխաւորութիւն ամենուն  
վրայ ալ կար , ամեն առաքեալըն ալ աղատօրէն  
կառաջարկէին իրենց հոգեշնորհ մտաց գիւտը :  
Գնա՞ կարդա Դորժոյ , Ժե . 7 . “ Եւ յետ բազում  
խնդիր լինելոյ՝ յոտն եկաց Պետրոս և ասէ ցը-  
նոսա . արք եղբարք , դուք ինքնին գիտէք , զի  
յաւուրցն առաջնոց ՚ի միջի ձերում ընտրեաց ըե-  
րանով իմով լսել հեթանոսաց՝ բանին Աւետա-  
րանի և հաւատալ : Եւ սրտագէտն Աստուած  
վկայեաց նոցա , տալով Աստուած զայոդի սուրբ ,  
որպէս և մեզ , և ոչ ինչ ընտրութիւն արար ՚ի  
մէջ նոցա և մեր , հաւատովք սրբեալ զսիրտ  
նոցա ” :

Ասոր պէս ալ և Յակոբոս առաքեալն . “ Եւ-  
յետ լուելոյ նոցա՝ պատասխանի ետ Յակովոս  
և ասէ . արք եղբարք , լուարնուք ինձ Ըմաւօն  
պատմեաց որպէս յառաջադոյն Աստուած այց

արար առնուլ ժողովուրդ՝ ՚ի հեթանոսաց՝ անուան  
իւրոյ։ Եւ այնմ միաբանին բանք մարդարէից ...  
վասնորոյ ատաց և ես իրաւունս համարիմ մինե-  
ղել զայնոսիկ, ոյք ՚ի հեթանոսաց դառնան առ  
Աստուած, այլտալ թուղթս առ նոսա՝ խորշել  
՚ի կերակրոցն կոոց և ՚ի պոռնկութենէ և ՚ի մե-  
ռելուտոյ և յարենէ ... յայնժամ հաճոյ թուե-  
ցաւ առաքելոցն և երիցանց և բոլոր եկեղեւ-  
ցոյն”։

Այսպէս ըրաւ և Պօղոս առաքեալ Անտիոքայ  
մէջ, կարդա Գործոց, ժգ. 16. “ Յօստն եկաց  
Պօղոս, շարժեաց զձեռն իւր և ասէ . արք Իս-  
րայէլացիք և ոյք երկնչիք յԱստուծոյ, լուա-  
ռուք ... ” . և իր այն օրուան հրաշալի քարո-  
զութեան վերջն ալ այսպէս ինքելով. “ Օի այս-  
պէս պատուիրեաց մեզ Տէր, եղի զքեզ ՚ի լոյս  
հեթանոսաց լինել քեզ, ՚ի փրկութիւն, մինչեւ  
՚ի ծագս երկրի։ Օայս լուեալ հեթանոսացն՝ ու-  
րախ լինեին և փառաւոր առնեին զքանն Տեա-  
ռըն ” . Տեսա՞ր հիմա ալ, Պօղոսին հեթանոսաց  
հաւատոյ լոյս տալուն իշխանութիւնը ուրկից  
եղած կ'ըլլայ, Յիսուսի՞ն եթէ Պետրոսին։

Դ. Հարց մունք ՚ի վերայ արածեա զոջիարսին։

Հ. Տէր իմ Յիսուս, յարուի առնելէդ ետե-  
նինչու համար երեք անդամ հարցուցիր Պետրոս  
առաքեալին թէ “ Ոիմոն որդի Յօնանու, սիւ-  
րեմ զիս ” . երբ երեք անդամ “ Այն, Տէր, սիւ-  
րեմ զքեզ ” , պատասխանը առիր, “ Արածեա  
զոջիարս իմ ” ըսիր : ՚Նչ պատճառաւ եր այս  
հարցումնդ, կամ թէ ինչ պատճառաւ այն շնորհ-  
քը Պետրոսին յատկացուցիր, և այս ձեւ հարց-

մունքը ինչու միայն Պետրոսին ըրիք, ու մէկալ ներուն ալ չըրիք . Եթէ փորձելու համար էր՝ ինչ մէկալներուն ալ չըրիք այդ ձև հարցման փորձը, Եթէ իշխանութիւն տալ էր՝ ինչու մէկին տուիր ու մէկալները զրկեցիր, Եթէ չնորհ էր, ինչու հաւասար զբաշխեցիր, և ինչու մէկը արժանի եղու, ու միւս առաքեալքն ալ չեղան։ Կամ թէ, Տէր իմ Յիսուս, այս ոչխարները, որ յանձնեցիր Պետրոսին արածել՝ աշխարհիս ո՞ր կողմի ոչխարները պիտի հասկըցուի, Աստիային եւ թէ Եւրոպային, Ամբիկէին եթէ Ամերիկային, կամ անոնց մէջն ո՞ր ազգաց ոչխարները պիտի արածէ, Հայոց եթէ Յունաց, Արէից եթէ հետանոսաց, Վարչոց եթէ Վրաց . կամ թէ Գաղղիացւոց եթէ Ընդգիացւոց, Վրաբացւոց եթէ Գամբաց, Վրամացւոց եթէ Փոխւգացւոց, կամ թէ Լիբացւոց եթէ Կիւրենացւոց, ևն : Վրամեն ժողովուրդները Պետրոսին յանձնեցիր, ամենուն ալ Պետրոսը պիտի քարոզէր և ուսուցանէր զՃշմարիտ հաւատսդ . և միւս մետասան աշխալներդ ալ իրենց յաջօրդներովը ոչխարի պէս Պետրոս առաքեալին հովուութեան տակը կենան ըսիր . Եթէ՝ անոնք ալ Պետրոսի պէս ոչխար արածող յատուկ հովիւ կարգեցիր :

Քանզի Հռովմայ պապը կ'ըսէ . Քրիստոս Տէրն մեր բոլոր աշխարհի ոչխարները, այսինքն՝ բոլոր քրիստոնեայ ժողովուրդը իրենց հովիւներովը, մինակ իրեն փոխանորդ հովուապետ Պետրոս առաքեալին հաւատաց ու յանձնեց արածել, այսինքն՝ կենաց պատուիրանքներուդ մէջը և ամեն փրկարար խորհուրդները աւանդեալք 'ի Փրկչէդ անոր հրամանաւը պիտի կատարուին, և անոր ձեռքով և կամեցողութեամբ կարեն մա-

կաղել կենացդ փարախին՝ սուրբ արքայութեանդ  
մէջ :

Եւ ես ալ, կ'ըսէ պապն, Պետրոս առաքեա-  
լին ընտիր և արժանաւոր փօխանորդն ըլլալովս՝  
պէտք է որ բոլոր քրիստոնեայք իրենց ժողո-  
վուրդներովը ըստ ամենայնի ինձի հաղանդին,  
ինչպէս և երկոտասան առաքեալքն՝ Քրիստոսի :

Ոէկ և այսպէս, բայց, Տէր իմ Յիսուս, Պետրոս  
առաքեալին Հոռովմ երթալուն, հոն քարոզե-  
լուն և քրիստոնէութիւնը հոն տարածելուն վր-  
այօք՝ թէ առաքելոցդ գործոցը մէջ, և թէ Պետ-  
րոսի քարոզութեանց մէջ՝ ամենեն ին յիշատա-  
կութիւն մը չկայ յայտնապէս, և ոչիրեն յատ-  
կացեալ վիճակներու մէջի շրջաբերական նամակ-  
ներու մէջ, որոնք եին՝ Պանտոս, Պաղատիս, Կա-  
պագովիլիս, ևն :

Պ. Այսալեալ է պապը. քանզի ընդդէմէ ընաւ-  
ին իմ Ճշմարտասահման կամացս, զոր յայտնեա-  
ցի աշխարհի : Ո՞չ ապաքէն պատուիրելով ուսու-  
ցի երկոտասան աշխարհուներուս միանգամայն որ  
առանց խորելու և զանազանելու զիրենք մէկզ-  
մէկէ՝ հովուեն բանեղէն ոչխարհները իմ տեղս,  
զիս օրինակ առնելով թէ ինչպէս քաջութեամբ  
հովուելու է. վասն որոյ ըսի . “ Պնացէք յաշ-  
խարհ ամենայն, ուսուցէք նոցա պահել զամե-  
նայն զօր ինչ պատուիրեցի ձեղ . . ” ևն . կամ  
թէ “ Պնացէք առաւել առ ոչխարս կորուսեալո-  
տանն իսրայէլի ” :

Եւ ինչպէս որ զիրենք բոլոր աշխարհի մէջ  
իմ հաւատացելոցս վրայ հովիւ և ուսուցիչ ընդ-  
հանրական կարդեցի, որոնք մի միայն իմ Ճըշ-  
մարիտ հաւատքէս կախում ունեցան և ոչ թէ  
’ի միմեանց, նոյնպէս ալ իրենց յաջորդները՝ իս-  
րարմէ կախում չունեցան, այլ երբ Հոգւոյն

Վատուծոյ շնորհօք լցուեցան , ըստ իմ պատռւիւ  
քանացս ամենքն ալ միակամ և միասիրտ ըղձիւ  
գացին և կատարեցին , հրաշլի եղբայրական  
սիրով իրարու հետ միացեալ . քանզի ես իմ ա-  
շակերտացս մէջ մեծ և փոքր , տէր և ծառայ  
չկարգեցի , այլ դուք ամենեքեան մի էք ըսի ,  
դուք եղբարք էք , դուք յայսմ աշխարհէ չէք ,  
դուք աղ էք , դուք լսու էք աշխարհի , դուք  
որդեք Նօր իմոյ էք , դուք մանկունք առագաս-  
տի էք , դուք զիս սիրեցիք և հաւատացիք եթէ  
ես յնտուծոյ ելի , դուք արդէն իսկ սուրբ էք  
վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ , ես եմ որթ  
և դուք ուռ , դուք կենդանի լինելոց էք , զի  
ես կենդանի եմ , դուք յիս և ես 'ի հօր իմում ,  
դուք կոչէք զիս վարդապետ և տէր , ևն , ևն :

Այլ երեք անգամ Պետրոսին հարցունելու՝  
յայտնի է որ՝ իրեն երեք անգամ ուրացութեան  
համար էր . և որովհետեւ քանի մի անգամ Պետ-  
րոս մարդկային բնութեան տկարութեամբ սխա-  
լելով՝ գայթակղութիւն տուաւ իր եղբարց , ուս-  
տի յարութիւն առնելէս ետեւ՝ աշակերտացս ե-  
րեկելով , երբ անոնք Տիբերեայ ծովին մէջը ձուկ  
բռնելու ետեւէ ինկեր էին նորէն , և Պետրոս ալ  
մերկանդամ մէջերնին էր , միայն Յովհաննէս սի-  
րելի աշակերտս հեռուէն զիս տեսնալուն պէս՝  
Ճանչցաւ ու Պետրոսին ալ հասկըցուց թէ Տէրն  
է այն եկողը : Նոն զիս նոր սքանչելիքներով ա-  
նոնց յայտնելէս ետեւ՝ երեք անգամ հարցուցի  
Պետրոսին՝ անոր երեք անգամ զիս ուրանալուն  
փոխարէն , թէ՝ “ Ամոն Յօնանու , սիրե՞ս զիս ա-  
ռաւել քան զդոսա ” , այսինքն՝ ընկերներէ դ .  
Երկու անգամ հարցմանս վստահ պատասխան  
տուաւ , բայց երբորդին՝ ծանր եկաւ իրեն հարց-  
մանքս ընկերաց քովը , քանզի հասկըցաւ թէ ե-

ըեք անդամ՝ ուրացութեան սխալմունքները  
միտքը ձգել ուզեցի, որպէս զի ալ այնուհետեւ  
Վատուածութեանս ճշմարտութեր մէջ հաստատ  
մնայ, ալ չտարակուսի, չդայթակղի, զգաստ և  
զգոյշ մնայ այնուհետեւ իր առաքելագործուե՛ ըն-  
թացքին մէջը. ինչու որ՝ դեռ հաւատոյ երեսէն  
տառապահէք մը քաշած չունէր, 'ի սէր իմ ա-  
նարդուած չէր, 'ի սէր իմ բանտարկուած չէր:  
Վնոր համար Պետրոս՝ Երրորդ հարցմանս վրայ  
վիզլ ծռած խոր հառաչելով մը ըստւ. “ Տէր,  
դու զամենայն գիտես (այսինքն՝ ամեն սխալ-  
մունքներս), և դու իսկ զամենայն ճանաչես” ,  
(այսինքն՝ ծածկեալ յանցանքներս): Իայց դու  
ներողութեան Տէր ես, և ես ալ ամստիւ և  
ամ հարազատութեամք և հաւատալով Վատուա-  
ծութեանդ, պիտի սիրեմ զբեզ. Այս սրտանց  
զիս սիրելուն խոստովանութիւնը ցուցընելէն  
ետեւ՝ անոր յանձնեցի, որ այնուհետեւ իր քա-  
րողութեամքը դարձուցած ոչխարները, այսինքն  
յիս հաւատացեալ ժողովուրդը աղէկ հովուէ,  
վասն որոյ ըսի. “ Արածեա զոշխարս իմ” :

Եթէ պապերուն սխալ դատմանը պէս՝ բոլոր  
ոչխարներս Պետրոսին հովուութեան յանձնեցի՝  
միւս մետասան համապատիւ և համաշնորհ ըն-  
տրեալ աշակերտացս ի՞նչ յանձնեցի, որո՞նց ե-  
տեւն խրկեցի զիրենք, ո՞չ ապաքէն հովուական  
կառավարչութեան շնորհը ամենուն մէկէն տուի,  
ըսելով. “ Ա. յլ երթայք առաւել առ ոչխարս  
կորուսեալս տանն Խորայէլի. զհիւանդս բժշկե-  
ցէք, զբորոտս որբեցէք, զգես հանէք, ձրի  
առէք և ձրի տուք ” . (Վատ. ժ. 5.) : Զէ որ  
յայտնապէս ևո ըսի աշակերտացս թէ. “ Ամեն  
ասեմ ձեզ, զի և դուք որ եկիք զկնի իմ՝ 'ի միւս  
անդամ դալստեան յորժամ նստցի Որդի մարտ

Դոյ յաթոռ փառաց իւրոց՝ նստջեք և դուք  
յերկոտասան աթոռ դատել զերկոտասան ազգն  
խրայէլի” (Վագի. ԺՇ. 28):

Հ. Սուրբ Առաքեալդ Յակոբ Ալիֆեան եղաւ  
բայր Տեղառն, դուն ուր տեղ և որ ոչխարները  
ըստ Քրիստոսի պատուիրանաց արածեցիր, ա-  
զատ էիր տիրապարգե. հովուական իշխանու-  
թեամբ ընդ տռաքելակից եղբարցդ, եթէ՝ ըստ  
նախասրացարեալ կրիցն Հռովմի պապերուն՝ Պետ-  
րոսի միահեծան իշխանութեան տակն էիր, և  
անոր արտօնութեամբ և տնօրէնութեամբ զկամա  
Քրիստոսի կատարելով կը քարոզէիր:

Պ. Գայթակղութեան տեղի տուօղհարցում,  
այդ հարցումը Քրիստոսի աշակերտաց ի՞նչ կը  
վայելէ, ով էր Պետրոս և ով էր Յակոբոս կամ  
Յարդուղիմէոս, չէ՞զ ամեն առաքեալքս ալքո-  
ւոր բանեզէն ոչխարաց վրայ հովիւ կարգեցանք,  
՚ի մի միայն քաջ և անձնադիր հովուապետէն  
մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ ասաց. Կսիսկ  
եմ հովիւն քաջ, ևն, և մեզի ամենքս ալ վար-  
ժեց ու կրթեց իւր ամենակերպ հիանալի շնոր-  
հօք և առաքեց բոլոր աշխարհ իւր ճշմարտու-  
թիւնը քարոզելու, չէ՞որ իւր երկնաւորաց և  
երկրաւորաց զօրացուցիչ զօրութենէն զօրա-  
ցանք, անոր աստուածային պատուէրը սաստիկ  
դգուշութեամբ պահեցինք՝ ամենեւին մէջերնիս  
մեծ, փոքր, գլուխ, ծառայ, պետ, պաշո-  
նեայ չունենալու և չորոշելու համար:

Եթէ Պետրոս առաքեալ եղբայրս բոլոր առա-  
քելցս վրայ յատուկ իշխանութեան արտօնու-  
թիւն մը ունենար՝ անշուշտ կը հարկաւորէր որ  
անունը ՚ի սփիւռս գրած կաթուղիկեայց թուղ-  
թիս մէջը գրէի, որուն մէջը ամենեւին Պետրոսի  
անունը յիշած չունիմ, ինչու որ հարկաւորու-

թիւն մը չկար յիշելու , ինչու որ ան ալ մեզի  
պէս Քրիստոսական օրէնքը քարոզող էր և ոչ  
օրինաց տէր կամ օրէնք սահմանադրող :

Ե . — Հարցնունք ՚ի վերայ վեմին հաւասար :

Տէր իմ Յիսուս , ի՞նչքանի համար ըստի Պետրոս  
առաքեալին թէ՝ “ Դու ես վէմ , և ՚ի վերայ  
այդր վիմի շնեցից զեկեղեցի իմ , և գրունք դը-  
ժոխոց վնա մի՛ յաղթահարեցեն ” : Քանզի Հը-  
ռովմայ պապը աս խօսքը իր յաղթականութեան  
գործի մը ընելով՝ ալ աւելի կը խրոխտայ քրիս-  
տոնեայ աղգաց վրայ մեծամեծ գայթակղութիւն-  
ներ սերմանելով ուղղադաւան հաւատացելոցդ  
մէջ . որոնք գրեղմիայն՝ հաւատոյ իսկական վէմն ,  
կենաց գուռը , արքայութեան փականք և ճանա-  
պարհ Ճշմարտութեան ճանջնալով դաւանելով  
կը քարոզեն , և այս իսկական քրիստութեան նիւ-  
թերուն վրայ իրենց առաքելական սուրբ եկեղեցին  
հիմնեալ հաստատեալ են և կը հաստա-  
տեն յարակայիլ աստուածայինդ շնորհաց ներ-  
գործութեամբ մինչև յաւխտեան , որպէս խօս-  
տացար թէ՝ “ Ես ընդ ձեզ եմ մինչև ՚ի կատա-  
րած աշխարհի ” :

Իայց Հռովմայ պապը կ'ըսէ . հաւատոյ վէմը  
Պետրոս առաքեալն է , որուն գերեղմանն ալ  
Հռովմայ մէջն է , ըստ կարծեցեալ համբաւոյն ,  
և Հռովմն ալ Այն պիեղբայ կ'անուանէ : Յայտնի  
է որ բնական լուսոյ ական , այսինքն՝ արեգա-  
կան լուսին համար չէ ըսածը , քանզի նա իւր  
աշխարհածագ լուսաւորութեան ակնը ըստ սահ-  
մանելոյդ՝ արեելքէն կը քանայ համայնց վրայ :  
Հապա՝ գերբնական լուսոյ , այսինքն՝ Քրիստո-

սական ճշմարիտ հաւատոյ լուսաւորութեան  
ծագման համար է ըստածը, որ և բնաւին անհիմն  
է և սուտ քանզի հաւատոյդ տիեղերատարած  
պաշտելի Անը՝ դու ինքն իսկ ես, Տէ՛ր իմ Յի-  
սուս, Փրկիչդ աշխարհի: Եյսու ամենայնիւ՝  
պապը խրոխտալով կը պարծենայ բոլոր ազգաց  
վրայ թէ՝ Հռովմայ եկեղեցին է գլուխ ամենայն  
եկեղեցեաց, վէմն քրիստոսական սուրբ հաւա-  
տոյ, և կենդրոն միութեան ամենայն հաւատա-  
ցելոց: Վասն որոյ՝ ինչպէս որ Պետրոս Առաքե-  
լոց վրայ առաքելապետ էր, կ'ըսէ, նոյնպէս և  
ես անոնց յաջորդաց վրայ իշխան և առաքելա-  
պետ և փոխանորդ Տեառնդ մերոյ: ուստի մե-  
ծասրտութեամբ կը մեծաբանէ երկոտասան ազ-  
գաց վրայ միանգամայն ըսելով: Ոիայն Հռով-  
մայ եկեղեցին է ճշմարիտ եկեղեցի, ուղղափառ,  
անսխալ: Քանզի նա միայն հիմնեալ է, կ'ըսէ,  
Պետրոսի ճշմարիտ դաւանութեան վիմին վրայ,  
և նոյն եկեղեցւոյ ժողովուրդը միայն փրկութի-  
կը գտնայ, և անկից դուրս ուրիշ մնացած եկե-  
ղեցիները ճշմարիտ հաւատոյ վիմին վրայ հիմնեալ  
չեն: Եւ հետեաքար, կ'ըսէ, եթէ այն եկե-  
ղեցիները չդառնան վերսիշեալ իշխանութեանց  
վրայ վիս տէր և իշխանապետ և փոխանորդ Պետ-  
րոսի, ինչպէս և Պետրոսն Քրիստոսի՝ չդաւանին  
ու շընդունին՝ շարափառ, հերձուածող և հա-  
ւատոյ վիմին շաւղէն խոտորեալ են, ևն, ևի-  
ւասն որոյ և դրունք դժոխոց զիրենք պիտի  
յաղթահարեն, ևն:

Պ: Խսալեալ են, գիտեմք, և յայտնապէս կը  
զինին ընդդէմ ճշմարտասահման հաւատոյս իմայ:  
Քանզի՝ Պետրոսի դաւանութիւնը իրենց ամբար-  
տաւանութեան կրից գործի և նիւթ ընելով,  
խոտորեալ են իմ ճշմարտաւանդ պատգամնե-

ըէս, հեռացեալ են իմ սիրոյ իսկութեան սահմանէս. միթէ Պետրոսին ըսելավս թէ՝ “ Դու ես վէմ և ’ի վերայ այդք վիմի շինեցից զեկեղեցի իմ ”, Պետրոս հաւատք եղաւ : Հօր Աստուծոյ երկու անգամ երկինքէն “ Դա է Արդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ՝ դմա լուարուք ” ձայնը Պետրոսին մտիկ ըրէք կը հասկընան . ԶԵ որ ան ալ այն ձայնին հաւատալով Պետրոս եղաւ : Հօր Աստուծոյ նախասահման կամքը Պետրոս կատարեց, Պետրոս իւր անձը ետ փոխանակ բաղմաց փրկութեան, եթէ՝ ինքը այն փրկող անձին հաւատալով Պետրոս եղաւ :

Յովհաննէս Ոկրտիչ ինծի համար ըսաւ թէ՝ “ Ահա գառն Աստուծոյ, որ բառնոյ զմեղս աշխարհի ” : Աս մեզքը բարձող Աստուծոյ գառնը միթէ Պետրոսն էր, եթէ՝ ինքը Պետրոսն ալ մեզքը բարձող գառին հաւատալով՝ Պետրոս եղաւ :

“ Ամենայն օրէնք և պատուիրանք ՚ի մի բան կատարին ”, ըսի, “ այսինքն՝ ’ի սիրեցես զընկեր քո իբրև զանձնդ ” : Առ խօսքով մինակ Պետրոսի լոկ անունը սիրելը կը հասկընան, և կամ միայն Պետրոսի քարոզութեամբ ինծի հաւատացեալ ժողովուրդը քրիստոնեայ կ'ընդունին, և միւս անձնանուեր քրիստոնեայք եղացը և ընկեր չեն : Աւաղ կամաւ կուրացելոց Պետրոսին ըսելս թէ ՚ վերայ այդք վիմի շինեցից զեկեղեցի իմ ”, ըսել չէ Պետրոսին վրայ կամ անոր ապականացու ոսկերաց գերեզմանին վրայ իմ եկեղեցին պիտի շինեմ, այլ զիս Արդի Աստուծոյ գաւանած խօսքին վրայ պիտի շինեմ, այն խօսքին պիտի հաւատալ տամ մարդկան, և այն խօսքին վրայ պիտի միացընեմ ժողովուրդս ըսել է :

Եւ այսպէս Պետրոսին ըսելուս պատճառը անէ  
որ երբ ելայ Փիլիպպէայ կեսարիոյ կողմերը  
գացի աշակերտներով՝ հոն հարցուցի անոնց  
թէ՝ մարդիկ ինձի համար ովէ կ' ըսեն, պատաս  
խանեցին թէ՝ ոմանք Յովհաննէս Ակրտիչն է կ' ը  
սեն, ոմանք՝ Եղիան, և ոմանք ալ՝ Երեմիայն  
կամ մարդարէներէն մէկը. անոր համար ես ալ  
իրենց հարցուցի, հապա գուք ով եմ կ' ըսէք  
ինձի համար. անջուշտ ամենքը մէկէն պատաս  
խան տալու չէին ա, թէպէտ ես ամենուն մէկէն  
հարցուցի և գուք ըսի :

Պետրոս, որ ամենէն տարօք և ամենէն առաջ  
ինձի աշակերտողէք, իր Անդրէաս եղաօրը հետ՝  
ամենէն առաջ իւր ընկերներուն մէջէն դաւա  
նեց զիս ըսելով. “Դու ես Որդի Աստուծոյ կենա  
դանւոյ” : Այիթէ աս դաւանութիւնը միայն  
Պետրօս առաքեալը դաւանեց :

Չէ որ Պետրոսէ առաջ դաւանեցին զիս մաս  
գերը, Յովհաննէս Ակրտիչը, Աիմէօն ծերունին,  
Աքգար թագաւորը և Նաթանայէլ ( այսինքն  
Շարթուղիմէոս ) Հայաստանի առաքեալը, ու  
րուն սրտին անարատութիւնը տեսնելով գովեցի  
զինքը ամենուն առջեւը ըսելով. “Հայ արդարեւ  
Խրայէլացի, յորում նենդութիւն ոչ դոյ” :  
Եւ ես իրեն հարցընելէս առաջ թէ՝ “Նաթա  
նայէլ, ես ով եմ” : Նա ինքնիրենը մեծ ջերմեւ  
ռանդութեամբ դաւանեց զիս, ըսելով. “Դու  
ես որդին Աստուծոյ, դու ես թագաւորն Իու  
րայէլի” :

Ուրեմն Հայաստանի ժողովուրդն ալ թող իր  
Շարթուղիմէոս առաքեալով պարծենայ, ու ինք  
զինքը մեծ դասէ, իրաւունք ունինք ըսելով,  
թէ՝ Քրիստոս միայն մեր Շարթուղիմէոս ա  
ռաքեալին ջերմ աստուածադադաւանութեան և

մաքուր սրտին հաւանելով՝ գովեց զինքը և նոյն էղանակ գովութիւն ուրիշ առաքելոց չտուաւ։ Այս, տեղի ունին այստանի ժողովուրդը պարծենալ, բայց քաջ գիտեն թէ լոկ իրենց առաքելոյն աստուածամերձութեամբը պարծենաւով՝ իրենք ալ աստուածամերձ չեն կրնար ըլլու։ Քաջ գիտեն թէ մէկ արեգակէն ծագեալ շառաւ փղները իրարմէ տարբերութիւն չեն ունենար։ Քաջ գիտեն աստուածաբանել թէ տսանկ սնուի ըմբռմաւնքները բնաւին ներհակ են իմանաչառ խնամակալութեանս։

Հայ ասոնց մի և նոյն դաւանութիւնը վէճ անսուանելով ըսի։ “ Ի վերայ այդր վնամի շինեցից զեկեղեցի իմ և գրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն ”։ Ասկէ չհետեւ իր թէ ես մի նակ Պետրոս առաքեալու հաւատոյ իսկութիւն, հաւատոյ սահման կամ գլուխ հաւատոյ կարգեցի։ Քանզի ապականացուին և անցաւորին վըրայ՝ անապականը և անմահականը հիմնադրուիր։ Հաւատոյ սահմանը՝ կենդանի մարդկան միտքն և սիրտն է, որոնց մէջ հաւատոյ բնակելուն ըստուգութիւնը՝ անոր ծառայելն և պաշտօն մատուցանելն է, այսինքն՝ գործքն ըստ հաւատոյ գործելն։

Եթէ ըսէք թէ՝ ինչու համար առաքելոցմէ ուրիշ դաւանողներուն “ Դու ես վէմ ” ըստիր։ Վանզի անոնք հաւատք քարոզելու, հաւատոյ վրայ եկեղեցի հաստատելու առաքելութեան պաշտօնի ընարուած չէին։ անոնք ոչխարի պէս էին, ասոնք հովիւի պէս զանոնք հովուելու առաքեցի, անոնք ձուկի նմանցուցի, առաքեալ ներս՝ ձկնորսի։ որ զանոնք որսան կորստական կենցաղոյս ծովէն՝ ի կեանս։

Աւրեմն՝ այս ճշմարիտ դաւանութեանը վրայ

Հիմնեալ Եկեղեցիները աշխարհիս որ կողմը կ'ըլ-  
լայ՝ թող ըլլայ, քրիստոսականս Եկեղեցին է,  
առաքելոդիր, ճշմարտահիմն և մի, ինչպէս է  
Աստիոյ մէջ Հայկազն նախահուատ աղբին առա-  
քելական, անարատ և ուղղափառ Եկեղեցին.  
Քանզի ՚ի վերայ վիմին հաւատոյ ճշմարտութեանս  
հաստատեալէ, և որուն վէմը ես ինքն եմ Ար-  
դին Աօր Աստուծոյ կենդանւոյ:

Ո՞ր առաքեալս և առաքելոյաջորդ հայրա-  
պետներս իրենց Եկեղեցիները այս վերնապարգի-  
Աստուծածադաւանութեանս վիմին վրայ չհաս-  
տատեցին, ոչ ասպաքէն ամենեքեան մէկ հոգի  
առին, ամենեքեան ըստ իմ առաքելութեան  
գնացին յաշխարհ ամենայն ՚ի քարոզութի կե-  
նաց յամենայն աղբս, և իմ հաւատոյս սիրոյն  
համար՝ անտարակոյս անտանելի չարչարանքներով  
հաւատոյս լոյսը արեգական լուսին պէս ծագե-  
ցին ամեն արարածոց, և կերպ կերպ ակամայ  
մահուամբ ելսն յաշխարհէս, որով ստուգեցին  
հաւատոյս վրայ իրենց վէմ անշարժելի հանդի-  
սանալին:

Ապա՝ Հոռովմայ պապերուն վէմն որն է, որով  
ամենուն վրայ կը ծանրանայ, ոյդ ի՞նչպէս վէմ  
է, որ փոխանակ իր հաւատացեալները յինքն  
հաստատելու վէմ գայթակղութեան և վէմ  
գլորման եղեր է այսքան ժամանակ, իրեն զար-  
նուողները այսինքն ներհակողները փշուելուն  
տեղը ինքը կը փշուի. Ըսել է որ՝ ինքը բուն  
վիմին ճշմարտութեան ներհակ մնալով՝ իր վրայ  
հաւատացեալը չեն հաստատուիր ու չեն յարա-  
կայիր. քանզի ըսի. “ Թագաւորութիւն յանձն  
քաժանեալ կործանի ”: Կոյնպէս և ժողովուրդ  
միոյ Եկեղեցւոյ երբ յեղայրսիրութենէ կը բա-  
ժանի, ՚ի խաղաղութենէ կը հեռանայ, հաւատ-

Քը կը բաժանէ՝ ազգութիւնն ալ կամ լութին  
ալ անշուշտ կը կործանի ու կ' անզօրանայ :

Աւրեմն՝ թող ամաչեն ու թող զգաստանան  
անանկ վարձկան հովիւները , քանդի ինձի օրիւ  
նակ առնող քաջ հովիւները իրենց անձը չխնաց  
յեցին իմ ոչխարացս փրկութեանը հոմար ,  
ուր քարոզեցին , սիրով միաբանեցան իրարու  
հետ . վասն այնորիկ աշխարհը հնազանդեցաւ իւ  
րենց , ճանչաւ զիրենք իմ աշակերտս ըլլալինին ,  
ինչու որ՝ ատելութեամբ չվարուեցան միմեանց  
հետ , եսութեամբ չիրոխացին իրարու վրայ ,  
տեղով կամ սահմանով չպարտացան , ինչպէս  
որ պապերը կը պարձենան Հռովմայ Ճարտարա  
րուեստ գեղեցկութեամբ , մեծութեամբ , մարդ  
կան բազմութեամբ , լայնարձակ հրապարակնեւ  
քով , աշխարհավայել տեսարաններով , որոնք ա  
մենքին հաւատոյ կենդանութեան օգուտ մը  
չունին , երբ հաւատոյ , եղայրսիրութեան և  
բարեպաշտութեան գործոց գեղեցկութիւնն ալ  
չգերազանցէ անսնց վրայ . ասկա թէ ոչ՝ ի՞նչ  
տարբերութիւն պիտի ունենան աշխարհիս հին  
եօթը հրաշալիքներէն , որոնց անցաւոր փոռքը  
ժամանակին հետ անցան և անյայտ եղան :

Եթէ հաւատացելոցս ըստ հաւատոյ մասին տե-  
ղով կամ քաղաքով պարձենալ հարկաւորին նախ  
պարու և արժան է՝ սուրբ քաղաքաւ , այսինքն՝  
Երուսաղէմաւ պարձենալ . քանդի ան միայն կըրո  
նայ իրաւամբ պարձենալու տեղի ունենալ , քան  
զամենայն վանորայս և եկեղեցիս . որովհետեւ  
թէ ըստ հնոյն և թէ ըստ նորոյս՝ նա միայն ծառ  
նօթ եղաւ հրեշտակաց և մարդկան , նա միայն  
սահմանեցաւ լինել տեսարան և պատկեր առ  
տուածապաշտութեան սկզբնաւորութեանը մայր  
տեղի . անոր համար կոչեցի քաղաք սուրբ , քա-

ղաք աւետեաց Երկրիս նա եղեւ ստուերական օրիւ  
նացն պարունակող և նորոյս խսկական օրինաց  
մայր և ծնող, Հոգին Վատուծոյ անոր փրայօք  
մարդարէից մարդարէանալ տուաւ գալստեանս  
համար ։ անոր մէջը ծնայ, անոր Յորդանան գեւ  
տին մէջ մկրտեցայ, և ոչ Հոռովմայ Տիբերիս,  
Փօ կամ Փանառօ գետերուն մէջ։ Վաղգոթմայի  
մէջ խաչս բարձրացաւ և ոչ Հոռովմայ Վաղինենեան  
լերանց և կամ բարձրագոյն Աէլինօյին վրայ ։  
Ուր է ապա քու անունդ, սնապարծդ Հոռովմ,  
որ գերեալդ եռ՝ ի բնութենէ՝ փրկութիւն ՚ի  
քեզ կը քարոզես ։

Վ. յ՛, կրնայ և Հոռովմ Երուսաղէմ քաղաքին  
սրբութեան պատկերը ունենալ և սրբութեան  
հարկիս Երկրորդ իշման Վիածնիս տեղւոյն նման  
նիւ, Երբ իմ գործոցս պատկերը ունենայ, այսինչ  
քըն՝ իմ սիրովս պարծենալ, իմ անուամբս մեւ  
ծանալ, իմ խոնարհութեամբս բարձրանալ, իսու  
կութեամբ յաջորդել աշակերտացա ։ քաջ աջաւ  
լրջութեամբ դժուշանալ անանկ անփոյթ և կամաւ  
պաշտ հովիւներէն և անոնց գոյթակղեցուցիչ  
մեծութիւններէն և եկեղեցաբաժան հնարքնեւ  
րէն։ Գիտեմ, մորթիւք ոչխարաց կը շրջին, այսինչ  
քըն՝ ինձմով կը պարծենան և Պետրոսի դաւա  
նութեամբ վիրենք պաշտելտալու իրաւունքներ  
կը գտնան, որ միամիտ ժողովուրդէն՝ ռաքըի,  
ռաքըի կոչուին, վասն որոյ՝ պէտք չէ ամեն հու  
գւոյ հաւատալ, պէտք չէ նոր հաւատ սահման  
նողաց ունինդիր լինել, զի հաւատքն յինսահա  
մանէն մէկ անդամ սահմանուեցաւ, ալ չսահ  
մանուիր ։ Վաղա պէտք է որ իմ սուրբ Վւետաւ  
րանս միայն իրենց շաւիդ և ուղեցոյց ընեն տո  
վէմն հաւատոյ ճշմարտութիւնն պաշտելու, ու  
բուն վրայ որ՝ առաքեալը և առաքելայտնորդ հու

Ալեներս հիմնեալ և հաւատատեալ են, և անոնց  
նմանեացն ալ կը կրկնուի թէ “ Ես ընդ ձեզ  
եմ մինչեւ ’ի կատարած աշխարհի ” . կամ թէ  
“ Ուր իցեն ժողովեալ երկուց և երից՝ անդ եւ  
և ես վեմն կենդանի ’ի մէջ նոցա ” . Քանզի իմ  
եկեղեցւոյս վէմը՝ զենքը այսինքն հաւատքը գոր-  
ծով գաւանողին է, իմ վեմն աննենդ է, իմ  
վէմս միռւթեան կենդրոն է, սիրոյ սահման է,  
իմ վիմակիր եկեղեցիս՝ հաւատացելոց գումարն  
է, և ոչ Պետրոսին կամ Պօղոսին հողանիւթի ոս-  
կերց վրայ նիւթական շինուածք :

Հ . Դուն ի՞նչ կ' ըսես, սրբազն առաքեալդ  
Պետրոս, ըստ հաւատոյ վէմ ի՞նչ կը հասկը-  
ցուի . դուն ինչու վէմ անուանեցար, ի՞նչ է  
վեմն և ուր :

Պ . Ա էմ հաւատոյ ըսել է՝ հաւատալ Յիսու-  
սի Պրիստոսի Հօր Աստուծոյ Ճշմարիտ Արդի ըլ-  
լալը, ինչպէս որ կանխագոյն մարդարէք Հո-  
գւով սրբով գուշակեցին, ինչպէս որ նախ քան  
փս բազումք գաւանեցին, և ինչպէս որ նա  
ինքն Հայրն Աստուծած երկու անդամ ’ի վերուստ  
մկայեաց իր Արդւոյն Ճշմարտութեանը վրայօք,  
ասոնք ամենն ալ թէ կանխապէս և թէ ներկա-  
յապէս լսելու գիտնալովս՝ երբ Յիսուս ալ հար-  
ցուց մեզի թէ՝ Դուք ինձի համար ով է կ' ը-  
սէք, ես ալ նոյն դաւանութեան իսկութիւնը  
խոստովանելով ըսի . “ Դու ես Արդին Աստուծոյ  
կենդանւոյ ” , ինչպէս որ առաքեալ եղբարքս  
և Կաթանայէլ առաքեալն ալ նախ քան զաշա-  
կերտելն դաւանեց ըսելով . “ Ուաբբի, դու ես  
Արդին Աստուծոյ, դու ես թագաւորն Իսրայէլի ” .  
Ահա աս է վեմն հաւատոյ, զոր և ես դաւանե-  
ցի, վասն որոյ ըսաւ . Ե վերայ այդք վեմի, այս-  
ինքն՝ ահա այդ դաւանութեան վրայ պիտի շի-

նեմ իմ եկեղեցիս : Խնչպէս որ շնորհ ՚ի ձեռն  
միասիրտ , միակիրթ , միաբան և միապատիւ ա-  
ռաքելոցս :

Վպա ամեն մարդ , ու ոք և իցէ , եթէ բոլո-  
րով սրտիւ խոստովանի և դաւանի թէ՝ Յիսուս  
է Արդի Հօր Խոտուծոյ , Խոտուած Ճշմարիտ ,  
ան ալ վէմ կ' անուանի . ոչ ասդաքէն այսպէս  
դաւանողաց համար առ հասարակ ըստու . “ ՚Իուր  
էք տաճար Խոտուծոյ կենդանուոյ ” : Եթէ հա-  
ւատացեալք տաճար Խոտուծոյ են , ասդա ուրեմն  
՚ի վերայ վիմին հաւատոյ հաւատացեալ են , ա-  
պա՝ վէմն այսինքն զՅիսուս Քրիստոսը իրենց  
սրտին մէջ հաստատեալ ունին : Ոչ ապաքէն և  
ես սոյն բանը Ճշմարտելով վկայեր եմ ըսելով .  
“ Եւ դուք իբրև զվէմն կենդանիս լինիք տաճար  
հոգեօր յանարատ քահանայութիւնն մատուցա-  
նել զհոգեօր տպատարագս հաճոյս Խոտուծոյ ՚ի  
ձեռն Յիսուսի Քրիստոսի . Քանզի կոյ իսկ ՚ի  
գրի թէ՝ Խհաւասիկ դնեմ ՚ի Արօն վէմ ընտիր ,  
գլուխ անկեան պատուական և որ ՚ի նա հաւա-  
տացէ՝ մի՛ ամաչեսցի ” : ( Կար . ա թարգլ . , բ . 5 : )  
Դ նա ըսելով՝ Պետրոս կամ Պօղոս Հհասկըցուիր ,  
հապա Յիսուսի Քրիստոսի Ճշմարիտ հաւատքը .  
Եւ Քրիստոսի հաւատացելոց համար ալ ըսի .  
“ Զեզ այսուհետե հաւատացելոց է վէմ պա-  
տուական , իսկ անհաւատիցն , վէմն զօր անար-  
գեցին շինողքն . նա եղեւ գլուխ անկեան և վէմ  
գլուման և վէմ դայթակղութեան նոցա , որք  
դայթակղին ապստամբեալք ՚ի բանէն յոր և ե-  
դան ” :

Հ . Պ աէ , Պօղոս առաքեալ , դուն որ վիմին  
վրայ շնեցիր զեկեղեցիդ , այսինքն՝ յանուն ո-  
րոյ դարձուցիր և միաբանեցիր ժողովուրդդ ,  
նմանութեամբ առնուած վէմ անուանեալ Պետ-

բարին անունովը , Եթէ՝ քուն վէմ անուանողին  
Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Կատուծոյ անուան  
Ճշմարտութեան վիմին վրայ :

Պ. Այդ ուրբան թերահաւատի հարցումն է .  
Հոր եկեղեցի ըսելը՝ հաւատացելոց ժողովը ըս-  
տել է , որ հաւատոյ վիմին վրայ կը շնուի , և  
հաւատն է վէմն իսկ ինքն Յիսուս Քրիստոս Որ  
Կատուծոյ Որդին յերկնից իջեալ . մարդն Պետ-  
րոս ով է՝ որ վէմ հաւատոյ ըլլոյ . եկեղեցի Քր-  
իստոսի կը կոչուի , Եթէ՝ եկեղեցի Պետրոսի ,  
վէմ հաւատոյ կը կոչուի , Եթէ՝ վէմ Պետրոսի :

Քրիստոսական եկեղեցւոյ վէմը ով կամ ինչ  
ըլլալը ես ոչ որբազան Պետրոսէն և առաքելոց-  
մէ մէկէն սորվեցայ , ոչ ալ ինքը Քրիստոս՝ Պե-  
տրոսին կամ առաքելոց մէկին քսվը խրկեց զիս  
եկեղեցւոյ վիմաւթիւնը սորվելու իրբէ իր վո-  
խանորդէն , այլ ինքն Տէրի՝ ինչպէս միւս առա-  
քեալը՝ զիս ալ կարգեց աւետարանել զիւր եկե-  
ղեցւոյ վէմը , ինչպէս որ յացտնած եմ : “ Յու-  
ցանեմ ձեզ , եղանակ , զիւրետարանն , որ աւե-  
տարանեցաւ մինէն , զի ոչէր ըստ մարդոյ , քան-  
չի և ոչ ես ’ի մարդոյ առի և ոչ ուժոյ յու-  
մեքէ , այլ ’ի յայտնութենէն Յիսուսի Քրիստո-  
սի ” . (Պատ . ան : 11 : )

Իմ ազատ հոգի որական իշխանութեանս վրա-  
յօք ալ գրած եմ . “ Այլ . . . իբրև տեսին ե-  
թէ հաւատացեալէ ինձ Վեւտարանն անթվա-  
տութեան , որպէս Պետրոսի ’ի թշփատութեան ,  
զի որպէս յաջողեցն Պետրոսի յաւաքելութի-  
թլփատութեանն (այսինքն՝ Հոկից մէջ քարո-  
ղելև հիմնադիր ըլլալը) յաջողեաց և ինձ ’ի հե-  
թանոս (քարողելև հիմնադիր եկեղեցւոյ հան-  
գիսանալ) : Իբրև գիտացին զշնորհսն , որ տուեալ  
էին ինձ , Յակոբոս և Լեփաս և Յովհաննէս , որ

կարծեալսիւնք էին՝ ձեռն ետուն հաւանութեինձ և բառնաբայ, զի մեք ’ի հեթանոսս, և նաքա ’ի թլփատութեան” . ( Ինոյն, 7 : )

Զ . — Հարցմունք ’ի վէրայ դականաց արժայութեան :

Տ . Տէր իմ հիմուն, Արքայութեանդ դրան փականաց իշխանութիւնը ե՞րբ տուիր Պետրոսին, կամ, մինակ Պետրոս առաքեալին տուիր, եթէ երկոտասանից մէկէն : Քանզի Առովմայ պապը՝ առ բանով կը խրոխտայ ամեն քրիստոնեայ աղջաց վրայ ըսելով . Արքայութեան դրան բանալիները՝ մինակ Պետրոսին տուաւ . և որովհետեւ ես ալ յաջորդաբար անօր արժանաւոր փոխանորդն եմ, վասն որոյ նոյն իշխանութեան բանալին իմ քովո է, ուստի թէ արժանաւոր և թէ անարժան հոգ գին արքայութիւն տանելու արտօնութիւնը ինձ մէ կախեալ է, ատզա՝ ովոր զիս փոխանորդ Պետրոսի չճանչնայ, ինձի չհնազանդի, և իմ եկեղեւցիս միայն ուղղափառ չդաւանի՝ արքայութեան դուռը անոր վրայ չեմքանար, կը զրկեմ զինքը յաւիտենական կենաց ժառանգութենէն ” . Այս անսահմանելի իշխանութիւնը, որովոր ինքը ածօրէն կը պարծենայ, իրաւ է թէ սուտ, քանզի լսողները զարմանաւով ծաղրի կ'առնեն զինքը, թէ շահախնդրութեան երեսէն այս աստիճան ալ սուտ վարդապետութիւն կ'ըլլայ եւ զեր, և ասանկով փոխանակ հոգի շահելու՝ գայթակղութիւններ տալով՝ թերահաւատութեան մէջ կը ձգէ ժողովուրդը :

Պ . Ախալեալ է, գիտեմ . քանզի ընդդէմ է իմ կենաց ճանապարհիս, զորն որ աւետարանեցի աշխարհի ըսելով . և Ես եմ դուռն կենաց, ես

Եմ Ճանապարհ և Ճշմարտութիւն և կեանք , ոչ  
ոք գայ առ Հայրն , եթէ ոչ ինե ” . (Յով . ժդ . 6 : )  
Թէպէտ այդ փականքը Պետրոսին խոստացայ , զիս  
Որդի Առուուծոյ դաւանելուն համար յառաջ  
քան գյարութիւնս , բայց յորժամ յարեայ՝ այն  
խոստացած իշխանութիւնս ամենուն հաւասար  
տուի . քանզի զանոնք Դալիլեա կանչելով , որ  
տեսնան թէ յարեալ եմ , երբ եկան երկրպագու-  
թիւն ըրին ինձի , առաքելոց մօտիկցայ ու ը-  
սի . “ Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յեր-  
կինս և յերկրի , որպէս առաքեաց զիս Հայր և  
ես առաքեմ զձեզ . դնացէք այսուհետեւ աշա-  
կերտեցէք զամենայն հեթանոսս , մկրտեցէք զնո-  
սա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Արքոյ ,  
ուսուցէք նոցա զամենայն պատուիրանս , զոր  
ինչ պատուիրեցի ձեզ և ահաւասիկ ես ընդ  
ձեզ եմ զամենոյն աւուրս մինչեւ ’ի կատարած  
աշխարհի ” : Եւ այս իշխանութիւնս ամենուն  
հաւասար տալէս ետև՝ փչեցի անոնց մէջը ու  
ըսի . “ Առեք հոգի սուրբ , եթէ ումեք թողու-  
ցուք զմեղո՞ թողեալ լիցինոցա , եթէ զուրուք  
ունիցիք՝ կալեալ լիցի ” : Ահա այս է իմ արքա-  
յութեանս դրան փականքը , զոր տուի աշակեր-  
տացս և յաջորդաց նոցա մինչեւ ’ի կատարած աշ-  
խարհի իրենց հետ ըլլալով :

Գանք որ այս փականքը՝ դեռ աշխարհիս մէջ  
եղողներուն համար է , այսինքն՝ արքայութիւնն  
մտնելու համար հաւատացելոցս արժանաւ որ գոր-  
ծքեր ընելու կարողութիւնն և վստահութիւնն  
տուի ըսել է , որով կարող ըլլան ուղղել և  
սրբակրթելիմ ժողովուրդս և արժանացուցանել  
զանոնք աստուածատեսութեանս , որ է փառք և  
կեանք յաւիտենական : Ասով չհասկըցուիր թէ  
աստուածատեսութեանս իշխանութիւնը իրենց »

մէ կախեալ ըլլայ , զի ստեղծողն չփակուիր ու  
չժածկուիր ստեղծուածին կամաց տակը . ինչպէս  
կաւը բրուտին չկրնար հրամայել , նոյնպէս ալ  
ստեղծուածն ստեղծողին :

Այս փականքը , զոր ամենուն մէկէն տուի ,  
երկու կերպ կարողութիւն և իշխանութիւն կը  
պարունակէ . առաջինն է պաշտօն կարողանալոյ  
իմ կամքո ու պատուիրանքս ժողովոդեան քա-  
րոզելու և զոտէտները և զանուսումները սոր-  
վեցընելու , լուսաւորելու , և անոնք որ մեղաց  
կապով կաղուած ու փակուած են՝ առաքինու-  
թեան գեղերով քակելու և արձակելու . ինչու  
որ մեղքը մարդուս ազատութիւնը կը վերցընէ  
և գերութեան տակ կը ձգէ : Եւ որովհետեւ մեղ-  
քըն ալ փոխաքերութեամբ կամ նմանութեամբ  
Ա . Դրոց մէջ շատ տեղի՝ ըսուի՝ կապ , կապանք ,  
շղթայ , փակ , տուն , կնճիռն , բանտ , խաւար ,  
մառախուղ , ազտ , ախտ , բեռն , պարտք , են ,  
են . և մեղաւորներուն համար ալ կ'ըսուի՝ կա-  
պեալ , ընկղմեալ , պարտաւորեալ , մեռեալ , կո-  
րուսեալ , ատեցեալ , են : Այսպէս ալ փոխա-  
քերական բաներով քարոզելու իշխանութիւնը  
կամ կարողութիւնը կ'ըսուին փականք , և քա-  
րոզողները կ'ըսուին փականաց տէր :

Խսկ երկրորդ պաշտօնական կարողութիւնն է՝  
թողութիւն տալ կամաւ և սիրով զղացեալ  
մեղաւորաց , որ ըսել է՝ քակել զանոնք մեղաց  
կապէն , հանել մեղաց բանտէն , ազատել մեղաց  
գերութենէն : Բայց հրապարակական մեղաւոր-  
ները , որոնք որ մահացու մեղքերով բեռնա-  
ւորեալ են , չեն զղար , չեն ապաշաւեր , ու  
իրենց մեղացը մէջ յամառեալ են՝ անանկներն  
ալ կապել , բանտարկել , հերքել և 'ի սուրբ  
հաղորդութեան խորհուրդէն զրկել :

Արքայութեան փականքը այն իւրաքանչիւր բրիստոնէից քովն է , որոնք Աստուածորդւոյս սուրբ կամքը կը կատարեն ջերմեռանդ գործքեւով և անձնանուէր եղայրսիրութեամբ , ըստ որում ըսի . “ Արքայութիւնն ՚ի ներքս ՚ի ձեզ է ” : Բայց անոնք որ կ’ուզեն սուտ վարդապետութեամբ երկնից արքայութեանը բոլորովին տիրել և իւրացընել , թող չյուսան ասանկ սընոտի յուսով ագէտ և միամիտ ժողովուրդներս խաբել , ինչու որ՝ յուսով մեղանչողքը անյոյտ կը կորնչին : Քանզի այս տեղի արքայական կեանք վայելող մեծատանց համար ըսի թէ այն տեղը վիհ մեծ է ընդ մէջ մեր և ընդ մէջ ձեր :

Ուրեմն՝ անոնք որ իմ աստուածային կամացաւանդութիւնները արժանաւորութեամբ կը կատարեն , ես ալ ամենայն հաճութեամբ կ’ընդունիմ զանոնք :

Այն , արտօնութիւն տուի առաքելոցս և յաջորդաբար անոնց փոխանորդաց , ըսելով . “ Օք կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս , և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս ” : Բայց թող չհասկընան թէ առարտօնութեանը վրայ կրնան բռնութեամբ , անիրաւութեամբ , աշառութեամբ կամ կաշառառութեամբ իրենց կտմքը ՚ի գործ դնել , ու անդատապարտ մնալ յարդարադատ ‘ Դատողէն , զոր ոչ առաքեալքս ըրին և ոչ անոնց Ճշմարտաշաւիդ յաջորդները . այլ ներելի մեղաւորաց մեղացը արձակում տուին՝ ընդունեցի , և աններելի և մահացու մեղաւորաց մեղացը արձակում չտուին և կապեցին՝ ընդունեցի , որովհետեւ այնպէս էր իմ հրամանս :

Դհա սյս է արքայութեանս դրան փականքը , Ելու պարգևեցի համապատիւ աշակերտացս և

համաքարող փոխանքրդաց : իրենք գործելով և հաւատացելոցս օրինակ ըլլալով՝ փականք արքայութեան եղան իրենց մանկանց , որոնք յահեղ ատենին պարզերեսութեամբ պիտի համարձակին ըսել ինձի թէ՝ “ Ահա ես և մանկունք իմ ” :

Ոկեմ արդարութիւն է որ հայր մը իր ստացուածքը իր հարազատ և սիրելի որդւոց մէջ ու մանց շատ և ոմանց սակաւ քամնելով , զրկազատի ընէ , քաւ լիցի , այդ իմ աստուածութեանս դէմ է , իմ աւետարանիս ներհակէ է . ուրեմն կ'ըսեմ ձեզի : այս արդարութեանս և աստուածաց ործ աւանդութեանցս դէմ քարոզողներուն դէմ կեցողները ինձ հաճոյ են և ընդունելի . քանզի իմ աշակերտներս ճշմարտաքարողեն , և մնոնց նմանեացն ալ՝ ես փականք տուի առ իսեկող հաւատացելոց ճանապարհ բանալու և ոչ խաբելով փակելու , և նորանոր խօսոր աւետարանաւ գայթակղեցընելով , կորստեան փականքներ գործածելով , յիս հաւատացելոց սուտ վիշեր բանալու : Այն գուբն , որ այլոց կը բանան , իրենք պիտի իյնան անոր մէջ , թող տարակոյս չունենան :

Արդարեւ ճշմարտութեան աշակերտ չեն այն պիսիները , որոնք իրարու հետ ատելութեամբ , նենդութեամբ , մեծասրտութեամբ , պարանոց քարձրացընելով , աթոռ վեր հանելով , կ'ուզեն նախադաս սեպուիլ առանց պարծանաց գործոց : Այնչ օգուտունին այսպիսի քակտիչ , կործանիչ և պառակտող իշխանութիւնները . Ուզուէսին աթոռն ալնոտողներ եղան , քայց գպիրք և փարիսեցիք նստան : քանզի անոնք ալ ժողովրդեան ուսոց վրայ օրինաց մեծամեծ բեռներ կը բերացընէին , և իրենք մատամբ իսկ չեին մերձենարայն ծանը բեռներուն , այսինքն՝ օրինապահուա-

թեան դժուար առաքինութեանց , բայց ես այն պիսի ընթացք ունեցողխաբեթաներուն վայ կար դացի ըսելով . “ Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց , զի փակէք զարքայութիւնն երկնից առաջի մարդկան , դուք ոչ մտանէք , և որոց մտանեն՝ չտայք թոյլ մտանել ” :

Աւրեմն ճշմարտաշաւիլուղղափառ ժողովուրդ ներս թող չգայթակղին և չտարակուսին այնպիսի ստապատիր իշխանութիւններէն , քանզի կատարեալ հաւատով և հաւատք կենդանացընող դործքերով զարդարեալ հաւատացելոցս երկնից արքայութիւնը մտնալու անկախ իշխանութիւն տալս՝ յայտնի կը ցուցընեն իմ աս խօսքերս թէ “ Ամեն ամեն ասեմ ձեզ , զի՞ որ զբանն իմ լսէ և հաւատայ այսմ , որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանս յաւիտենականս և ’ի դատաստան ոչ մտանէ , այլ փոխեցաւ ’ի մահուանէ ’ի կեանս ” :

Հ . Ա կայէ առաքեալդ Պօղոս , դուն ալ արքայութեան դրան իշխանութեան փականիքը ուսնեիր . քու հոգեպարգև վիճակաց և մանաւանդ Հռովմայեցւոց կենաց ճանապարհին դուռը դժւ գացիր բացիր , եթէ՝ Պետրոս :

Պ . Եթէ արքայութեան փականաց իշխանութիւնը ես չունենայի , ինչպէս Հոգին Առաքելութեան աւելի երեելի ոքանչելիքներ դործել տուաւ Յիսուս Քրիստոս Տէրն մեր իմձեռքովս . ինչպէս որ վկայեց սիրելի եղբայրս Դուկաս աւետարանին՝ ինքն ալականատես և ականջալուր ըլլալով , որովհետեւ ան ալ հետս էր միշտ :

Տայց Պետրոս առաքեալին Հռովմերթալը և հոն քարոզութիւն ընելը չլսեցի ու չտեսայ որ վկայէի , քանզի եթէ ըլլար՝ անշուշտ պատճառ ուաւ մը թէ առաջ և թէ վերջը պիտի յիշէի :

Անոր Հռովմ Երթալուն վրայօք՝ ոչ մինակ ես՝  
այլև ոչառաքելոց գործոցը մէջ յիշուած տեղ  
մը կայ։ Ասոր վրայօք աւելորդ կը համարիմ երւ  
կարօրէն խօսիլ որովհետեւ՝ գարոյս մէջ Տ. Յով Հան շնորհազարդ քահանայն, բուն Վանցի, մա-  
կանուանեալ Վանանդ եցի, իր յատուկ տետրա-  
կովը ամեն պարագայիւք յայտնի ըրած է Պետ-  
րոս առաքեալին Հռովմ չերթալը։

Ես գեռ Հռովմ չգացած, և հոն չքարո-  
զած, Քրիստոսի Ճշմարիտ հաւատքը քարոզուած  
եր հոն, և քիչն շատէն հաւատացեալք կային։  
քանզի ես երբ պահապան զինուորաւս Հռովմ  
խրկուեցայ, հոն եղած հաւատացեալ եղբարքս  
ինձի գիմաւորեցին Ապփիայ ըսուած որդոստայ-  
նին մօտ։

Ո՞նաց որ վականիք արքայութեան ըսելը՝ ու-  
րիշ բան չէ, բոյց եթէ՝ Յիսուսէ Քրիստոսէ  
Տեառնէ մերմէ հաւատացելոց արքայութեան  
ճանապարհ բանալու, և ճանապարհ ցուցունե-  
լու իշխանութեան արտօնութիւն ունենալը ը-  
սել է։ Այս արտօնութիւնը ինչպէս ամեն ա-  
ռաքելոց, ինձ ալ տուաւ, անոր համար ըսած  
եմ։ «Որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ ըստ տըն-  
տեսութեանն Աստուծոյ . . . զոր մեք քարոզեմք  
և խրատեմք զամենայն մարդ ամենայն հոգեոր  
իմաստութեամք, զի կացուսցուք զամենայն մարդ  
կատարեալ ՚ի Քրիստոս Յիսուս, յոր և աշխա-  
տիմ պատերազմեալ ըստ յաջողութեան նորա,  
որ յաջողեալ է յիս զօրութեամք։ (Առըս ա-  
52—58 :)

Ե. — Հարցմունք ՚ի վերայ երկու գրիպար խորհրդոց =  
 ։ Տե՛ր իմ Յիսուս, քաջ գիտենք թէ երակու փրկարար խորհուրդ սահմանեցիր հաւատացելոցդ, և ով որ այն սրբազն խորհուրդները ըստ օրինաց արժանաւորութեամբ կատարելու ըլլայ, այսինքն՝ մկրտուիլ 'ի ջուր և 'ի հոգի, հաղորդիլարժանաւորութեամբ 'ի կենարար մարմնոյ և յարենէ Որդւոյդ Կատուծոյ, անանկ քը բիստոնեայն կատարեալ քիստոնեայ կը համարուի թէ ոչ, քու պաշտելի կամքդ և օրէնքդ կատարած կ' ըլլայ թէ ոչ. և այս խորհուրդներուն մէջ եթէ այլայլութիւն ձգուի և պակաս կատարուի, թերութիւն կը մտնայ անոր մէջ թէ ոչ, մեղք կը համարուի թէ ոչ, օրինազանցութիւն է թէ ոչ: Քանզի Հռովմայ եկեղեցին մը կրտութեան սւերը խորհուրդը միայն կատարեալ ըստ աւանդութեանդ կը կատարէ, բայց հաղորդութեան սրբազն խորհուրդը կ' այլայ լ. քանզի մեծ խորուի կը ձգէ հոգեորականաց և աշխարհականաց մէջ. հոգեորականաց՝ արժան կը դատէ մարմնոյ և արեանդ հաղորդուիլ. բայց աշխարհականաց՝ արժան չդատեր երկուքէն ալ հաղորդուիլ, այս միայն պատճառելով թէ՝ տուած ժամանակը չմափի գետինը, այլ միայն 'ի կենարար մարմնոյդ ճաշակել կու տոյ, և այն՝ ոչ հացէն յայնմանէ, զոր քահանայն կը ճաշակէ՝ անոր վրայ պատարագելէն ետե, այլ ծածկաբար ուրիշհացէ կը բաշխէ ժողովրդ եան, որ ծայրագոյն արատաւորութիւն է փրկարար խորհրդոյդ, զոր դուն օրհնելէդ ետքը՝ ըսիր. Կոնք կերեք, այս է մարմին իմ. արբեր՝ ի սմանէ, այս է արիւն իմ”:  
 Հռովմայ եկեղեցւոյ գլուխ պազը այս արա-

տաւորութեան վրայ կը համարձակի՞ քարոզելու  
երկոտասան առաքելոց քարոզութեամբ հաւա-  
տացեալ քրիստոնէից՝ ըսելով. թէ որ կրկին չդառ-  
նաք, իմեկեղեցւոյս սահմանագրութեան խոր-  
հրդոյն չհաղորդուիք, իմոմանց ինքնաստհման  
հրամաններուս կատարեալ հլու և հնազանդ չը-  
լաք՝ կատարեալ քրիստոնեայ չք, ու դեռ հե-  
թանոսութեան մէջէք, են, են. և ինչպէս որ  
կ'ըսէ՝ գործովալ կը ցուցունէ միշտ :

Պ. Ախալեալ է մեծապէս, գիտեմ. քանզի այդ-  
պիսի ինքնահնար սահմանները և կարծիքները  
բոլորովին հակառակ են իմածասահման երկու  
փրկարար անարատ խորհրդոցս, որոց առաջինին  
համար ըսի. “Որ ոչ ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ՝  
ոչ կարէ մտանել յաբքայութիւնն Կատուծոյ”:  
Եւ այս մկրտութեան խորհուրդն ալ ամենէն ա-  
ռաջես կատարեցի իմ վրաս՝ Յորդանան գետին  
մէջ Յովհաննէսէն մկրտուելով, ուր և Հայրն  
իմ Կատուած հաճեալ ընդ այս խորհուրդս՝ եր-  
կինքը բացաւ, Հոգին Կատուած իջուց վրաս և  
ինքն ալ ՚ի վերուստ վկայեց ըսելով. “Դա է  
որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ”:

Երկրորդ փրկարար խորհուրդիս համար ալ  
քանիցս անգամ կրկնելով ըսի. “Վյեն ասեմ  
ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ և արք-  
ջիք զարիւն նորա՝ ունիք կեանս յանձինս”:  
Կամ թէ. “Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զա-  
րիւն իմ՝ ունի զկեանս յաւիտենականս, և ես  
յարուցից զնա յաւուր յետնում. զի մարմին  
իմ Ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ Ճշմա-  
րիտ ըմպէլի է”:  
Կամ թէ. “Որ ուտէ զմարմին  
իմ և ըմպէ զարիւն իմ՝ նա յիս ընակեսցէ և  
ես ՚ի նմա”:

Վհամասոնք պատուիրեցի ժողովորդեանս, և

այս այս փրկարար՝ խորհուրդս գործով ալ կատարեցի զատկական տօնին՝ վերնատան մէջ, անխմանը հացը օրհնելով տուի աշակերտացս փոխանակ մարմնաց, ըսելով. “ Առէք կերէք, այս է մարմին իմ, որ վասն ձեր բաշխի ’ի քաւութիւն և ’ի թողութիւն մեղաց ” : Եւ անապական այսինքն անջուր գինին ալ օրհնելով տուի անոնց որ խմեն այսպէս ըսելով . “ Արբէք ’ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ վասն ձեր և բազմաց հեղանի ’ի քաւութիւն և ’ի թողութիւն մեղաց . ( Ապք. Եղ. 26 : )

Եւ իմ փոխանորդացս ալ պատուիրեցի, որ այս խորհուրդս առանց այլայլութեան կատարեն, ըսելով. “ Զայս արարէք տու իմոյ յիշատակի ” : Ի վերջոյ խորհուրդը կնքեցի ըսելով. “ Ոչ յաւելից ըմպել ’ի բերց որթոյ, մինչև լցի արքայութիւնն Աստուծոյ ” : Ո՛վ յիմաքութեան նոցին, որթը ի՞նչ կը բերէ, գինի՞եթէ ջուր : Ահա այս աւանդութեանս վրայ պարտաւորեցի ամեն յիս հաւատացեալները, որ միշտ հաղորդուին այս սրբացուցիչ խորհըրդովս, որպէս զի ընդ իս մասն և հաղորդութիւննենան : Աւրեմն՝ թող չհամարձակին այս իմ աճային խորհուրդներս անթերի և արժանաւորութեամբ կատարող ազգերուն՝ վերստին իրենց մարդահաճոյ և ճշմարտութեան դէմ եղած օրէնքներով և կարծելի դատմամբ և նորանորսահմանադրութիւններով գայթակղութիւններ տալ, ապա թէ ոչ անդատապարտ չեն կրնարմնալ առաջի Աստուծոյ և մարդկան :

Հռովմայ պապերը թող ըրոնադատեն ուղղադաւան եկեղեցիները ( որք ’ի յաւիտենից հիմնեալ և հաստատեալ են իմ ընտրեալ և աճա-

շունչաշակերաներէս ) հռ.ովմէտկան ինքնապարծ  
և ինքնասահման գայթակղութեան եկեղեցիին  
հնաղանդեցընելու , այլ մանաւանդ եթէ ճշմար  
րիտ հետեւողը են ճշմարտութեան կամացս , ու  
բոնք պարունակեալ են Աւետարանիս մէջ , թող  
իրենք խոնարհին ածառահման սիրովս հնաղան  
դիւ ուղղափառ եկեղեցեաց . քանզի այս կերպ  
կողմնական փառասիրութիւն , ինքնահաւան եւ  
սութիւն , մեծամիտ կամապաշտութիւն , ինքն  
ագիւտ միապետութիւն , գայթակղութեան  
իշխանութիւն , անապացոյց գահակալութիւն ,  
խոռվայոյդ հոգեւորականութիւն , անիրաւացի  
գատողութիւն , բռնի գատաւորութիւն , և 'ի  
սիրոյ թափուր առաքելագործութիւն՝ ոչ առա  
քեալներս իրենց բոլոր առաքելագործութեանց  
մէջ ցուցըցին միմեանց , և ոչ իսկ իրենց ժու  
զովուրդը ըստ հաւատոյ մասին իրարմէ բամբա  
սուեցան . քանզի անոնք աղէկ ճանցան թէ  
հաւատաքը մարդուս գատողութենէն չկախուիր ,  
մարդս չկրնար ճշմարտացեալ հաւատքը նորէն  
սահմանել՝ վրան աւելցընելով կամ պակսեցը  
նելով : Ես իմ առաքեալներս հաւատոյս քարո  
զիչ խրկեցի յաշխարհ և ոչ հաւատոյ սահման ,  
և կամ սահմանող , և կամ իմ սահմանած հա  
ւատոյս վրայ սահման աւելցընող ու փրկարար  
խորհուրդներս այլայլող :

Հ. Դուն ի՞նչ ըրիր այս փրկարար յիսուսա  
ւանդ խորհրդոց վրայօք , ո՛ ճշմարտութեան ա  
շակերտգ Պօղոս , կրնայ մարդս , ո՛վ ոք և իցէ ,  
այս տիրասահման խորհուրդները այլայլել :

Պ. Ո՛չ , ո՛չ ամենելին . քանզի ածընդդէմ  
հերձուածողութիւն է ածառահման խորհուրդն  
երուն որբաղան գործածութիւնը այլայլել . ա  
ռաքելական եկեղեցեաց անհրաժեշտ ողարարն

Ե՞ Պրիստոսի խորհուրդները անարատութեամբ  
պահել միշտ , ինչպէս որ ես ալ հաղորդութե  
խորհրդոյ վրայօք այսպէս ըսած եմ . “ Օի ես  
ընկալայ ’ի Տեառնէ , զոր և ձեզն աւանդեցի ,  
եթէ Տէր Յիսուս ’ի գիշերին յորում մատնէր՝  
առ հաց , գոհացաւ , երեկ և ասէ . Այս է  
մարմին իմ որ վասն ձեր . զայս արարէք առ  
իմոյ յիշատակի : Այնպէս և զբաժակն յետ ըն-  
թրեացն առ և ասէ . Այս բաժակ նոր ուխտ  
է իմով արեամբ . զայս արարէք քանիցս անդամ  
թէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք ”  
ևն : Վասն որոյ առ ’ի զգուշութիւն հաղորդու-  
ղաց պատուիրելով ըսի . “ Այսուհետեւ՝ որ ու-  
տիցէ զհացս , կամ ըմպիցէ զբաժակս Տեառն  
անարժանութեամբ՝ պարտական լիցի մարմնոյ և  
արեան Տեառն . փորձեացէ մարդ զանձն իւր և  
ապա ’ի հացէ անտի կերիցէ և ’ի բաժակէն  
արբցէ ” , ևն :

Ը. — Հարցմունք ’ի վերայ անսխալութեան Հոռվայ  
պատկիցն ըստ իւրեանց կարծեացն :

Ն. Տէր իմ Յիսուս , կարելի՞ է որ՝ հողածին  
մարդս ինչ աստիճանի և ինչ հասակի կամ ինչ  
վեճակի մէջ որ ըլլայ , թէ աշխարհական և թէ  
հոգեորական , քանի որ ’ի մարմնի է , քանի որ  
իւր կենաց ասպարիզին մէջ բնութեան երեք  
անյագ թշնամեաց հետ պատերազմելու պարտա-  
ւորած է՝ կրնայ Աստուծոյ ողէս ամեննեին անսը-  
խալ մնալ մինչեւ ցվախճան աստի կենաց , և  
պարծենայ յայտնապէս քան զամենայն Ադամայ  
որդիս , ըսելով թէ՝ Ես միայն ընտրեալ , սըր-  
բեալ , անարատ , անմեղ , և բոլորովին անսխալ

և Աղերազանց եմքան դամենայն մարդիկ և մասնաւանդ քան դհամայն հոգեւորականացն դաս :

Վհա՞ այս ոգւով Հռովմայ պապը պարծենալով, կը համբաւէ զինքը բոլոր աշխարհի մէջ թէ՛ Ես եմ միայն անսխալ հոգեւոր իշխան և գլուխ և հոգուապետ ընդհանուր եկեղեցւոյ, և անսխալութիւնը հտատատելու համար՝ Պետրոս արաքեալն ալ անսխալգատելով՝ իր իրաւունքը կը հաստատէ : Որովհետեւ, կ'ըսէ, Պետրոս առաքելոց իշխան և գլուխ ըլլալով՝ ան մինակ անսխալ և անարատ մնաց միշտ, ուստի իրեն իշխանութիւնը յաջորդող Հռովմայ պապերն ալ անսխալ և անարատ են միշտ ամեն կերպիւ և սմեն գործի մէջ : Վսով փոխանակ իւր ժողովուրդը միաբանելու և աւետարանական առաքինութեամբ լուսափոյլելու՝ իրարմէ անջատելու և բաժանելու պատճառ կ'ըլլայ, և ուրիշ քրիստոնեայ ազգաց ալ մեծամեծ գայթակղութիւններ կու տայ . որով փոխանակ պատիւ գըտնալու՝ անարգանաց և բամբասանաց դուռներ կը բանայ իր վրայ միշտ :

Պ. Կը սխալին չարաչար, ինչու որ անսխալ մարդ չկրնար ըլլալ . զի Ախոք մարդկան ՚ի բնուստ անտի ՚ի խնամն չարին հաստատեալէ : Այն մարդը, որ իւր կեանքը աստուածահանույ գործքեւ ըսվ կը վերջացընէ, որքան որ հնար է յաղթելով բնութեան՝ առաքինութեան զէնքերով հաւատոյ ասպարիզին մէջ պստկը առած աշխարհէս կը հրաժարի և արժանի կ'ըլլայ յաւիտենական փառացս մէջ մօնալու, ան մեծ կը համարուի աշխարհիս մէջ համբաւեալ սուրբերէն, քանզի անոնք դեռ պատերազմի մէջն են :

Եթէ Հռովմայ պապը Պետրոսի անսխալութեամբը կը պարծենայ ինքզինքը աշխարհիս մէջ

անսխալհռչակելու համար, կը սխալի ։ Ինչու որ  
ամեն առաքեալներէն շատ Պետրոս սխալեցաւ . . .

Հ. Արելի աշակերտ Յովհաննէս, դուն  
լոնէկըսես ասոր, այն որ մարդ է՝ կարելի՞ է որ  
իր կենացը մէջքնաւին անսխալմնայ :

Պ. Ո՛չ, ոչքնաւ, անոնք որ ատանկ դատողուն  
թեամբ իրենք զիրենք անսխալկը համբաւեն աշ-  
խարհիս մէջ՝ կը սխալին . վասն որոյ և ես ըստ  
տէրունեան ճշմարտաւնդ բանից վկայած եմ  
Կաթողիկեայց առաջին Թուղթիս մէջ որ առ ա-  
մենայն քրիստոնեայ ազդու, ըսելով . “Եթէ ա-  
սիցեմք եթէ՝ մեզս ինչ մեք չունիմք՝ զանձինս  
խաբեմք և ճշմարտութիւն ՚ի մեղոչոցոյ, եթէ  
ասիցեմք ոչ ինչ մեզաք՝ սուտ առնեմք զնա և  
բանն նորա ոչ է ՚ի մեղ” . (ա Յով. ը. 10 :)

“Որ ասէ եթէ ՚ի լոյս իցէ և զեղքայր իւր աշ-  
տիցէ՝ սուտ է, ՚իխաւարի է տակաւին” :

Թ. — Հարցմունք Հոռմայ պատերուն երկնից  
արքայութեան մեջն ըստ աշխարհայնոյս պեղծախելուն վրայ :

Հ. Տէր իմ Յիսուս, արդեօք կարելի՞ բան է  
որ քու սուրբ արքայութեանդ մէջէն՝ մահկա-  
նացու մը ուրիշ մահկանացուի դրամով տեղծա-  
խէ, և կամ ոյն տեղը ստանալէն ետեւ՝ եթէ վե-  
րստին մեղք գործէ, կամ մեղքը յաշխարհէս ել-  
լէ՝ անպատճառ իրաւունք կ'ունենայ նոյն տեղը  
ժառանգելու . Եթէ այս ստոյգ է, ուրեմն քու  
արդարութեանդ դատաստանը անոր համար պի-  
տի ըլլայ . ուրեմն՝ միայն բազմատաղանդ և մե-  
ծատուն մարդիկ պիտի մտնան քու արքայութիգ :

Բայց թէ հին և թէ նոր ածապատում գրեանց  
մէջ այս անհաւատալի և մտաց անըմբռնելի իշ-

խանութեան վրայօք ամենեին յիշատակութիւն  
մը չկայ , և ո՞չ հոգեգումար սրբազան ժողովոց  
հարք ասոր վրայ բան մը սահմանած են , ո՞չ ալ  
միւս ամեն ազգաց մէջ առ կենսավաճառութիւր  
կայ , բաց ՚ի շուովմայ պապերէն , որոնք զայս  
անըուր և ծաղքելի իշխանութիւնը իրենց գերա-  
զանց սրբութեան միայն իւրացնելովկը դործա-  
ծեն , որպէս թէ երկնի և երկրի իշխանութիւնը  
բոլորովին իրենց յանձնուած է . քանզի ուղած-  
նուն պէս արքայութեան մէջէն , յորմէ իրենց  
բաժին իյնայն ու չինալը դեռ յայտնի չէ կազով  
տեղկը ծախեն , և այն միայն իրենց երկրպագու-  
ժողովրդեան մէջ եղած մեծատանց , որոնց հա-  
մար , Տէր իմ Յիսուս , քու ոուրբ և պաշտելի  
բերանդ դժուար է ըսաւ արքայութիւնդ մտնա-  
լու . բայց չեմ գիտեր թէ արդեօք իրենց առա-  
քինի և հոգւով աղքատաց ուր պիտի տեղցու-  
ցընեն դժոխքէն ՚ի զատ , որոնք ոք կարողութի-  
չունին առատ գանձով արքայութեան մէջէն ան-  
հրաժեշտ կալուածք ունենալ , և որոնց քո ան-  
սուտ բերանն խոստացաւ թէ՝ Արանի՛ աղքատաց  
հոգւով , զի նոցա է արքայութիւնն երկնից :

Պ. Յայտնի սխալեալ են . քանզի բոլորովին  
ներհակ են այդպիսի ամբարտաւանութեան ինք-  
նիշխան իշխանութիւնները իմ Ճշմարտաւանդ  
պատգամացս , զորոնք յայտնած եմ աշխարհի  
վասն փառաց արքայութեան արժանաւորաց և  
անարժանից , և որոնք միշտ կը հոչակուին Ճշմար-  
տագաւան եկեղեցեացս մէջ ՚ի ընտր անմեղգա-  
ռանցս . Ոչ ապաքէն ըսած եմ . “ Ոչ ոք կարէ  
մտանել յարքայութիւնն երկնից , եթէ ոչ ինե ” :

“ Ես եմ դուռն կենաց , Ես եմ ճանապարհ  
և Ճշմարտութիւն և կեանք , ընդ իս եթէ ոք  
մտցէ , կեցցէ ; մոցէ , և ելցէ , և ճարակ գտցէ ” :

“ Ես լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս՝ ’ի խաւարի մի մնացէ :

“ Ես եմ որթ և դուք ուռ . որ հաստատեալ է յիս և ես ’ի նա, նա բերէ պտուղ յոյժ, զի առանց իմ ոչինչ կարեք առնել ” :

“ Եկայք առ իս ամենայն աշխատեալք և բեռ նաւորք, և ես հանգուցից զծեղ ” .

“ Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան մոանել, քան մեծատան՝ յարքայութիւնն երկնից ” .

Ասոնք ամենը իմ ընտրեալ աւետարանչացս և աշխարհոքարող առաքելոցս ձեռօք անմահացուցեր եմ ուղղադաւան եկեղեցեացս մէջ, թէ ինձմով այսինքն յիս հաւատալով և իմ կամքս կատարելով, անտարակոյս կ' արժանանան երկնից արքայութեանս : Ով յիմարութեան մարդական, մի թէ հնա՞ր է դեռ ’ի մարմինի եղողներուն, յաւիտենական կենաց արժանացընելու յուսով, դրամով մեղապարտից, պատժապարտից և մահապարտից միանգամայն ներողութիւն տալ և արքայութեան մէջէն ալ կալուած ( մէլ ) ստանալ տալ :

Ես դանձանակիս դիմացը կայնելով, ուղեցի տեսնալ թէ ով կամաւոր ողորմութիւն պիտի ձգէ անոր մէջ, բայց ըստի թէ ո՛վ որ այսքան դրամ տայ՝ յաւիտենական կենացս մէջէն այսքան կանգուն տեղի տէր պիտի ընեմ զինքը, կամ ապագայ մեղաց և պատժոց ներողութիւն պիտի տամ : Ես առողջներուն շատ կամսակաւ տուրքը չը չդիտեցի, այլ ինչ սրտով և ինչ հաւատով տալերնին զննեցի, որոնց մէջէն ամենէն քիչ ձգողը՝ ամենէն առաւել ընդունեցի և ամենէն հաճելի եղաւ ինձ . ինչու որ՝ շատ նետողները իրենց շատ ստացուածքէն ձգեցին, բայց քիչ ձգող այրի կինը՝ ինչ որ ուներ՝ կատարեալ

Հաւատով և ջերմեռնանդ սիրով ձգեց , անոր համար ըսի . “ Արդարեւ այրին այն տառապեալ շատ էարկ քան զամեննեսին ’ի գանձանակն ” :

Ես վասն արքայութեան ողորմութիւն տուող ներուն ըսի . Երբ ողորմութիւն կու տաս հոգւ ոյդ փրկութեան համար , անանկ տուր որ մարդ չիմանայ , որ ’ի փառս մարդկան չհամարուի , այլ ’ի փառս Վատուծոյ , անանկ որ՝ եթէ ձախ ձեռքքդ տայ , աջ ձեռքդ չիմանայ , աջ ձեռքդ տայ նէ , ձախ ձեռքդ չիմանայ . քանդի անոնք որ ’ի ցոյց մարդկան կու տան՝ ’ի ցոյց մարդկան կ’ արդարանան , իրենց կարծած արքայութիւնը այն քան է , զի այն իսկ են վարձք նոցա , ըսի :

“ Բռունք մտանեն յարքայութիւնն երկնից ” , ըսի . միթէ այս բռունքը Հռովմայ սրապերուն բռնաւորութեամբքը արքայութիւնը մտնալը կը հասկընան , ո՞չ , ո՞չ . այլ հաւատով զօրաւորները , յուսով հաստատ եղօղները , սիրով աշխոյժ եղօղները , հոգւոյն թշնամեաց յաղթօղները , մոլութիւնները ատցղները պէտք է հասկընալ : Որ ու նիցի ականջո լսելոյ՝ լուիցէ :

Աւելմն՝ այն որ ես չպատուիրեցի , այն որ ես շաւանդեցի , ոչ աւետարանիշներս գրեցին , ոչ աշակերտներս քարոզեցին , և ոչ անոնց փոխանորդ դահերեցները վարդապետեցին՝ սուտ է , և խաթէական հնարք , ու գիւտ շահախնդրութեան : Պետրոս առանկ խաթէական հնարքով ժողովուրդը կողոպտելու , հարստաց մեղանցմանց ընդարձակութիւն տալու , արքայութիւնը գեռչտացած՝ ուրիշի վաճառելու վարդապետութիւններ չորաւ , և չհամարձակեցաւ իսկ այս պիսի խորհուրդներ իր մաքէն անցընել . ինչպէս որ յայտնի է առաքելոց Պործոց գիրքէն և իւրեն իսկ Պետրոսի երկու թուղթերէն , զորոնք

Գրեց Վասրեստանի և Հեթանոսաց մէջ ցրուած քրիստոնէից, որոնց մէջ ասանկ խաբէ ական վարդապետութիւններ չկան. քանզի ապագայ մեշտաց փոխարէն ոչ դրամ կ' առնուի և ոչ պատժապարտից ներողութիւն կը տրուի, ինչպէս որ չուովմայ պապերը կու տան իրենց միամիտ ժողովրդեան. տետրակներ, կոնդակներ տարածեալ մէջերնին. որոնցմով տասը տարիներով ներողութիւն կու տան ժողովրդոց. որ եթէ առանց ազօթքի, առանց խոստովանութեան և հազրուգութեան մնան, և իրենց դաւակները մղբտուելէն և հազրուգուելէն առաջ մեռնին՝ չյուսահամին որ արքայութէնէ կը զրկուին: Վյն աստիշան կը ներհակին ճշմարտութեան դէմ, որպէս թէ Առը Նըրորդութիւնը միայն դաւանող ժողուրդը արքայութիւն չկրնար երթալ. այլ արքայութիւնը հռովմէադաւան և պապադաւան ժողովրդոց համար է. անսնց յատուկ է տին տեղ, կըսեն, ևն:

Վվմեծի և դմնեայ եղբայրատեցութեանս. ահա քեզի ածաբանութիւն մը, որուն մէջ Վատուծոյ կամքը միայն պակաս է: Թո՛ղչխարուին միամիտ ժողովաւրդը ասանկ լոյնարձակ ճանապարհներէն, որ ՚ի կորուսոը կը տանի, թո՛ղչյուսան իրենց հարստութեամքը երկու կենաց մէջալ արքայութեան երջանկութիւնը վայելւու. քանզի ըսի. “Ուզ ունին զինչս բազում դժուարաւ կարեն մտանել յարքայութիւնն երկնից”: Վեռաւ մեծատունն և թաղեցաւ ՚ի դըմուս, մեռաւ և ազքատն ՚ո ազարոս և նստաւ ՚ի գոգն Աբրահամու:

Երկնից արքայութեան սահմանը, որքանութիւնը, ձևակերպութիւնը, լոյնութիւնը, խորութիւնը, և վայելութեան որքանութիւնը դեռ

մէկու մը չյայտնուեցաւ և օրինակ մը չորուեցաւ ՚ի մարմնի եղող հողածնաց մէկու մը : Ապա՝ ի՞նչպէս երկրաւոր թագաւորաց հոյակապ պալատ ներուն նմանցընելով, անձառելի և անիմանալի կենաց սահմանը՝ արծաթասէր ոգւով մոլեալ՝ իրենց ստապտուիր վարդապետութեամբը լարախալ կընեն և կը վաճառեն, և որպէս թէ՝ ՚ի հաստատութիւն ծախսծ ասլրանքնուն, այսինքն՝ արքայութեան մէջէն ծախսած տեղին՝ մաւրհակ (հէօճճէլ) մը ալ կու տան գնողներուն :

Աւաղ յիմարութեան նոցա . չլսէ բանսարիկուն այս գիւրին առուտուրը . աղա թէ ոչ բոլոր արքայութիւնը կրնայ ծախսու առնել պապէն, ինչու որ սատանան աշխարհիս ամենահարուստ իշխանն է :

Ապա՝ զգուշացէք . ո՛ հաւատացեալք, ամեն հոգւոյ մի հաւատայք, շահախնդիր վարդապետութեանց մի հետեւիք, սուրբ պատգամացս հետեւցէք որ կըսէ . “Աքբայութիւն՝ ՚ի ներքս ՚ի ձեղէ” : Ոչ ապաքէն իմ աշխարհաքարոզ աւետարանիս մէջ միշտ կըքարոզի թէ՝ “Լրանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւնն երկնից, երանի սդաւորաց, զի նոքա մսիթարեսցին, երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն, երանի այնոցի որք սուրբք են սրտիւք, զի նոքա զիստուած տեսցեն, երանի խաղարաբաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին . (Ապա : Ե. Յ :

Ահա ասոնք են արքայութիւնս ժառանգողները . եթէ քրիստոնեայ մը մինչև իր կենաց յետին շունչը բարի գործքերով սուրբ արքայութեան պատրաստուած չլլայ՝ ի՞նչպէս կրնայ իմ

յաւ իտենական փառացս հաղորդ և ժառանգաւոր գտնութել։ Անկանացու մը իւր մեղայակ կենաց մէջ չկրնար վատահիլ ըսել թէ ես այս ինչ կամ այն ինչ գործքերով արբայութեան արժանի պիտի ըլլամ անշուշտ։ Օրինակ առէք զիուդան, որ երկուտասան սիրելի և ընտրեալ աշակերտացս մէկն էր, և մինչև Վւագ Հինդ շաբթի իրիկուն՝ արբայութեանս ժառանգ գըրուած էր, բայց յաղթեցաւ արծաթսիրութե մոլութէն, ուստի և յաւ իտեանս կորսուեցաւ։

---

Ճ. — Հարցնունք ՚ի վերայ բովանդակ Հագոյն Արքոյ։

Հ. Տէր իմ Յիսուս, մենք, այսինքն Հայոց, Յունաց, Ասուսաց, Վարւոց, Արտաց, և այլոց քրիստոսասահման և առաքելահիմն սուրբ եկեղեցիները Եմենասուրբ Հոգւոյն բղուումը 'ի Հօրէ բղսեալ կը դաւանեմք, և բաշխեալ երկնաւորաց և երկրաւորաց 'ի ձեռն Որդւոյդ Վատուծոյ։ Քանզի Հայոց ըսելով՝ Որդիդ 'ի նմա կը դաւանեմք, Որդի ըսելով՝ Հայոց 'ի քեզ կը դաւանեմք, որպէս և քո իսկ պաշտելի բերանդ վեր կայեց և յայտնեց աշխարհի թէ՝ “ Հայոց յիսէ և ես 'ի Հայոց ”։ Ունք ալ ահա այդպէս դաւանելով՝ կը զգուշանամք ըսել բղուումն 'ի Հօրէ և յՈրդւոյ, որով զանազանութիւնն մը ձգած ըլլանք միոյ աստուածութեանդ մէջ, և երկու սկիզբն տուած ըլլանք միոյ անսկզբնաւորութեանըդ ։ Եթէ սկիզբն երկու դաւանած ըլլանք՝ ապա ամեն աստուածային գոյութիւնքդ ալ երկուքի բաժնած կ' ըլլանք, այսինքն՝ երկու իշխանութիւնն երկու հայրութիւն, երկու միտրութիւն և երկու կամք դաւանած կ' ըլլանք, որ անշուշտ աստուած։

ընդդեմ մոլորութիւն է և անհնարին հերեւ  
տիկոսութիւն :

Հռովմայ եկեղեցին մեր դաւանածին ներհաւ  
կը կը դաւանէ , այսինքն զբղխումն Հոգւոյն Աս-  
տուծոյ՝ կը դաւանէ 'ի Հօրէ և յՈրդւոյ , վասն  
որոյ և ուրիշ ուղղագաւան եկեղեցիները՝ որ-  
խալեալ , մոլորեալ և հերեւտիկոս կը դատէ . և  
շատ վէճի և հակառակութեան դուռներ կը բա-  
նայ ուղղափառ աղդաց մէջ , և թշնամաբար կը  
վարուի հետերնին . անանկ որ՝ Առւրբ Երրոր-  
դութիւնդ պաշտող և դաւանող քրիստոնեայ  
աղդերը՝ Առւրբ Երրորդութեանդ հակառակ քա-  
րսզելով , կ'ըսէ . Ավոր չդաւաներ Հոգւոյն Աըր-  
բոյ բղխումը՝ 'ի Հօրէ և յՈրդւոյն՝ Արդւոյն Աստուծոյ աստուածութեան նուռաստութիւն մը  
կամ փոքրկութիւն մը տուած կ'ըլլայ , վասն ո-  
րոյ այնպիսի քրիստոնեայք կատարեալ քրիս-  
տոնեայ չեն համարուիր , կ'ըսէ , և այլ ծանր  
ծանր անտեղի խօսքերով աղդաց մէջ խռովու-  
թիւններ և ատելութիւններ ձգելու պատճառ  
կ'ըլլայ միշտ :

Պ. Ախալեալէ գիտեմ . քանզի բնաւին անհիմն  
է այդ դատողութիւնը և բնաւին ընդդեմիմ  
Հոգեյայտնութեանս , զոր աւետարանեցի՝ աշու-  
կերտացս ըսելով . “Եւ ես աղաչեցից դայր՝ և  
այլմիմիթարիչտացէ ձեղ , զի ընդ ձեղքնակեսցի  
'ի յաւիտեան , դայդին ճշմարտութեան , զոր  
աշխարհս ոչկարէ ընդունիլ , զի ոչտեսանէ զնա  
և ոչճանաչէ զնա , բայց դուք ճանաչէք զնա զի  
առ ձեղքնակեսցի և ընդ ձեղ եղեցի” . (Ծովն .  
Ժդ . 16:) Արո՞ւ աղաչեցի , չչոր Հօրու . ինչու  
համար աղաչեցի , չչոր Հոգին Առւրբը իջեցը-  
նելու համար , որ ըսելէ միջնորդութիւն ըրի  
առ Հայր , և միջնորդութեամբս էջ Հոգին 'ի

դասս առաքելոց : ով օրու միջնորդ կ'ըլլայ , և  
ավորու աղաջանքը կ'ընէ . ոչ ապաքէն ըսած եմ .  
“Օի Հայր իմ մեծ է քան զիս ” : կամթէ “Հու-  
գին Սուրբ , որ 'ի Հօրէ ելանէ ” :

Եւ կամ “ Խխիթարիչ Հոգին Սուրբ , զոր ա-  
ռաքեցէ Հայր յանուն իմ՝ նա ուսուցէ ձեզ  
զամենայն , որ ինչ ասացի ձեզ և յիշեցուսցէ  
ձեզ ” : (Յով . ժդ . 26 : )

“ Բայց յորժամ եկեցէ մխիթարիչն , զոր ես  
առաքեցից ձեզ 'ի Հօրէ , զՀոգին ճշմարտութե՛ն ,  
որ 'ի Հօրէ ելանէ՝ նա վկայեցէ վասն իմ ” .  
(Յով . ժե . 26 : )

“ Ահա ես առաքեմ զաւետիս Հօր իմոյ 'ի  
ձեզ , և գուք նստարուք 'ի քաղաքիս յԵրուսա-  
լիմ մինչև զգենուցուք զզօրութիւն 'ի բար-  
ձանց ” : (Ղուկ . իդ . 49 : ) “ Օւետիս Հօր ի-  
մոյ ” , ըսի , և ոչ 'իմ . “ Օօրութիւն 'ի բար-  
ձանց ” , ըսի , և ոչ յինէն , այլ ինև :

“ Յորժամ մատնեսցեն զձեզ , մի՛ հոգայցէք  
թէ որպէս կամզի՞ն չսօսիցիք , զի տացի ձեզ  
'ի ժամուն յայնմիկ զինչ չսօսիցիք զի ոչ գուք  
եցէք որ չսօսիցիք , այլ Հոգին Հօր ձերոյ , որ  
չսօսիցի 'ի ձեզ ” : (Վապի . ժ . 19 : )

Այսքան յայտնի Հոգեճանօթութե՛ն վրայ , ոչ  
ըուն բղխման կամ ելման յիշատակութիւնը միշտ  
'ի Հօրէ առնելով կը ծանուցուի , ալ ասոր վրայ  
ինչ արժան է նորաստեղծ հոգի բղխեցընել . մէկ  
ջուրը քանի՞ բուն աղբիւրէ կը բղիսի , մէկ լրսոր  
քանի՞ բուն արևէ կը ծագի : Ո՞վ ծանօթացոյց  
զիս աշխարհի նախ քան զծնունդս , ոչ ապաքէն  
Հօր Կստուծոյ Կմենասուրք Հոգւոյն տեղա-  
տուութեամբ ծանօթացայ մարդարէից , թէ՛  
“ Ահա կոյս յղասցի և ծնցի որդի ” , ևն :

Յումմէ էջ Հոգին Սուրբ իմ վրաս Յոր-

դանանու մէջ, կամ յումմէ ել, և կամ յումմէ բղխեցաւ . ոչ ապաքէն 'ի Հօրէ Ամենակալէ . Ոիթէ նոյն Հայրառաք Հոգին իւր բղխման կամ ելման տեղը փոխեց , կամ թէ Հայրս իւր ան փոփոխելի և անայլայլելի բնութիւնը փոխեց կամ այլայլեց . Հայրական անձառելի սկզբնաւորութիւնը՝ նորէն Որդւով չսկզբնաւորուիր . ոյլ Որդւոյն և Հոգւոյն սկզբնաւորութիւնը 'ի Հայրական տնսկիզբն սկզբնաւորութենէն է . Ո՞լտուաւինձ իշխանութիւնը . ոչ ապաքէն Հայրը . որու Արդին եմես . ոչ ապաքէն Հօր . Որդին 'ի Հօրէ կ'ըսուի , և ոչ՝ Հայր յՈրդւոյն , Հոգին 'ի Հօրէն կ'ըսուի , և ոչ՝ Հայր 'ի Հոգւոյն , ծընունդ Որդւոյն 'ի Հօրէ կ'ըսէք , և ոչ՝ ծնունդ Հօր յՈրդւոյն . Ուրեմն յայտնի է որ Որդւոյն և Հոգւոյն ելումը կամ ծնունդը 'ի Հօրէ է , և 'ի Հօրէն կը սկզբնաւորի . ըստ որումը ըսի . “Եթի Հօրէ և եկի յաշխարհ , դարձեալ թողում զաշխարհ և երթամ առ Հայր ” : Եւ Հոգւոյն համար ալ ըսի . “ Հոգին ճշմարիտ , որ 'ի Հօրէ ելանէ ” :

Դիտեմ այնպիսի վարձկան հովիւներ շատ կան , որոնք իրենց իշխանութիւնը անկախ և աղատ պահելու համար՝ ասանկ կամաց դէմ հաւատոյ վէճեր կը բանան , որ իրենց կամացը ծառայեցուցած ժողովուրդէն առաւել պատիւ գտնան , ռաքքի , ռաքքի կոչուին : Ամենախն չեն մտածեր թէ ես ինչպատուիրեցի իրենց . “ Ոիրեցէք զմիմեանս ” , ըսի , “ որպէս ես զձեզսիրեցի ” : “ Քարոզեցէք և ասացէք ” , ըսի , “ թէ մերձեալ է արքայութիւնն երկնից ” : “ Օհիւանդս բժըշկեցէք , զբորոտս սրբեցէք , զդես հանէք , ձրի առէք և ձրի տուք ” : “ Որ ասասցէցեղայր իւր մորոս՝ պարտաւոր լիցի գեհենի հրոյն ” : Բայց

արդի Պետրոսիւ և Պօղոսիւ պարծենցողք փո-  
խանակ այս կենաց պատուիրանացս՝ զմիմեանս  
կ' ատեն՝ հեթանոս և բազմաստուած տարրա-  
պաշտ աղգաց պէս, արքայութեան դուռը և  
վրկութեան ձանապարհս խարէութեամբ իրա-  
րու դէմ կը փակեն, իրենք մտնալու յոյս չու-  
նին, և անոնք որ յուսովեն ինեւ մտնալու՝ ան-  
յուսութեան դուռ կը քարոզեն. Ուր են իմ  
պատուիրած բժշկութիւններս, ուր են այն ըս-  
քանչելեաց շնորհները. չ որ սիրոյ և խաղա-  
ղութեան նուազութիւններէն բարձուած են,  
թերահաւատութենէ խափանուած են.

Իս պատուիրեցի. “Ո՞յ ստանայք ոսկի, մի՛ ար-  
ծաթ, մի՛ պղինձ ’ի գօտիս ձեր, մի՛ պարկ ’ի ձա-  
նապարհի, և մի՛ երկուս հանդերձս. մի՛ կօշիկս,  
մի՛ ցուպ, զի արժանի է մշակն վարձու այսինքն  
կերակրոյ իւրոյ”.

Առովմայ պապերը՝ ոսկի և արծաթ ամեննեին  
գօտիներնուն մէջ չեն պահեր. քանզի իրենց ան-  
բաւ հարստուիները գանձերու մէջ կը պահեն.

Կօշիկ չունին ուաքերնին, քանզի երկիրը ա-  
նարժան դատուած է լինել պատուանդան իրենց  
ուսից, ալ մանաւանդ ոտքերնին խաչակիր պաշ-  
տելի պատուանդան ըրած են քրիստոսապաշտ  
ժողովրդեանս. ըստ որում՝ երկրաւոր թագաւո-  
րաց նշանը կուրծքերնուն վրայ կը կրեն, բայց  
իմ նշանս ոտքերնուն վրայ նոյն նշանս, որ միւս  
մետասան քրիստոնեայ աղգերը և անոնց հո-  
վուապետները ’ի վեր քան զկայաերաց և թա-  
գաւորաց նշանս՝ գլուխնուն, ձակատնուն կամ  
սիրտերնուն վրայ կը կրեն ’ի սէր խաչեցելոյս վա-  
սըն ամենայն հաւատացելոց:

Փոխանակ իմ օրէնքս և պատուիրանքս ճշմա-  
րիա սրտով, ճշմարիտ հաւատրով և ճշմարիտ

սիրով կատարելու , որու համար միայն ես աշախարհը եկայ , անձառելի Հոգւոյն բղևման վրայ իրարու դէմ ձառելով յիմարաբար կը պարծենան և իրարու դէմ պատերազմաց , արիւնհեղութեանց պատճառ կ'ըլլո՞ :

Ալ կարծեն թէ իրենց առանկ անձարքանական վէճէրով , ներհակ եղայրօսիրութեան խտրոցներով , տիրասահման խորհուրդներս արատելով՝ Վատուած կը փառաւորուի . ոչ , ոչ , մարդահաճոյ անձարքանք . Վատուած սէր է , այլ սիրոյ և խաղաղութեան ներհակ՝ բանսարկուն կ'ուրախանայ , անոր գեհեանը կը բորբոքի .

Եւաղ գիտութեամբ զշշմարտութիւնը ստուղաց , որ քրիստոնեայ եկեղեցին զլ . Երրորդութիւնը այսինքն Հայր Վատուած , Որդին Վատուած , Հոգին Վատուած մի իշխանութիւն , մի տէրութիւն չդաւաներ ու չպաշտեր և իր անշարժելի հիմը Առւրբ Երրորդութեան և միոյ Վատուածութեան վրայ չդներ . ամեն առեմ ձեղ՝ այսպէս դաւանող եկեղեցւոյ ուրիշհակառակող մը չկրնար ըլլալ , բայց եթէ՝ աստուածութեանս չար նախանձաւոր բանսարկուն և նմանիք նորա :

Երբ առաքեալքս Հայրառաք ամենասուրբ Հոգւոյն Վատուածոյ շնորհօք լցան նէ սորվեցան նաև զանազան ազգաց լեզուները . ի՞նչ էր պատճառը . ոչ ապաքէն որ նոյն զանազան լեզուագիտութեամբ իմ մի և նոյն հոււատքս զանազան ազգաց մէջ դիւրութեամբ քարոզեն , 'ի մի և 'ի նոյն մկրտութիւնը մկրտեն , և 'ի մի և 'ի նոյն հաղորդութիւն հաղորդեն . Այս այս ձըշմարիտ հաւատքը չէ՞ մի , որ կոչեցաւ յիմ անուն Քրիստոնէական հաւատք , և բոլոր հաւատացելոց անունն ալ առանց տարբերութեան

կոչուեցաւ Քրիստոնեայ ազգք : Յէպէտ և լեզուաւ զանազան մնացին աղդերը , բայց հաւատով միացան , դաւանելով զիս Հօր Աստուծոյ Որդի յերկնից իջեալ , որ է վէֆն , որուն վրայ շինեցաւ տաղաւարն Երրորդութեան սուրբ եկեղեցին :

Ի՞նչպէս անդատապարտ պիտի մնան անանկ անձնասէր և հպարտ հովիւները , որոնք թողուցած են աստուածահաճոյքնելիքները , որ վասն փրկութեան հոգւոյ , վասն խաղաղութեան աշխարհի և վասն սիրով միացուցանելոյ 'ի մի եղբայրսիրութիւն , և ինկեր յիմարաբար անսահմանելի կակը կը սահմանեն , անոր բղխման անձառելիութիւնը և անորոշութիւն կը ձառեն ու որոշում կու տան , բաւական չհամարելովիմարոշածս 'ի լուր աշխարհի թէ՝ “ Հոգին ճշմարտութեան , որ 'ի Հօրէ ելանէ ” : “ Ես որ առաքեացն զիս նա առաքեաց և զոգին ” :

Կպա՛ թող վերջանան այս օրինակ գայթակղութիւնները , թող խափանի այս եկեղեցահալած վէճը , որ կ'ընեն միշտ անձառելի Աստուածութեանդ վրայ գատողութիւններ ընելով , զորմէ հրեշտակաց միտքը անդամչկրցաւ հասու լինել , ապա ովլ է մարդն , որ աննմանին և անքանակին նմանութիւն և քանակ տայ , թող յիշեն Պօղոսի խօսքը . “ Որ ինչ առ ոտս կայցէ՝ աշխատութեամբ գտանեմք , իսկ որ ինչ յերկինս է՝ ովլքնեսցէ ” : Եթէ կաւը կրնայ իմանալ բրսւտին կամքը , ապա կրնայ և արարածը Արարչին որպիսութիւնը իմանալ :

Ուրեմն ըլլայ որ մէկը այնպիսի գայթակղեցուցիչներուն ականջկախէ , որոնք իմաստուածութիւնս ուրիշ կերպ կը սահմանեն , որպէս թէ Արտարանաւ անձանօթ մնացածները՝ իրենք նոր

աւետարանիքը լուսով՝ պիտի ճշմարտեն, փոխանակ աստուածառունկ անդաստանէս որոմը մօքը ըելու՝ ցորեանը կը խլեն, փոխանակ՝ ի խնդիր ելանելոյ կորուստեալ ոչխարաց, որը են հեթանոսք կամ անհաւառք, կորստեան գուռներ կը բանան. Քրիստոսի փարախին մէջ եղող ոչխարաց: Չըլսայ թէ խեղճ համարիք անձառելի էակացո էութեանը վրայ աղեկ հասու ըլլալնուդ համար, այլ որբան որ Աւետարանս կը ծանօթացընէ՝ բաւական է որ անմտատանջ սրտիւ հաւատայք անոր և բերանով խոստովանիք միայն ամենիշխան Առբք Երրորդութիւն, յորում պարունակի մի Աստուածութիւն, մի իշխանութի, մի կամք և մի զօրութիւն, անսկիզբն և անվախան, անձառ և անսահման. քանզի հաւատալ Հօրը՝ Որդին և Հոգին 'ի նմա են, հաւատալ Որդւոյն՝ Հայր և Հոգին 'ի նմա են, հաւատալ Հոգւոյն՝ Հայր և Որդին 'ի նմա են: Ինչպէս որ կը հաւատան ամեն ճշմարտասէր քրիստոնեայ աղքաց եկեղեցիները, որոնց մէջ կը կատարուին ամեն փրկական խորհուրդներս, զորոնք ես առաքելոց և աշակերտացս աւանդեցի և անոնք ալ համաշաւիդ առտքելայաջորդ հայրապետաց և յաջորդաբար անոնց գահերէց եղբարց աւանդեցին:

ԺԱ. — Հարցմունք 'ի վերայ մարհուանը իշխանութեան  
Հոգովայ պապերուն:

Հ. Տէ՛ր իմ Յիսուս, դու, որ միակ ճշմարիտ Հովուապետդ ես, և կենաց և մահու տէր, քու հոգեոր հովուացդ այսինքն առաքելոցդ և աշխակերտացդ մարմնաւոր իշխանութի ալ տուիր,

որ իրենց ժողովրդեան վրայ սրով պարծենալով, սրով հնաղանդեցընելով, սրոյ բռնութեամբ իւրենց կամքը յառաջ տանելով, որ և իցէ յանցաւորը մահու գտտապարտելով և չարչարտնաց մատնելով իշխեն : Քանզի Հռովմայ պապը իր հոգեւոր իշխանութեան հետ մարմնաւոր չարաչար իշխանութիւն ալ բանեցընելով՝ իբրև բըռնաւոր թագաւոր զէնքով և զօրքով կը պարծենայ, զինուց և զրահից կը յուսայ, և իր կամացը անհնաղանդ գտնուողները թէ աշխարհական, և թէ եկեղեցական՝ մինչեւ 'ի մահ կը դատապարտէ, կը հալածէ բարբարոսաբար . . . իրաւունք ունիմ՝ ըսելով. ըստ որում տէր եմ կ'ըսէ, և իշխան ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, ևն :

Պ. Ախալեալ է գլխովին . քանզի ես իմ ճըշմարտաբարող առաքելոցս և աշակերտացս ըսի . “Իմ թագաւորութիւնս չէ յայսմ աշխարհի”, ինչպէս որ մարմնաւոր թագաւորութիւն կամ իշխանութիւն մը չվարեցի, ուստի և ոչ իմ առաքեալքս այդ բռնութեց ցանկութիւնը ունեցան : Անաւանդ որ աս ցանկութիւնը բնաւին ներհակ է իմ անոնց տւանդած նշանիս թէ . “Եյսու ծանիցեն զձեղ եթէ իմ աշակերտէք՝ եթէ սիրիցէք զմիմեանս” : Վաղա թէ որ ասոր ներհակ գտնուելով մէկզմէկ չսիրէք՝ իմ աշակերտքս չէք . չէ որ իրենք ալ գիտեն հաւատացելոցս սիրոյ այն նշանը տալս, չէ որ ես իսկ սէր յերկնից իջոյ, ես իսկ սէր եմ, իմ Աւետարանս Աւետարան սիրոյ է, ես սէր քարոզեցի իրենց, սիրով կրթեցի զիրենք, որ իրենք ալ ինչպէս սորվեցան՝ սորվեցուցին և յաջորդաբար կենսաբաշխ ողատուէրներս պահեցին և պաշտեցին . քանզի սիրով վարուեցան իրարու հետ, իրենց վարքը օրինակ թողուցին յաշխարհի :

իսաղաղութիւն սերմանեցին , յանցաւորին ներեցին , չարին հակառակ չմնացին , թշնամիին ներեցին , ատելեաց բարի ըրին , վրէժինդիք չեղան , հեղ և խոնարհ գտան , մարմնաւոր վազանցուկ և սնուաի իշխանութեանց ցանկացան , չարչարանաց համբերեցին , ինչ որ պատուիրեցի անոնց՝ սիրով և յօժարութեամբ կատարեցին . որով իմ անունս բռնոր տիեզերաց մէջ փառաւորեցին , ինչպէս որ կը փառաւորուի իմ ճշմարիտ և ջերմեռանդ հաւատացեալներէս մինչեւ ի կատարած աշխարհի :

Վիանս իրենց անօգուտ գիտութեանց , որոնց մով բարձր ՚ի գլուխ կը պարծենան ամենուն առջեւ . իմ մը աշխարհը պիտի գար , երբ իմացայ որ զիս բռնի թագաւոր պիտի ընեն , փախայ մէջերնէն ու մինակ լեռը ելայ , մինչեւ որ խորհուրդնին խափանուի . (Յով . Ղ . 14 : ) Վպապալը ի՞նչ իրաւամբ սրով և բրով կը խրոխաց առաքելայաջորդ ըլլալ կամ Պետրոսանալ , և աշխարհըս կը խաբէ ու գոյթակղութեան սահման մը է եղեր հաւատացելոց :

Վպա ի՞նչպէս ժողովուրդը չգայթակղի պիտի ասանկ աշխարհամոլ և արհամարհելի իշխանութեանը վրայ , որոնք իրենք զերենք Պետրոսի և Պօղոսի տեղ դնելսլ , կ'աստուածանան մահացու սրով , մեղսառիթ իշխանութեամբ և անխիղճ բռնակալութիք , ու Բելիարի ոլէս միտքէ վեր բարձրամտելով ազգաց գասակարգութեանց վըրայ . միթէ հնո՞ր է որ այս աստիճան գոյթակ-

վեցուցիչները անդատապարտ մնան յանաշառ ատենիս։ Եթէ իմ ոչխարացս անարատ հովիւ ըլլալ կ'ուզեն՝ խաջիւս թող պարծենան, զաշ խարհս թող ուրանան, քանզի ես իմ ոչխարացս հովիւներուն այսպէս ըսի։ “Դուք չեք յայսմ աշխարհէ, այլ ես զձեղ ընտրեցի յայտմ աշխարհէ։ Քանզի ոչ կարէք երկուց տէրանց ճառայիկ Աստուծոյ և մամնայի”։

Հ. “Դուն ի՞նչ իշխանութեամբ պարծեցար, սուրբ առաքեալդ Պօղոս գուն ալ ասանկ բըռնաւորութիւններ բանեցուցիր, համահաւատ քրիստոնեաները ատեցիր”։

Պ. Այս, ես ալ անգամ մը պապերէն ալգեւ բաղանց վեասակար էի քրիստոսահիմն եկեղեւ ցւոյն։ քանզի տուները կը մտնայի, մարդերը և կիները գուրս կը հանէի, կը բանտարկէի։ Արէից քահանայապետներէն հրամանագիր առի, որ բուլոր քրիստոնեաները հալածեմ, ’ի բանտ և ’ի մահ մատնեմ, և սուրբ Ատեփաննոսի սպանմանն ալ կամակից եղայ։ Բայց ես ասոնք իմ բարքարոսութեանս մէջ ըրի, երբ տակաւին լուսաւորուած չէի և Յիսուսի Քրիստոսի հաւատալու առաջ։ բայց Աստուած չուզեց որ իր ժողովաւրդը սորի տակ մնայ։ քանզի երբ այս անօրէն դիւտաւորութեամբ Դամասկոս կ'երթայի, Ճամբան յանկարծ սքանչելի տեսիլքով երկինքէն ահագին ձայնով սոսաց ինձի։ “Անուղղ, Անուղղ, զի՞ հալածես զիս, խիստ է քեզ ընդդէմ խթանի նի աքացել”։ Երբ զարհուրելով հարցուցի թէ Դուն ով ես, Տէր, պատասխանեց վերէն։ “Ես եմ Յիսուսը, զոր դուն կը հալածես”, ևն։ Ասով հասկըցուց ինձի թէ քրիստոնեաները հաւածօղը կամ կերպ կերպ կրիւք ատօղը՝ զՔրիստոս ինքն հալածօղ կ'ըլլայ։ ուստի ես ալ Քը

ըիստոսի այն կենսախրախոյց թափանցիկ ձայնը  
լսելով, մահացու կիրքերս փախեցի գարձայ ան-  
մահին . սկսայ գեղեցիկ կրիք քրիստոնեայները  
սիրել, և այնուհետեւ փոխանակ դանոնք 'ի մահ  
մատնելու կամ հալածելու՝ իմ կեանքս անոնց  
կենաց փոխանակաւ . և սիրով նուիրեցի ամենա-  
կերպ տանջանաց և մահուան անգամ համբերե-  
ցի . և ալ այնուհետեւ ուրիշ բանով պարծենալ  
չսորվեցայ 'ի Յիսուսէ Քրիստոսէ Տեառնէ մեր-  
մէ , բայց միայն անոր պարծանաց խաչով , ո-  
րուն համար ըստաւ . “Որ ոչ առցե զնաց իւր  
և գայ զինի իմ՝ չէ ինձ արժանի ” : Ա ասն որոյ  
և ես անոր խաչով պարծեցայ ըսելով . “Այլ  
ինձ քաւ լիցի պարծիլ բայց միայն 'ի խաչ Տեա-  
ռն մերոյ Յիսուսի Քրիստոսի ” :

Ուրեմն մի խաքուիք անանկ աշխարհասէր և  
սակաւահաւատ հօմիւներէն , քանզի Քրիստոս  
Տէրն մեր մարմնաւոր իշխանութիւն չուուաւ իր  
առաքելոց . Ըստ մարմնոյ թագաւորք կը տիրեն  
աղդաց , ըստաւ . անոր համար՝ պատուիրեց որ  
մարմնաւոր իշխանաց համար աղօթք ընենք :

Մենք առաքեալքս կը զդուշանայինք ամեն  
կերպիւ որ հաւատացելոց ըստ մարմնոյ ծանրու-  
թիւն մը չուանիք , այլ ինչպէս որ յայտնի է Թե-  
սազոնիկեցւոց առուղթիս մէջ , բ . 5 : “Օի ոչ  
երբէք բանիւք ողոքանաց եղաք տո ձեզ , որպէս  
և դուք իսկ գիտէք , և ոչ 'ի պատճառս ագաւ-  
հութեան , որպէս և Աստուած վիայէ , և ոչ  
խնդրեցաք զփառս 'ի մարդկանէ , և ոչ 'ի ձէնջ  
և ոչ յայլոց ” : Ուրեմն ականջ մի կախէք այնա-  
պիսի երկնի և երկրի սուտ իշխանութեամբ  
պարծենցող և զարքայութիւնը իւրացընօդ պատ-  
րիչ վարդապետութիւներուն : “Օի ոչ թէ բա-

Նիւք է արքայութիւնն Աստուծոյ, այլ զօրութեամբ” . (Արքի . գ . 20 : )

ՃԲ . — Հարցմունք ուշղակառ չըխարժեից  
Գայինակը միւն պալուն վրայ :

Հ . Տէր իմ Յիսուս, Եթէ հաւատացեալներէն և մանաւանդ հոգեոր հովիւներէն մէկը ճշմարիտ հաւատացեալի մը իր հաւատոյ վրայօք գայթակղութեան պատճառ ըլլայ և թերահաւատութեանց թելադիր ըլլալով, քու հաւատոյդ ճշմարատութեան շաւղեն հանէ զան, և անալ յու սահատեալ այլսկրօն շար աղանդաւորաց հետեւի և մոլորի ճշմարատութեան ձանապարհէ գործանանկ գայթակղեցուցաց ի՞նչ իրաւունք կուտաս, անանկները պատճոց արժանի՞ են թէ ոչ, արդարութդ դատապարտելի՞ են թէ ոչ: Քանզի Հոսովմայ պապը, ինչպէս ըսի, ամեն բանի մէջ ինքզինքը Քանի տեառնդ մերոյ և Պետրոս առաքելայդ փոխանորդ անուանելով՝ Տէլլայ պէս տնաւնալ ուղելով բոլոր հաւատացելոց վրայ՝ շատ տեսակ տեսակ գայթակղութիւներ կու տայ միամիտ ժաղովորդոցդ: Քանզի՝ ինչպէս ըսի, Ոուրբ Արքորդութիւնը դաւանողաց, մի և նոյն մկրուտութիւնը մկրոսղաց, մի և նոյն հաղորդութիւը ընդունողաց մէջ՝ անհնարին թշնամնութիւն և եղացրատեցութի սերմանելով, անհաւատի պէս մէկզմէկ տեել տալու նիւթեր հնարելով, երկպառակութիւններ կը հանէ:

Իր ժաղովուրդը այն աստիճան սխերիմ թշնամի եղած են միւս ճշմարիտ քրիստոնեայ աղդաց հետ, մինչեւ յանուն Անածնի Որդւոյդ Հօր Առառնեցոյ կենդանւոյ հաստատեալ եկեղեցիները

իբրև կռատուն կը համարին, և անսնց եկեղեցին թիւները երթալը, հոն աղօթք ընելը և սրբազնն խորհրդոց հաղորդիլը՝ մահացու մեղք կը սեպեն։  
 Աթէ հռովմէադաւան մը եօթը մահացու մեղք քերը գործած ըլլայ ու երթայ խոստովանի իր խոստովանահօրը, թողութիւն կը դտնայ՝ մարդենք, սխալական ենք, ըսելով. բայց երբ մէկը թէ գիտութեամբ և թէ անգիտութեամբ և կամ թէ պատճառէ մը ստիպեալ երթայ Հայոց կամ Յունաց կամ ուրիշ ազգաց եկեղեցիները աղօթելու, և ապա որպէս թէ իրեն խիղչ ըլլալով, երթայ իւր խոստովանահօրը իրրե մեղք խոստովանի՝ զանիկա եօթը մահացու մեղքերէն ծանր համարելով՝ սաստիկ դատապարտութեան կ' արժանանայ և խիստ ապաշխարանոց տակը կ' իյնայ, ինչպէս փորձիւ ալ տեսանք ԶԵ տարի յառաջ Պօլիս՝ Պէյօղլուի հռովմէադաւանաց եկեղեցիին մէկին մէջ պատահեցաւ. քանդի միամիտ և ջերմեռանդ Պահէճիկցի լուսաւորչեան Հայազգիին մէկը՝ հռովմէադաւանաց ան ատիշան մեղի հետ ունեցած թշնամութեանց չկարծելով, ստոյգ ըլլալուն փորձը ուզեց որ իր վրայ ընէ. ուստի Յերիացի հռովմէադաւան եմ ըսելով՝ կ'երթայ Պէյօղլու Անդօն ըսուած եկեղեցիին վերնատունը վերոյիշեալ մեղքը իր վրայ ցուցընելով կը խոստովանի, կը տեսնայ որ՝ արդարե լսածին պէս է եղեր. խոստովանահայրը եօթը մահացու մեղացը թողութիւն կու տայ, և Հայոց եկեղեցիին մէջ աղօթք ընելուն համար երկար ատեն մտածելէն ետև՝ ապաշխարանք կը դնէ անոր վրայ որ՝ ալ այնուհետեւ իր կենաց մէջ ուխտէ որ մէկ մ' ալ Հայոց կամ Յունաց եկեղեցիներուն մէջ ոտք չկոխէ և աղօթք ընէ կարծեցեալ Յարիացին ալ արդարութեան ցաս

մամբ . . . ծաղը ընելով գջշմարտատեաց խստու  
վանտհայրը՝ կ' երթոյ եղածը իր համազգեաց կը  
պատմէ , ևն :

Վհա այսպէս փոխանակ Յիսուսաաիպ և Պետու  
րոսանման եղբայրսիրութիւն ընելու և ցուցը  
նելու՝ եղբայրատեցութիւն կը սերմանեն , փո-  
խանակ խօնարհութեան՝ ամբարտաւանութիւն ,  
փոխանակ աշխարհուրաց մաքուր վարուց՝ ամենա-  
զեղիս հետութիւն , փոխանակ կամաւոր ազբա-  
տութեան՝ մոլեալ արծաթսիրութիւն , փոխա-  
նակ ներողամառութեան՝ լի ցասմամբ վրէժիսըն-  
դրութիւն կը ցուցընեն հաւատակից բարեկա-  
մաց , թէ՛ բանիւ , թէ՛ գիրքերով և թէ՛ նենդամիտ  
և խարդախ կննդակներով , զորոնք կը տարածեն  
ուղղափառ քրիստոնէից մէջ , ինչպէս և այս դա-  
րոյս այսինքն՝ 1848ին և 1854ին՝ ութերորդ և ին-  
ներորդ Պիոս պապերուն Յոհով ժողովրդոց խըր-  
կած կոնդակները և նամակները երեւելի են . քան-  
դի անոնց մէջ կը տեսնուին որոմնացան սերմանց  
մշակութիւններ , արտաքուստ գեղեցկադէմ և  
՚ի ներքուստ գերեզմանաց բռեալ բանից խոր-  
խորառններ , տերեւալից թղենիին նման անպտուղ  
պերճութիւններ , Յիսուսաբնակ և առաքելա-  
կիր նաւուց , եկեղեցեացդ գէմ յարուցեալալե-  
կոծութեան հողմեր , աղաւնեցոյց դիմակօք և  
ագռաւազգեստ թեատրածութիւններ , ան-  
գործ և ապարդիւն քանիքարաթագոյց իրաւա-  
խնդրութիւններ , փարիսեցիութեան խմօրմունք-  
ներ , ժողովրդոց ուսոց վրայ բեռցընելու բե-  
ռեր , ընդհանուր քրիստոնէից մէջբարձրագահ  
և նախողըն հանդիսանալու Յիսուսընդդէմ  
ամբարտաւանութեան կիրքեր , զուղաս կլանող  
և զմժղուկսքամող խստակրօնութիւններ , զտունս  
այրեաց կողոպտելու պատճառտէ աղօթից երկա-

բութիւններ . . .

Ի վերայ բանիցս Ճշմարտութեան եթէ մենք  
Հաե՞ք՝ քարինք կ'աղաղակեն, ինչպէս յայտնի է  
ամեն ուղղափառ համահաւատ քրիստոնեայ աղ-  
գաց :

Ահա աս կոնդակաց մէջ՝ ուղղութեն է կամաւ  
և գիտութեամբ կուրացեալ հայրենուրաց Վե-  
նետիկցի Յավսէ փավաճառ միաբանութեան դու-  
քութիւն տալով, լուսաւորչեան ուղղափառ աղ-  
պին վրայ անոնց խօստովանութեան խկութիւնը  
կը դնէ այսողէս . “ Հայ հերձուածողաց մոլորու-  
թիւնները գատաղարտելով՝ դաւաներ են թէ  
Յիսուսի Քրիստոսի Ճշմարիտ եկեղեցիէն դուրս  
են, և խոստովաներ են ալ, որ պիտի չդադարին  
թէ աղօթքով, թէ քարոզութիններով, թէ գործ-  
քով, թէ գրուածներով և թէ խօսքով ջանալ,  
որ այն մոլորեալները այսինքն զայսցագելք՝ նոյն  
Յիսուսի մի և միակ փարախը դարձնեն . որուն  
մի միայն հովուապետ գլուխ և կենդրոն է Հը-  
ռովմայ քահանայապետը, Պետրոսի առաքելոց  
իշխանին յաջորդը ” :

Եւ Պիոս իններորդ պապին առ արևելեայս  
դրած կոնդակին մէջն ալ, որ լեցուն է նենդա-  
ւոր քարածքութեամբ ընդգէմ լուսաւորչական  
Ճշմարտադաւան եկեղեցւոյն, ուր և կ'ըսէ .  
“ Արդ՝ անմարթ է մեզ չխօսիլ զբանո սիրոյ և  
խաղաղութեան և առ այն արևելեան հաւատա-  
ցեալս Քրիստոսի, որք ՚ի հաղորդութենէ այսք  
սրբայ աթուայն Պետրոսի հեռացեալ են . քանզի  
սէրն Քրիստոսի ստիպէ զմեղ ըստ խրատու և  
օրինակի նորա ՚ի ինդիր ելանել օդեացն մոլո-  
քելոց ընդ անկօխ և ընդ խիստ ճանապարհ, և  
փութալ հասանել յօդնութիւն տկարութեան  
նոցա, առ ՚ի ժողովել ՚ի փարախ տէրունեան

Հօտին, որք դեռ արտաքոյ այսը միոյ գաւթին Քրիստոսի մոլորեալ թափառին, յորմէ հարք նոցա դժբաղդութեամբ բաժանեալ արտաքօ ելին”:

Նոյն կոնդակին մէջ կ'ըսէ նաև . “Ո՞լորեալ ոչսարքդ, եկէք Քրիստոսի հօտը մաէք, ուսկից դժբաղդաբար հեռացեալ էք, հնազանդեցէք ինձի, Ճանաչեցէք իմ գերագոյն անսխալ իշխանութիւնս, ապա թէ ոչ՝ արքայութեան դռները չեմ բանար ձեզ, որուն բանալիքը իմ ձեռքը տրուած է . . . ” :

Վհա ասանկ ճշմարտանեաց և եկեղեցահալած քարոզութիւններէն վիրաւորեալ քու անարատ հարսդ սուրբ եկեղեցին Հայոց, Տէր իմ Յիշ սուս, առ խանդակաթ վեսայդ ամենազօր կը գոչ ինդրելով. “Վա զգէն և զասպար քո և արի օդնել ինձ, հան զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց, արգել զնոսսա և տամ դու ցհարսդ ան համեմատ՝ թէ փրկութիւն քո ես եմ”:

Պ. Յայտնի սխալեալ են. քանզի ոնոնց այնպիսի ինքնահաճոյ հովաւութիւնները ներհակ են բոլորովին իմ սիրայորդոր և համատարած սաստուիրանացս. վայ անոնց որք գիտեն և կը կամակորին իրենց ընթացից մէջ, չե՞ն վախնար թէ մէկ հաւատացեալս գայթակղեցընողին ինչ ըսած եմ. “Որ ոք գայթակղեցուցանէ զմի ’ի փոքրուկանցս յայսցանէ, որ հաւատան յիս՝ լաւ էր նըմա առաւել եթէ արկեալ էր ընդ պարանոցաւ նորա երկան իշոյ և ընկեցեալ ’ի ծով” . (Սարչ. թ. 41.)

Վնոնք որ քրիստոսական հօտիս ճշմարիտ հովուութեան իշխանութիւն կը ստանան, բայց ճշմարիտ սիրոյ և միտքանութեան շաւիղը չեն առաջնորդեր, և փառասիրութեան պատճառաւ

գայթակղութիւն կուտան ու ցիրուցան կընեն  
ընդհանրական եկեղեցիս՝ արդարե մեծ և ար-  
դարացի դատավարտութեան պիտի արժանա-  
նան, քանզի ասանկներուն համսր ըսի . “Ուում  
շատ տոււաւ՝ շատ խնդրեսցի ՚ի նմանէ, և որում  
սակաւ՝ սակաւ” : Ուովչետե ժողովրդեան հո-  
վիւները հաւատոյ աւանդը պահող հարտղատ  
գանձապետներն են, ժողովրդեան հոգեորապէս  
բարեկրթութեան աղն են, զանոնք ՚ի ճշմարիտ  
հաւատս ու զղելու և անմօլար պահելու լոյսն  
են, անոնց հաւատոյ մեծութեան և բարձրու-  
թեան քաղցրն են, անոնցմով պիտի համեմի  
հոգեոր կերակուրը, և ախորժելի ըլլայ ժողովր-  
դեան քմաց այսինքն կամացը :

Վնտարակցո անանկ մոլար, խարդախս և նորա-  
ստեղծ իշխանութեան քարողութեամբ գայթակ-  
ղեալը, ու գայթակղութենէ թերահաւատեալը,  
ու թերահաւատութենէ նորանոր ածընդդէմ  
աղանդից հետեւողները՝ թէպէտ իրենց մօլորու-  
թեանց մէջ պիտի մեռնին, բայց անոնց արիւ-  
նը անոնց մօլորեցուցչաց հովիւներէն պիտի խըն-  
դրուի : ՚Իանզի գիտեմ՝ անանկ սուտ իշխանու-  
թեամբ պարծենցող հովիւներուն ներքին գիւ-  
տաւորութիւնը իմ անունս մեծցընել չէ, այլ  
իրենց նորահնար սուտ առաքելապետութեան  
գայթակղութեան անունը ու փառքերնին մեծա-  
ցընել է : Ըայց թող գիտնան որ՝ ըստ այնմ  
պիտի վարձատրուին :

Այսպիսի խաբեթայ և գայթակղեցընօղ հովիւ-  
ները, որոնք իրենք զիրենք արքայութեան որդի  
և ժառանգ ընելով՝ կը սրբանան նմանեցուցի այն  
ժամանակի կեղծաւոր դպրաց և փարիսեցւոց,  
քանզի առանց արդեանց պետրոսանալով՝ առեւ-  
լութիւն և հաւատոյ խտրութիւն կը սերմանեն

Համագաւան քրիստոնէից մէջ, ոխերիմ թշնաւ  
մութիւն կը յարուցանեն իրարու դէմ, հեւ  
թանոսաբար և բարբարոսաբար իրենց ժողովուր-  
դը իրարու վրայ պատերազմի հանելու պատճառ  
կ'ըլլան, ինչպէս յայտնի է ներկայ դարոյս մէջ.  
վասն որոյ այնպիսեաց վրայ ալ դպրաց և փա-  
րիսեցւոց պէս՝ վայ պիտի կարդացուի, ևն:

Հ. Դուն ինչ կ'ըսես, սուրբ առաքեալդ Պօ-  
զոս, խաղաղութեան մէջ խեռութեան և եղ-  
բայրատեցութեան որոմներ ցանողաց և սուր  
վարդապետողաց գէմանաչառութեամբ վարուե-  
ցար, եթէ՝ ակնառութեամբ :

Պ. ԱՌ, քաւ լիցի, ի՞նչպէս աչառութիւն կըր-  
նամ ընել. ովէ իմ տէրս, վարդապետս և Վա-  
տուածս, ոչ ապաքէն Յիսուս Քրիստոս, որուն  
ամենազօր զօրութեամբ և աղդաբութեամբ  
ոչ միայն զերկրաւորները դատելու համարձա-  
կութիւն ունեցանք, այլնաև զերկնաւորս, ինչ  
պէս յայտնի է աս խօսքէս. “ԱՌ գիտէք,  
սուրբք զաշարհս դատեն և եթէ ձեօք դատի  
աշխարհ, ապա ոչ եք արժանի անարդ ատենից,  
ոչ գիտէք եթէ զհրեշտակս դատեմք թող թէ  
զերկրաւորս”:

Այ գայթակղութեան վրայօք զգուշացուցեր  
եմ Հռովմայեցւոց գրած ֆուղթիս մէջը, ժդ. .  
“Եւ յսուհետեւ մի՛ զմիմեանս դատեսցուք, այլ  
առաւել զայս դէք ’ի մտի չդնել գայթակղու-  
թիւն եղըօրն”:

Գրած եմ նաև նոյն իսկ Հռովմայեցւոց, որ  
եղայրսիրութեամբ միայն պարծենան, ըսելով.  
“Եւ մի՛ ումերք պարտապան դտանիցիք բաց ’ի  
զմիմեանս սիրելոյ, զի որ սիրէ զընկերն՝ զօրէնս  
կատարէ, և ամենայն պատուիրան յայն բանն  
կատարին, ’ի սիրեսցէս զընկերն քո իբրև զանձն

քո , սէր ընկերին չոր ոչ առնէ , լրումն օրինաց  
սէր է ” . ( Հայ. ժգ . 8 : )

Հ . Հանդիսացիր և դու , սիրոյ աշակերտ՝  
Յովհաննէս Աւետարանիչ . այս Ճշմարտութեան  
դատարանիո մէջ՝ դրւն ալ քու սիրոյ բանից  
սահմաննէն այս գահակալութեան և իշխանապետ  
տութեան իրաւանց և անիրաւութեանց վրայօք  
Ճշմարտաքանէ , աս անձնամէր մեծամրտութիւնները ,  
գահասիրութիւնները և փառասէր կրից  
իւրասիրութիւնները Վրտուծոյ Հաճելի՞ են թէ  
ոչ . հաւատքը անմանկ բռնակալութեանց տակն  
է , եթէ տղատ :

Պ . Ոչ ադաքէն ըսած եմ ես ալ . “ Եթէ ոք  
սիրէ զաշխարհ , ոչ է ՚ի նմա սէր Զօր , զի ա-  
մենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է  
մարմնոյ և ցտնկութիւն է աշաց և ամբարտա-  
ւանութիւն աստի կենացս ; որ չէ առ ՚ի Զօրէ ,  
այլ յաշխարհէ աստի է : Խսկ որ առնէ զկամս  
Վրտուծոյ մնայ ՚ի յաւիտեան ” : ( Յով . բ . 16 . )  
Վպա թէ ոչ հաւատքը ինչպէս կը բռնուի կամ  
իշխանութեան տոկ կ՚ինայ . չէ որ հաւատքը ը-  
սելը Յիսուսի Քրիստոսի Ճշմարիտ Վրտուծոյ  
հաւատալ ըսել է , և անոր պաշտելի կամքը՝  
ինչպէս որ սահմաներ է՝ նոյն տահմաննէն դուրս  
չելլալ ըսել է . միթէ աշխարհածագ արեգակին  
լցաը կը կապուի , որ ամենուն կրօյ ալ չնագի ,  
կամ մէկը կրնայ անոր բոլոր լուսաւորութիւնը  
մէկ տունի մէջ զետեղել կամ իւրացընել , միթէ  
թագաւորութիւն կըսուի երբ ընդ իշխանու-  
թեամբ կամ ընդ հրամանաւ ըլլայ : Չէ որ այն  
պիսի բռնի աշխարհասիրաց և փառասիրաց ու-  
նայն յուսոյն համար ըսած եմ . “ Օ խարդ կարեք  
դուք հաւատալ . զի փառս ՚ի միմեանց առնուք  
և զփառս առ ՚ի միոյն Վրտուծոյ ոչ խնդրէք ” ?

Վանզի մեր հաւատոյ տէրը , մեր սիրայ սահմանը Յիսուս Քրիստոս՝ Աեր , խաղաղութիւն , խոնարհութիւն և եղայրսիրութիւն ըսէք , ըսաւ , իրարու հետ . և ոչ թէ՝ անկաղոպտելի հաւատը օրպէս թէ իրարմէ կրղոպաելով՝ առանց գործոց պարծենալ և նիւթ ատելութեան և խոռվաւթեան սերմանել համահուատ ազգաց մէջ :

Այս ունայնութեան սահմանիս վրայ եղած պատրօղ իշխանութեանց և գահասիրութեանց մօլելոց վրայ բան մի հարցըներ , ինչու որ անոնք թերահաւատ կրիւք և խիստ նախապաշտամամբ կուրացեալ են , ինչու որ աշխարհիս ամեն բանը ընդունայն և անցաւոր է , ինչու որ անոնք ՚իմարմինի են և վաղանցուկ կենոց վիճակեալ են :  
 Այս Յիսուսի Քրիստոսի զմայելի սիրոյ սահմանները հարցուր ինձի , և անոր աշխարհը մէջ ձգած կենդանութեան սիրոյ հրոյն անշէջ բորբոքումները հարցուր , որ միշտ կը վառէ ու չայրեր . անոր սիրոյ թափանցութեան տեսարանները հարցուր , որոնց մէջ տարեւք իրենց բնածին բռնութինին փոխեցին . քանզի անսաստ ծովերը և անկայուն գետերը՝ զահի հարեալ հաւատոյ ծառայելով պաշտօն մատուցին . հողմերուն տիեզերալուր ահեղ հնազմունքը հաւատոյ գօրութեան մեղմիկ շունչեն կարկեալ՝ ունին հնաղանդութեան մատուցին . տիեզերաղարտ լափօն հուր՝ իւր անընկճելի ներգործութիւնն կորսնցուց , և առաջի հաւատոյ զօրութեանն պէնընկեց եկաց , և հիմն յաւիտենականութեան հողն անզգան՝ զգաց հաւատոյ թագաւորելն և իւր զմակեալ սիրուր բացաւ , ձայն սանդարամետականաց հասոց և մերելոց վերստին կենդանութեան աւետիս տուաւ :

Այս հաւատոյ Ամանողին պաշտելի կամքը  
կատարող զօրավարաց և զօրաց յաղթանակութեան  
պսակը հարցուր, որ անթառամելի և անապական  
պիտի մնայ: Անոր անյագելի սիրոյ սեղանը հար-  
ցուր, որուն վրայ բազմելու արժանացողը՝ ալ  
չքաղցենար: անոր սիրոյ զմայլելի բաժակը հար-  
ցուր, յորմէ արբողը՝ յաւիտեանս դուարձու-  
թենէ չոթափիր: Անոր թագաւորութեան սահ-  
մանը հարցուր, որուն մէջի յետին ստրուկը՝  
թագաւորական անմահ փառօք կը վարէ իւր կեան-  
քը: ըստ որում: “ Օք ակն ոչետես և ունին ոչ  
լուաւ և ’ի սիրոյ մարդոյ ոչ անկաւ, զոր պատ-  
րաստեաց Աստուած սիրելեաց իւրոց ”:

Ի՞նչ օգուտ՝ որ մարդ աշխարհային անցաւոր  
դահասիրութեան ցանկայ, անբաւ հարստու-  
թեանց տէր ըլլայ ու իր անձը տուժէ: իւրաքան-  
չիւր մահկանացու իւր սահմանաւոր կեանքը կըն-  
քելով, ադ ապականացու աշխարհէդ պիտի մեկ-  
նի միւս յաւիտենական կենաց կամ մահուան  
աշխարհքը անցնելու համար: բայց յաւիտենա-  
կան կենաց արժանանալու համար պէտք է Յիսու-  
սի Քրիստոսի սիրոյ պատուիրանիքները պահել-  
քանզի ըստու:

“ Որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսսա,  
նա է որ սիրէ զիս, և որ սիրէն զիս՝ սիրեսցի ’ի  
Հօրէ իմմէ, և ես սիրեցից զնա և երեեցուցից  
նմա զիս ”:

“ Այսու ծանիցեն զձեղ եթէ իմ աշակերտք  
էք եթէ սիրիցէք զմիմեանս ”:

“ Աիրեա զՏէր Աստուած քո յամենայն սրտէ  
քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամե-  
նայն մասց քոց: այս է մեծն և առաջին պատուի-  
րան, և երկրորդն՝ նման սմին: Աիրեսցես զընկեր  
քո իբրև զանձն քո: յայս երկաւս պատուիրանս

ամենայն օրէնք և պատուիրանք և մարդարէք  
կախեալ կան” :

“Եթէ զամենայն զօրութիւնս հրաշից ունիցիս  
մինչև լերանց ասել . ելև անկի՞ր ’ի ծով և լինի-  
ցի , և եթէ սէր ոչ ունիցիս՝ ոչինչ ես” :

Ապա ես ալ Հօր Աստուծոյ սիրելի Որդւոյն  
սիրոյ բաժակէն արբեալ ըլլալով՝ գոչեցի ’ի սի-  
րոյ ծնեալ հաւատացելոցո . “Որ սիրէ զեղբայր  
իւր՝ ’ի լոյս բնակէ և գայթակղութիւն ’ի նմա չիք,  
իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ’ի խաւարի է տա-  
կաւին և ընդ խաւար շրջի , և ոչ գիտէ յո՛ եր-  
թայ , զի խաւարն կուրացոյց զաշս նորա : Ո՞՛  
սիրէք զաշխարհ և մի՛ որ ինչ ’ի նմա է” :

“Այսուիկ յայտնի են ’ի միմեանց որդիք Աս-  
տուծոյ և որդիք սաստանայի . ամենայն որ ոչ առ-  
նէ զարդարութիւն՝ չէ նա յաստուծոյ , և որ ոչ  
սիրէ զեղբայր իւր . զի այս է պատուիրանն , զոր  
լուարութն ’ի սկզբանէ , զի սիրեսցուք զմիմեանս” :

“Եւ մի՛ ինչ զարմանայք , եղբարք , եթէ աշ-  
խարհ զձեզ ատեայ , մեք գիտեմք , զի փախեցաք  
’ի մահուանէ ’ի կեանս , քանզի սիրեմք զեղբարս ,  
իսկ որ ոչն սիրէն անդէն ’ի մահուն կայ : Ամենայն  
որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է , և գիւ-  
տէք ամենայն մարդասպան ոչ ունի զի կեանս յա-  
ւիտենականս յանձին հաստատեալ ” :

“Որդեակք , մի՛ բանիւք և լեզուօք սիրեսցուք ,  
այլ արդեամք և ճշմարտութեամք , և այսուիկ  
լիցնւք ծանուցեալք եթէ ’ի ճշմարտութենէ ան-  
տի իցեմք , և առաջի նորա արասցուք հանդէս  
որտից մերոց , և այս է պատուիրան նորա , զի  
հաւատացուք յանուն նորա Յիսուսի Քրիստոսի  
և սիրեսցուք զմիմեանս , որպէս և ետ մեզ պա-  
տուէք : Եւ որ պահէ զպատուիրանս նորա՝ ’ի նմա  
է հաստատեալ և նա ’ի սմա : և յայսմանէ գիշ”

տեմբ եթէ բնակէ 'ի մեզ 'ի հոգւոյ անսի , զոր  
ետ մեղ":

"Աիրելիք , սիրեսցուք զմիմեանս , զի սէր  
յլստուծոյ է , զի ամենայն որ սիրէ՝ յլստուծոյ  
է ծնեալ և ձանաչէ զլստուած , զի լստուած  
սէր է : Օ՛լստուած ուրսուք երբէք չիք տեսեալ .  
եթէ սիրեսցուք զմիմեանս՝ յլստուած 'ի մեզ  
բնակէ և սէր նորա 'ի մեզ կատարեալ է : Ե՞լ-  
սուիկ գիտեմք եթէ մեք 'ի նա եմք բնակեալ և  
նա 'ի մեզ , զի 'ի շոգւոյն իւրմէ ետ մեղ":

Իսկ անոնք որ աս սիրոյ պատռւիրաններս գիւ-  
տեն ու դարձեալ կը կամակորին եղայրատե-  
ցութեամբ նախատանաց , ատելութեանց , և  
անտեզի զրպարտութեանց քարեք արձակել՝ ա-  
նանիներուն դատը արդար դատաւորութեան  
կամացը յանձնելով՝ պէտք է Յիսուսաւանդ  
սիրով և հաւատով համբերել և տանիլ , որովք  
Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ յաւիտենա-  
կան երանութեան և վարձուց արժանի ըլլաք .  
քանզի նա ինըն Տէր իմ Յիսուս ձեզի պէտնե-  
րուն համար ըստաւ . "Երանի է ձեզ , յորժամ  
նախատիցեն և ասիցեն բան չար սուա զձէնջ  
ցնծացէք և ուրախ լիրուք , զի վարձք ձեր բար-  
զում են յերկինս",

### ՎԵՐ



## ՑԱՆԿ

ՑԱՆԿ	5
ԳԼ. Ա. Հարցմունք 'ի վերայ քրիստոնէական հաւատոյ ճշմարտութեան	5
ԳԼ. Բ. Հարցմունք 'ի վերայ քրիստոնական օրինապա- հութեան	24
ԳԼ. Դ. Հարցմունք 'ի վերայ գլխաւորուն զետրոսի	29
ԳԼ. Դ. Հարցմունք 'ի վերայ արածեա՛ զովսարսին	51
ԳԼ. Ե. Հարցմունք 'ի վերայ վեմին հաւատոյ	57
ԳԼ. Զ. Հարցմունք 'ի վերայ փականաց արքայութեան	68
ԳԼ. Է. Հարցմունք 'ի վերայ երկուց փրկարար խորհրդոց	75
ԳԼ. Ը. Հարցմունք 'ի վերայ անսխալութեան սղառիցն ըստ իւրեանց կարծեաց	70
ԳԼ. Թ. Հարցմունք Հռովմայ պատերուն արքայութեան մշչն տեղ ծախելուն վրայ	81
ԳԼ. Ժ. Հարցմունք 'ի վերայ բղնաման Հոգւոյն Սրբոյ	87
ԳԼ. ԺԱ. Հարցմունք 'ի վերայ մարմնաւոր իշխանութեան Հռովմայ սղառերուն	94
ԳԼ. ԺԲ. Հարցմունք ուղղափառ քրիստոնէից գայթակ- ղութիւն տալսւն վրայ	99







4758

2013

4601